

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Ի Բ

№ 4 1891

Հ Պ Ր Ե Լ

1891 № 4

Ե Ր Ե Ա Ր Դ Ք Տ Ա Ր Ե

	կրիս
1 ՎՈՐԳԱՆԵԱՆՅ, ԴՐԻԳՈՐ . . . . .	421 Արդիւնազործոթ. Անգրկովկ.,
2 ՄԱՆՈՒԵԼԵԱՆՅ, ԼԵՒՈՒ . . . . .	434 *** (բանաստեղծոթիւն),
3 ՓԻՐՈՒՄԵԱՆՅ, ՏԻԳՐԱՆ . . . . .	435 Հաւճաւածէի վէսպի առիթով,
4 ՃՈՒԽԱՒԱԶԵ, ԵԼ.ԻՒ. . . . .	439 Կացիա-Ազամիանի:
5 ՊԼԵՇՎԵԼԵ-Ից Կ. ԿՐԱՍԻՆԵԿՈՆ .	470 Թուչիկ (բանաստեղծ.),
6 ՆԱՍՈԼԵԱՆ, Ա. . . . . . . . . .	472 Ծանր քարը,
7 ՄԱՐԵՒԵԱՆ, Մ. . . . . . . . . .	480 Հեղինէ, վէտ (չարունակ.),
8 ՏՈՒԷՆ, ՄԱՐԻ . . . . . . . . . .	498 Նոր քրեական մի բառ:
9 ԹՈՒՄՈՆԵԱՆՅ, ՅՈՎՀՈՆՆԵՍ .	505 Գումանի երգ (բանաստ.),
10 Յ. . . . . . . . . . . . . . . . . . . .	506 Ռեթեցան. մոգական լազակուով.
11 ԱՂԱՋԵԱՆՅ Դ.ՋԱՋՐՈՒ . . . . .	514 Երկրարրառաները մեր լեզուում:
12 Ք. . . . . . . . . . . . . . . . . . . .	517 Ելիզէ Ռէկլիսի աշխարհազրութիւնը.
13 ԸԱԼ. . . . . . . . . . . . . . . . . . .	522 Տուստովի Ուրինդուը,
14 Յ. . . . . . . . . . . . . . . . . . . .	525 Տոլստովի Կոլումբը,
15 ԼՈՒՄԻՆԻ . . . . . . . . . . . . . .	528 Ամուսակ քրոնիկ:
16 Զ. . . . . . . . . . . . . . . . . . . .	535 Քաղաքական Տեսութիւն:
17 ԻՄՅ. . . . . . . . . . . . . . . . . . .	546 Խմբազրութեան կողմից:


ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԹԻՖԼԻՍ

Մ. Դ. ՊՈՏԻԵՆԵԱՅԻ ՑՊԱՐԵԱՆ

Տիպոգրաֆія М. Д. Ротеніанца, на Гол. просп. соб. д. № 41.

1891



# ՄՈՒՓՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱԳԻՐ

№ 4 1891

ԱՊՐԻԼ

1891 № 4

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻԿԵԱՆՑԻ  
1891

Дозволено цензурою, Тифлісь, 5 Апрѣля 1891 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

# ԱՐԴԻԿԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

ԴՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ

## I

Յայտնի է, որ Անդրկովկասը Ռուսիայի այն երկիրներից մինն է, որ իւր տնտեսական գործունէութիւնով հողագործական բնաւորութիւն է կրում: Թէև այս տնտեսական շրջանը, որի մէջ գտնւում է երկիրը, բնարոշ է, բայց և այնպէս չի կարելի ուրանալ, որ Անդրկովկասը ձեռք բերելով երկաթուղի՝ մտել է տնտեսական զարգացման այն աստիճանը, ուր կապիտալ և աշխատանք արդէն սկսել են գործադրութիւն գտնել համեմատ այն սկզբունքների, որ գործադրական (տեխնիքական) գիտութիւնները պահանջում են իրեն անմիջական պայմաններ ամեն մի ժողովուրդի տնտեսական բարօրութեան և յառաջադիմութեան:

Այն օրից յետոց երբ Մեւ և Կասպեան ծովերի եզրները երկաթուղու գծով կապւեցան, այն օրից, կարելի է պնդել, սկսւում է Անդրկովկասում արհեստագիտական և գործարանական գիտութիւնների գործադրութիւնը: Մեր երկրի վաճառականութիւնը, որ իւր հին սովորութիւններով անշարժ զրութեան մէջ էր գտնւում, պէտք է կամաց-ակամայ ենթարկւէր անտեսական գործառնութիւնների այս նոր ուղղութեանը: Թէև մեր վաճառականութիւնը անգործ էր և ապա պէտք է մեծ դժւարութիւններ կրէր՝ տարիների ընթացքում իւր գումարւած կապիտալները նոր ձեռնարկութիւնների մէջ գործադրելու, սակայն նա ստիւլած գտնւեցաւ հաշտելու ժամանակակից տնտեսական նոր պահանջների հետ: Այս հաշտու-

թիւնը չէր կարելի չը սպասել, որովհետև, անտեսական իրերի փոփոխման զօրութեամբ, մեր վաճառականութիւնը սկսեց շփւել թէ նորեկ եւրոպական վաճառական և գործարանական տարրի հետ և թէ այն իւր հարազատ նոր սերուղի հետ, որ հրապարակ էր գալիս՝ անտեսական նոր պայմանները ուսման պաշարով աւելի լաւ ըմբռնելու և ժամանակակից պահանջների համեմատ զործելու։ Իրաւ է, որ նոր սերուղի համար սկզբներում շատ զժւար էր ներշնչել երկրիս նահապետական կապիտալիստ վաճառականներին այն ողին և ուղղութիւնը, որ պիտի սոցա անմիջապէս հանէին այն անշարժ դրութիւնից, որով ոչ մի այն սոցա սեպհական շահերին էր վնաս տրւում այլ և առհասարակ երկրիս տնտեսական բարօրութեան շահերին։ Սակայն հոսանքը այնքան թարմ և ուժգին էր, որ մեր կապիտալիստները, որ լոկ առևտորդ էին զբաղւած, սկսեցին հետզհետէ ձեռք մեկնել ձեռնարկութիւններին, որոնք պէքտ է նոցա ծանօթացնէին երկրիս արդիւնաբերութեան ոյժերից օգտւելու եղանակներին և ձեւերին։

Դրութեան այս փոփոխութեան առաջին մեծ զարկը սակայն ուեցին օտար կապիտալիստները, որոնք և շարունակում են իրանց այդ պատմական դերը նաև այսօր։ Մտնելով համաշխարհային անտեսական շահերի սֆերայի մէջ, Կովկասը բնականօրէն ձգտեց գէպ իրան նաև համաշխարհային անտեսական ոյժերը՝ թէ կապիտալով և թէ տեխնիքական գիտութիւններով օժտւած մարդկանցով, որոնք համարձակ էին իրանց ձեռնարկութիւնների մէջ այնքան, որքան և փորձւած էին։ Օտարների գործունէութիւնը օրինակ ծառայեց տեղացիներին, որոնք արդէն շահ տեսան նոյն իսկ կուրօրէն հետւելու նրանց, մինչև որ ժամանակը իրանց ևս կատարեալ գիտակցութեան կը հասցնէր։

Կապիտալիստա-վաճառականի զրութիւնից գէպի կապիտալիստարդիւնաբերողի գրութեանը անցնելով, մեր վաճառականները բացում են թէ իրանց և թէ հասարակութեան այլ դասակարգերի համար գործունէութեան բազմազան նոր ասպարէզներ։

Այս կերպարանափոխմանը մենք հանդիպում ենք ժողովրդական անտեսութեան գրեթէ բոլոր ասպարէզներում։ Ճիւղեր կան, ուր աղական ոյժերը առաջնակարգ են։ կան ճիւղեր, ուր օտարներն են

բոնում առաջին տեղը: Մեր նպատակը այժմ այն է, որ, օգտւելով  
մեր երկրի արդիւնաբերութեան մասին լոյս տեսած ճշտագոյն հե-  
տազոտութիւններից, թէև կարճ, բաց որքան կարելի է ամփոփ  
տեսութիւն տանք մեր երկրի արդիւնաբերութեան գլխաւորագէս  
այն ճիւղերին, որոնք ամենից նկատելի կերպով կրել են նորագոյն  
պայմանների ազդեցութիւնը: Տողովրդական անտեսութեան այս կեր-  
պարանափոխմանը մենք հանդիպում ենք նաև զիւղատնտեսական  
բնաւորութիւն կրող ձեռնարկութիւնների մէջ: Եւ մեր տեսութիւնը  
կըսկսենք գորանից և այս անգամ կը խօսենք հում մետաքսի և  
բամբակի մասին, որոնց արդիւնաբերութիւնը զգալի փոփոխութիւն-  
ների է ենթարկւել վերջին տարիներում:

Անդրկովկասը օժտւած է բնութեամբ հարստութեան այնպիսի  
աղբիւրներով, որ նա համարձակ կարող է ոչ միայն պարձենալ համե-  
մատւելով ուրիշ երկիրներից շատերի հետ, այլ և մի քանի բաներում  
գերազանցել սոցա: Ով կ'ուրանար այն իրողութիւնը, որ մետաքսը,  
հէնց իբրև հում նիւթ, կազմել է առաջ և այժմս երկրիս հարս-  
տութեան այն առատ աղբիւրը, որից մնունդ են սուացել և սուանում  
են հազարաւոր գիւղական աղբաբնակութիւններ: Եթէ սա մի փաստ  
է, ուրեմն արժէ, որ մենք սորա վրայ մեր լուրջ ու շաղբութիւնը  
դարձնենք, նամանաւանդ որ երկրիս ժողովրդական անտեսութեան  
նորագոյն ձևերի զանգացման մէջ շերամապահութիւնը և առհասա-  
րկ հում մետաքսի արդիւնաբերութիւնը մի պատւաւոր տեղ է բւնում:

Եերամապահութիւնը, որպէս երեւում է, մեր երկրի հնագոյն  
արդիւնաբերութիւններից մէկն է, իւր բնաւորութեան համեմատ՝  
կենարոնացած լինելով գիւղերում: Այդ մի գործ էր, որ ոչ կապիտալը ոչ  
էլ գիտութիւնը կարծես գործ չունէին շինելու նորա նկատմամբ:  
Բայց յայսոնի է որ 60-ական թւականներից սկսած շերամի հիւան-  
դութիւնը մեծապէս վնասեց ազդ գործին և շատ թթէնիներ անցայ-  
տացան: Մեր երկրից վերացաւ բոժոժի հին խոշոր կովկասեան  
սորտը, տեղ տալով նորամուտ ժամոննականին, որը ակներև կերպով  
սոոր է խոտալական կամ ֆրանսիական բոժոժից: Եւ չը լինէր արտա-  
սահմանցիների և մասամբ նաև մեր վաճառ ականների միջամտու-

թիւնը առողջ և լաւ սերմեր երկրի մէջ ներմուծելու համար՝ —մեր երկրի այդ ազնիւ արդիւնաբերութիւնը գիւղացիների ձեռքում անշուշտ վուանգի կ'ենթարկւէր և այժմ ոչ միայն շերամի սերմն է սկսել ենթարկւել փոփոխման, այլ և մերոնք սկսել են ընտելանալ նաև այս մոքի հետ, որ շերամ պահելլը մի արհեստ է, որի համար մեզ պէտք է հետեւել եւրոպացիներին, անդամ պէտք կայ յատուկ դորա համար ուսումնարաններ ունենալ: Այսպիսով մենք տեսնում ենք, որ գործին, բացի իրանց գիւղացիներից, օկսել են մասնակցել թէ արտասահմանի սերմատէրեր, թէ մեր վաճառականները և թէ նոյն իսկ աէրութիւնը: Վերջինս՝ հիմնելով ուսումնարաններ, առաջինները՝ բաժանելով գիւղացիներին Պատուօրի մեթոդով քննւած առողջ (ցելուլէր կոչւած) սերմեր, մեծ մասամբ արդիսնքին մասնակցելու պայմանով: Բոլորովին անկասկած է, որ այս փոփոխութիւնները առաջացնելու համար մեր ղիւղական դասակարգը անձեռնհաս կը լինէր, եթէ այն միւս ցիշւած ֆակտորները նրան օգնութեան ձեռք չը կառկառէին: Այս ամենը մեզ յոյս է տալիս, որ որքան էլ լաւ ցիշատակներ են մնացել շերամապահութիւնից մինչ 60-ական թւականները, բայց նորա իսկական ծաղկումը դեռ ևս առջևներիս է:

Ներամապահութեան բարւոքման բարեխաջող պայմաններից մինը, ինչպէս յայտնի է, թթենին է: Անդրկովկասեան արևելեան նահանգներում այս տունկը շատ է տարածւած: Ամբողջ Անդրկովկասում թթենիներով տնկւած հրապարակը մօտաւորապէս համում է 34,000 դեսետինի: Եթէ, ինչպէս հաշում են, ամեն մի գետաբառին թթենի հողը միջին թւով արժէ 200 բուբլի, հետեւաբար ընական է, որ 34,000 դեսետին կ'արժենայ 6.800.000 բուբլի: Արդարեւ մի հարուստ աղբիւր, որի գոյութիւնը ուզակի պայմանաւորում է շերամապահութեան գործը մեզանում: Այս թւերից աւելի հետաքրքրական է այն հանգամանքը, որ ամեն մի դեսետինի թթենի հող տալիս է միջին թւով մօտաւորապէս  $3\frac{1}{2}$  փութ չորացրած բոժոժ: Խոկ եթէ երկիրը ունի լնդամենը 34.000 դեստ թթենի հող, մենք կը ստանանք այն ժամանակ 120.000 փութ չորացրած բոժոժ: վերածելով այս հում նիւթը դրամի, մենք աւելի ևս կը համոզւենք, որ մետաքսի արդիւնաբերութիւնը կազմում է երկրիս արդիւնաբերութեան այնպիսի մի ծիւղ, որ ոչ միայն պէտք

է գրաւէր զէպի իրան մեր կապիտալիստ-վաճառականներին սոսկ շահադիտական տեսակէտից, այլ պէտք է վերջիններից սոեղծէր մի ամբողջ դասակարգ, որ պաշտօնապէս նւիրւէր այդ գեղեցիկ գործին։ Ահա ձեզ մի փութ չորացրած բոժոժի գինը փոխում է 35 և 40 ր. Դիցուք մի փութ չորացրած բոժոժ ծախում է 35 րուբլի, մենք կը ստանանք 120.000 փութից—4.200.000 ր.։ Վերջինթիւր ճշշմարտութիւնից շատ հեռու չէ և անկասկած Անդրկովկասը կարող կը լինէր սրանից էլ աւելի հում մետաքս արդիւնաբերել, եթէ նա տեխնիքապէս յառաջադիմէր այս արդիւնքի արդիւնահանութեան գործի մէջ։ Սա մի լուրջ ցանկութիւն է, որ աւելի ևս զգացւում է, քանի որ Ռուսիան իւր գործարանների համար շարունակ աւելի և աւելի մեծ պահանջ է յայտնում Անդրկովկասեան մետաքսի համար։ Այս առիթով անհետաքրքիր չէ իմանալ որ Ռուսիան ներմուծում է Արտասահմանից 7—14 միլիոն րուբլու մետաքս։

Արդիւնաբերութեան պայմանները բարեփոխելով, Անդրկովկասը գուցէ հեշտութեամբ կը լրացնէր Ռուսիայի այդ պահանջը։ Բայց և այնպէս Անդրկովկասը այժմս կարողանում է թէ Ռուսիա և թէ արտասահման արտահանել հում մետաքս մի յայտնի քանակութեամբ, որ ուշադրութեան արժանի է։

Մինչ 1881 թիւր հում մետաքսի արտահանումն հասնում էր 1—2 միլիոն րուբլու, իսկ 1881-ից մետաքսի արտահանումը մեր երկրից սկսում է նւազել։ Այսպէս օրինակ 1885 թւին Անդրկովկասից արտահանւած էր զէպի արտասահման 469,774 ր. Հին մետաքս և 50,944 պարսկական ճաշակով գործւած մետաքսեայ կտորներ—ուրեմն ընդամենը արտահանւած էր այդ տարին 520,718 ր.։

Հում մետաքսի արտահանման նւազելը մեր երկրից բոլորովին զարմանալի չը պիտի թւայ։ Սա մի անխուսափելի հետևանք էր այն հանգամանքների, որ երեան եկան շնորհիւ թէ Ռուսիայի և թէ Անդրկովկասի տնտեսութեան զարգացման։ Վերջին տասն և հինգ տարիներում Ռուսիայում երեան եկան մետաքսադործական գործարաններ, որ անընդհատ դիմում են Անդրկովկասին իրանց հում նիւթի պահանջները լրացնելու թէ բոժոժով և թէ մանած թելով։ Արդ, մեր երկրի մի քանի շերամապահական կենտրոններում, որպէս նուխի, նուշւայ շրջակացքը, Օրդուբաթ և սորա շրջակացքը—այս վերջին

քւանուհինք ամեեակում, բայց մանաւանդ այս վերջին տասնեակ տարում այնքան բազմացել են մետաքսաթելի մանարանները եւրոպական սիստեմով, որ Կովկասից մետաքսը զրեթէ ամբողջապէս արտահանում է ոչ բոժոժով, այլ ուղղակի պատրաստի թելով։ Այդ մետաքսաթելի գործարանատէրերը նախկին վաճառականներ են և այժմ էլ զեռ ևս գործարանատէր - վաճառականներ են։ Բայց այդ ճիւղին մենք դեռ կը վերադառնանք այս յօդւածի շարունակութեան մէջ։

Միւս կողմից անհերքելի է այն փաստը, որ նոյնպէս Անդրկովկասում, նամանաւանդ սորա արեւելեան թուրք և հայաբնակ նահանգներում, սկսեցին հիմնել մետաքսագործական գործարաններ, որոնց գործածութեան համար հարկաւ սկահւում է մի յայտնի քանակութեամբ հում մետաքս։ Մեր երկրում այդ տեսակ գործարանների թիւը հանում է 148, որոնք զլիսաւորապէս ցրւած են Գանձակի և Բագւայ նահանգներում և արդիւնագործում են զեռ ևս միայն մօտ 52,000 ր. մետաքսեայ ապրանքներ։ Ինկատի առնելով ժողովրդական տնտեսութեան իրերի այդ փոփոխումը, պարզ է, որ վերոցիշեալ հում մետաքսի արտահանման նւազումը պէտք է տեղի ունենար։ Խսկ եթէ յուսացինք և սպասէինք, որ թէ Ռուսիայում և թէ Անդրկովկասում մետաքսագործական գործարաններ կը բազմանան, այն ժամանակ այդ հում արդիւնքի արտահանումը գէսի արտասահմանեան երկիրները աւելի ևս պիտի պակասի։ Բայց այս ցանկալի նպաստակին հասնելու համար, հարկաւոր է շերամապահութեան այժմեայ պայմանները բարեփոխել, որ ընդունակ գտնուէին զարգացնել երկրիս արդիւնագործութեան այս հարուստ ճիւղը։ Բարեփոխելիք պայմաններից մինը պահանջում է, որ երկրիս այն կենտրոններում, ուր գիւղացիք փոքրից մինչ հասակաւորը - զբաղւած են հում մետաքսի արդիւնաբերութիւնով, բանացին շերամապահական ուսումնարաններ։ Նէոց այս ուսումնականից մէնք կարծում ենք, որ Թիֆլիսում հիմնւած շերամապահական ուսումնարանը չի կարող կատարելապէս իւր առաջարկած նպատակին ծառացել։ Խսկական կենտրոններից հեռու կառուցած շերամապահական ուսումնարանները կարող են հետաքրքրել միայն հարցասէր մարդկանց, բայց որ նոքա անմիջական օգուտներ չեն տալ գիւղացիներին, որոնց հա-

մար շերամապահութիւնը գոյութեան ինդիր է զա՝ անհերքելի է:

Մենք նպատակ չունենք մեր այս յօդւածի մէջ ուսումնասիրել երկրիս արդիւնաբերութեան այն բոլոր ճիւղերը, որոնք՝ թէև շնորհիւ երկրիս բնական պայմաններին՝ քաջաքացիական իրաւունք են վայելում, բայց իրանց նշանակութեամբ այնքան չեն ծաւալւել, որ կապիտալների կենտրոնացում առաջ բերեին և հետևաբար տնտեսական կեանքին նոր կերպարանք տացին: Մեր նպատակն է տեսութեան առնել արդիւնաբերութեան միայն այն ճիւղերը, որոնք տարեց տարի ընդլայնելով՝ դառնում են մեծ մասամբ և դարձել են մեր և ուրիշ երկիրների տնտեսական գործունէութեանը նիւթ և պաշար տւող ազգիւրներ: Այս ճիւղերի շարքին պատկանում է և բամբակի արդիւնաբերութիւնը:

Բամբակի արդիւնաբերութիւնը և առևտուրը սկսում են զարգանալ Անդրկովկասում իսկապէս 1855 թւականից, այսինքն այն օրից, երբոր Ամերիկացից ներմուծւող այդ արդիւնքի վրաց մօտաւորապէս 45 կոպ. սկզբ մաքս դրւեց: Պէտք է խոստովանած, որ յիշեալ մաքսադրութիւնը արդարացի էր և ունեցաւ բարերար հետևանք: Անդրկովկասեան մի քանի տեղերում դուք կը հանդիպէք բամբակի մշակմանը, որ կամ պատահական է կամ քիչ քանակութեամբ է լինում, բացի Երևանեան՝ նահանգից ուր բամբակը մշակում և արդիւնահանում է ահազին քանակութեամբ:

Յիշեալ 1855 թւականի մաքսադրութիւնից յետոյ երկրորդ և աւելի մեծ զարկը ստացաւ բամբակի մշակումը մեզանում շնորհիւ Հիւսիսացին Ամերիկացի Միացեալ նահանգների ներքին պատերազմին 60-ական թւականների սկզբի տարիներում, որի պատճառով բամբակ ստանալ Ամերիկացից դառնաւ անկարելի, Եւրոպայում և Խուսիսացում բամբակի գները բարձրացան ոովորականի մի քանի պատիկը, այնպէս որ բամբակի մշակութիւնը դառնաւ ամենաշահաւել մի գործ: Յետոյ գները իջան, բայց գործը մնաց, այնպէս որ մինչ 1870 թ. բամբակի արդիւնաբերութիւնը անընդհատ բարձրացել է

Երևանեան նահանգում: Այսպէս 1861 թւին Երևանեան նահանգը արդիւնահանել էր 30,000 փութ բամբակ: Խակ տասը տարւացընթացքում, սկսած վերջին 1861 թւականից, ցիշած քանակութիւնը բազմապատկում է հանելով 1870 թւականին մի խոշոր թւի, այն է՝ 293,000 փութիւնորհիւ մի քանի պատճառների, որ մենք ստորև լիշում ենք, այս վերջին ընթացքը ընդհատում է, այնպէս որ 1870 թւականից սկսած բամբակի արդիւնաբերութեան քանակութիւնը իջնում է մինչ 1881 թւականը, բայց նա գարձեալ սկսում է բարձրանալ և հասնում է 1884 թւին 180,000 փութիւ:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, բամբակի արդիւնաբերութիւնը Երևանեան նահանգում ենթակաց է եղել փոփոխական բաղդի: Ինչո՞վ պիտի մեկնել այս երևոյթը: Խնչ վերաբերում է գիւղացիների թէկ գուեհիկ, բայց տոկուն և բեղմնաւոր աշխատութեանը, նոյնպէս հողի անգին յատկութեանը, կասկած չը կայ, որ տոքա հիմնաւոր և առաջնակարգ գործոններ են բամբակի արդիւնաբերութեանը նպաստելու: Բացի սոցանից բամբակի արդիւնաբերութիւնը ենթադրում է անպայման կերպով իւր արդիւնաւէտութեան մեծանալու համար մի այլ պատրաստականութիւն: Զէ որ այս բոյսը սիրում է խոնաւութիւն: Որպէս զի ցանած բամբակի սերմը շատ արդիւնքներ տայ, սա պահանջում է ոռոգւելու համար մեծ քանակութեամբ ջուր, որի պակասութիւնը շատ զգալի է նաև բամբակի արդիւնաբերութեան տեղերում և որ այս գործով զբաղւած գիւղական դասակարգի ցոյսերը հունձքի վերաբերմամբ յաճախակի ոչնչացնում է: Այս ցաւի դէմն առնելու համար գիւղացիները կանգ են առած անցոյ և անոյժ, որովհետեւ սոցա պակասում են թէ նիւթական միջոցներ և թէ գիտութիւն: Այնպէս որ եթէ երաշտութիւն է երևում, նոյն տարին արդիւնքի քանակութիւնը նւազում է: Ուրեմն այս օրինակ շահագիտական մեծ օգուտներ խոստացող և գիւղացիների տնտեսական գոյութիւնը բարւոքող գործունէութիւն կախւած է գտնւում բնութեան պատահական դէպքերից: Եւ մեր վաճառական-կապիտալիստները, արդէն լաւ ըմբռնելով ոռոգման միջոցների անգնահատելի և անհուն օգտաւէտութիւնը, գարձեալ տատանւում են միահամուռ ոյժերով ոռոգման ջրմուղներին ձեռնարկեռ: Ինչո՞ւմն է կայանում այս տատանման պատճառը: Այսա պա-

տասխանը շատ պարզ է: Պատճառը նա է, որ մեր վաճառական-կապիտալիստները՝ չունին այն յանդուգն և ձեռնարկող ոգին, որ ընդունակ է առհասարակ բարեփոխութեաներ մոցնելու տնտեսական յարաբերութիւնների մէջ:

Բացի ոռոգման ջրանցքներից՝ պակասում են մեր գիւղացիներին և այն դիտելիքները և միջոցները, որոնք հարկաւոր են, որպէս զի նոքա հունձքից յետոյ հում բամբակ մաքրել կարողանան, այսինքն արդիւնքը ծախելու պատրաստեն: Ծախւելուց առաջ այս արդիւնքը պահանջում է, որ սորան դեռ ջոկեն իւր մէջ պարունակող սերմերից: Մի գործ, որի կատարման համար, բացի մեքենաներից, հարկաւոր են նաև մարդկանց կողմից նուրբ և ճարպիկ աշխատանք, հակառակ դէպքում սերմերը հում նիւթից ազատելու ժամանակ՝ վերջինս շատ յաճախ պատառուում է և այնուհետև փչանում և կորչում է:

Աչքի առաջ ունենալով բամբակի արդիւնաբերութեանը նպաստող այս պայմանների բացակայութիւնը, դժւար է սպասել, որ մեր երկիրը այն ահազին քանակութեամբ բամբակ արդիւնաբերի, որ պահանջւում է Խուսիացից:

Այսու ամենայնիւ չը նայած երկրիս աշխատանքի ոյժնը անկատարելագործութեանը և ոռոգման միջոցների պակասութեանը, Խուսիացից վերջին ժամանակներս եկան մեր երկիրը հարուստ գործարանատէրեր իրանց վարպետներով հանդերձ և վարձեցին երեւանեան նահանգում և Անդրկասպիացում կապալով հողեր բամբակի արդիւնաբերութեան փորձեր անելու: Պէտք է պնդել, որ սոքամի քանի փորձերից յետոյ լաւ հետեւանքին հասան և այնպիսի յատկութեամբ բամբակ ստացան, որ սա կարող է յաջողութեամբ մրցել ամերիկական բամբակի հետ: Թէ որքան է այս յաջող փորձերից ազդեցութիւնը մեր կապիտալիստ-վաճառականների վրայ, դա դեռ ևս մի խնդիր է, որի մասին խօսել անգամ վաղաժամ կը լինէր: Եթէ մեր կապիտալիստները լրջօրէն հետեւէին նոյն իսկ նորեկ գիտութեամբ օժտուած կապիտալիստների օրինակներին, դա ել կը լինէր գովասանքի արժանի մի երևոյթ, թէև միւս կողմից մեզ ցաւալի է թւում, որ մեր կապիտալիստները իրանց սեփական նախաձեռնութեամբ չեն վատահանում նորութիւններ մոցնել ժողո-

վրդական տնտեսութեան այն ճիւղերի մէջ, որ մեզ մի մէծ ապագայ են խոստանում: Գուցէ նախաձեռնութեան պաշտօնը անտեսական գործունէութեան ասպարէզներում վիճակած է կատարել նոր սերունդին, որ պաշարւած լինելով գիտութիւնով, աւելի հեշտ պիտի ըմբանի երկրիս ժամանակակից պահանջները: Բայց առ այժմ մեզ մնում է ընդօրինակել տարականներից այն, ինչ որ կարող ենք մեր կապիտալների և ընդունակութիւնների համեմատ:

Մենք վերև ցիշեցինք, որ 1884 թւականին Երևանեան նահանգում բամբակի մշակումը զարգանալով՝ աւելանում է նաև այս արդիւնքի արդիւնաբերութիւնը մինչ մօտ 180,000 գութիւն: 1884 թւականից սկսած բամբակի արդիւնաբերութիւնը Երևանեան նահանգում անում է աւելման այնպիսի մեծ քայլեր, որ նաև հասնում է գեռ չեղած թւի 1889 թւականին, այն է մօտ 600,000 գութիւն: Արդիւնքի քանակութեան հետ աւելանում է նոյնպէս անկարանների տարածութիւնը: 1887 թւականին Երևանեան նահանգում բամբակի մշակման յատկացրած հրատարակը տարածում էր մօտ 20,000 գեսեատինի, իսկ երկու տարից ցետոց այսինքն 1889-ին բամբակի տնկարանների տարածութիւնը հասնում էր արդէն 30,000 գեսեատինի:

Այս թւերի հետ նշանաւոր է և այն, որ արդիւնքի յատկութիւնը զգալի կերպով լաւանում է: Մի գութ բամբակ, որ ծախւում էր 1886—7 թւականին 4—5 րուրլի, ծախւում էր 1889-ին և մինչեւ այժմն միջին թւով 7 րուրլի: Գնի բարձրութեան մէջ մասնակցում են մի յացանի շափով և Ռուսիայի գործարանատերերի անընդհատ աւելացող պահանջները մեր երկրի բամբակի համար: Բայց այս պահանջը աւելանում է որովհետև արդիւնքի յատկութիւնը լաւանում է: Բամբակի յատկութեան լաւանալու պատճառը պէտք է վերագրել յամենայն դէպս այն հանգամանքին, որ վերջին ժամանակներս սկսեցին մեծ մասամբ ցանել ամերիկական նոր սերմեր, որոնք մեր տեղական սերմերին գերազանցում են և ի հարկէ լաւ արդիւնք են տալիս: Բամբակի պահանջը տարէցուարի մեծանալով Ռուսիայից եկող գործարանատէրերը սկսեցին որոնել Անդրկապատում բացի Երևանեան նահանգից նաև այլ տեղեր, ուր կարելի էր բամբակ մշակել: Այս նպատակի համար տնկարաններ բանալու

տեղերը գանւեցան Գանձակի և Բագւաց նահանգներում, զլիսաւորապէս այն կողմերում, որոնք երկաթուղու գծին մօտիկ են:

Արած փորձերը ցիշեալ տեղերում այնքան յաջող էին, որ մի երկու տարից առաջ արդիւնքի քանակութիւնը լինելով միայն մի քանի հարիւր փութ, նա այժմս հասնում է 30,000 փութի:

Եթէ արևելեան Անդրկովկասը այսքան արտադրական ընդունակութիւն ունի, այդ չի կարելի պնդել երկրի արևմտեան կողմերի մասին: Արևմտեան Անդրկովկասի նահանգներից միայն Քութայիսինն է, որ պարունակում է իւր մէջ բամբակի արդիւնաբերութեան նպաստող հողացին և կիմացին պայմաններ: Բամբակի մշակումը պահանջում է յաճախ ուղղում, որ տրում է բնութիւնից շնորհիւ յաճախ անձրևների, որ այդ նահանգում շատ աւելի առաջ են քան նրեանեան նահանգում: Երկայն ցուրտ ժամանակը տարւաց ընթացքում շատ վնասում է բամբակի մշակմանը: Եւ այս տեսակէտից էլ Քութայիսի նահանգը վայելում է բնական արտօնութիւն: Քութայիսի նահանգում անցուրտ ժամանակը աւելում է 9 ամիս, մինչդեռ Երևանեան նահանգում այդ ժամանակը 7 ամիս է շարունակում և երկրի այս կողմը ամառաց շրջանում ենթակաց է ջրի սասարիկ պակասութեանը: Քութայիսի նահանգը արդիւնաբերում է մի տարւայ մէջ մօտ 50,000 փութ բամբակ: Նա կարող էր բազմապատկել իւր արդիւնաբերութիւնը, եթէ նախ նա սկսի հետեւել նրեանեան նահանգին՝ ցանելով լոկ ամերիկական սերմեր նորագոյն եղանակներով, իսկ յետոյ եթէ աստիճանաբար հրաժարվի սիմինդրի արդիւնաբերութիւնից, որ ահագին տարածութեամբ հողեր է զբաղեցնում և որի շահաւեսութիւնը այժմս արդէն վիճելի է գարձած:

Գումարելով բոլոր վերև ցիշած Անդրկովկասեան նահանգներում արդիւնաբերող բամբակի քանակութիւնները, մենք կը ստանանք մի պատկասելի թիւ՝ 680,000 փութ: Եթէ մի փութ հաշւենք միջին թւով 7 բուբլով, բոլոր քանակութիւնը կ'արժենաց ուրեմն 4.700.000 բուբլի: Արդարեւ սա մի գումար է, որի նման մեր երկիրը բամբակի վերաբերմամբ դեռ չի տեսել և որ, երկրիս առեւտրական զործառնութիւններին ի նպաստ, ոոցա շարժմանը և կերևանափոխմանը ահագին զարկ տւած պէտք է լինի:

Բամբակի արդիւնաբերութիւնով առաջացրած կապիտալների

շարժականութեան ապացոյցը մենք գտնում ենք արդիւնքի արտահանման մէջ դէպի այլ և այլ երկիրներ, որ տարեցոտարի մեծացել է: 1885 թւականին արտահանւել է 148,366 փութ բամբակ: Մի տարից յետոյ արտահանումն հասած էր արդէն 258,710 փութի, 1887 թ. նա եղած է 261,861 փութ: Արտահանման մէջ մասնակցած են բոլոր բամբակ արդիւնաբերող նահանգները, որոնցից երեանեանը ամենից խոշոր տեղ է բռնում: Բամբակի արդիւնաբերութեան աւելման հետ, աւելանում է և սորա արտահանումը, իսկ երկրիսներքին սպառումը այդ արդիւնքի անփոփոխ է մնում: Միայն Թիվ-լիսում գտնւող մի գործարանն է (Զիթախտեանի) է, որ սպառում է յայտնիքանակութեամբ Անդրկովկասեան բամբակ՝ գործելով մի տարւայ մէջ մօտ 500,000 բուբլու կտաւեղէն: Սրանից դուրս՝ գործարանական սպառող մենք չ'ունինք: Նատ չնչին քանակութեամբ սպառող է հանդիսանում և երկրիս առանին տնտեսութիւնը, որին, կտաւ եղէն և սորա նման կտորներ գործելում շնորքով փայլելու համար՝ դեռ ևս շատ բան է պակաս:

Մենք բաւականին կանգ առանք բամբակի արդիւնաբերութեան մասին խօսելիս: Բայց մենք մտադրութիւն ունինք տեսութեան առնել արդիւնաբերութեան այն խոշոր ճիւղերը, որոնց ընդլայնումը և զարգացումը երկրիս տնտեսութեան յառաջադիմութեան համար վճռողական նշանակութիւն են սուանում: Մենք կ'աշխատենք, ըստ մեր կարողութեան, այս նպատակին համնելու յետագայ յօդւածներում: Սակայն այս պաշտօն կատարելիս՝ հետախուզող մարզը հանդիպում է ահագին զժւարութիւնների, երբոր նա զիմում է համատական վիճակագրական թւերին, պարզ որոշելու թէ արդիւնաբերութեան մի ճիւղի այս կամ այն կողմը որքան է զարգանում և այնուհետեւ ինչ զրութեան մէջ է գտնուում և նա ինչ կերպարանք է ստացել: Այս վերաբերութեամբ վիճակագրական տեղեկութիւնները անհրաժեշտ են մանաւանդ այն դէպում, երբոր դուք ուզում էք իմանալ թէ արդիւնաբերութեան մեծանալու հետ որ աստիճան մեծանում է և երկրիս ներքին սպառումը: Եթէ դուք կ'ապացուցանէք, որ մի երկրի ազգաբնակութեան բոլոր խաւերը համեմատաբար

այնքան աւելի են մասնակցում յայտնի արդիւնքների սպառման մէջ, որքան նոքա արդիւնաբերում են, այն ժամանակ դուք կարող եք չափել երկրիս տնտեսական և հասարակական բարօրութեան աստիճանը:

## ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑԻ

Կեանքը չէ տալիս ինձ հաւատ և յոյս,  
Կեանքը չէ տալիս եռանդ իմ հոգուն,  
Եւ ես նորանից էլ սիրո, խըրախոյս,  
Տեսնում եմ, այո՛, զուր եմ ըսպասում:  
Եւ կանգնած է նա իմ առջեւ, ինչպէս  
Յուսաբեկ ծերուկ, զըզւած բոլորից,  
Որ գարձնում է իւր խորշոմած երես  
Չեռքերը պարզած խըզնուկ զաւակից.  
Որդու մըրմունջներ, աղաչանք և սուգ,  
Փայփայանքների կարօտ խորագին—  
Բայց ծերի դէմքին չը կայ արտասուք.  
Նա անողոք է որդու առաջին:

Հոգի իմ, կեանքից մի խնդրիւ իզուր  
Յոյս, հաւատ, եռանդ, քաջալերութիւն.  
Ո՞րտեղից նա տայ, երբ անյոյս, տրխուր  
Հազիւ թըմըրում է նորա գոյութիւն,  
Երբ նա ինքըն էլ՝ թըշւառ ու դալուկ,  
Փայփայման կարօտ՝ չէ գըտնում գըգւանք.  
Երբ լալ է ուզում—չը կայ արտասուք,  
Երբ հառաչում է—չը կայ արձագանք:  
Մի ցաւիլ, հոգի, և քո մէջ խեղտիր  
Ամենայն կարօտ—սէր և յոյս և խանդ,  
Եւ ներքուստ վառւած՝ գէթ գու ներշնչէր  
Այս մեր խեղճ կեանքին ջերմաջերմ եռանդ:

# ՃԱՒՃԱԽԱՋԵԻ ՎԵՐԻ ԱՐԻԹՐԻՎ

ԾԱՆՈԹՈՒԹՅԻՆ,

ՏԵԳՐԱՆ ՓԻՐՈՒՄԵԱՆՑԻ

Աչքի առաջ ունենալով այն անհաճող հաճդամանքը որ կովկասի երգու ամենաբաղաքակիրթ ժողովուրդները շատ քիչ տեղեկութիւն ունին փոխադարձարար միմեանց ազգակին կեանքի մասին և որ հազ գրականութիւն վրաց համար և վրաց զրականութիւն հայոց համար՝ երկու անձանօթ աշխարհներ են,—մտադրւեցի ծանօթացնել հայ ընթերցողներին մեր զրացի—վրաց զրականութեան հետ, սկսելով «Սուրբ»-ի սուն համարից տպել չարգելի իշխան իլիս ձաւճաւածէի ամենագլխաւոր դործը:

Իշխ. ձաւճաւածէն համարւում է վրաց ամենաընտիր վիպասանը, թէն նա իրեն քնարերգ-բանաստեղծ էլ երկրորդական անդ չէ բանում: Նորա միւս վէպելուն են՝ «Գլախիս նաամբորիտ (Աղքատի պատմածը) և «Օթարանթ քրիւլո» (Օթարինց արին):

Վրաց միւս վիպասաններից նշանաւոր են՝ Արդազի անին՝ «Սուլումոն Խակիչ Մէջզանուաշէլին», Քչէուլովը՝ «Թամար Բատօնիշւիլի» (Թամար՝ թագաւորի ազջիկ) և Ճոնքաձէն՝ «Սուրամիս ցիխէ» (Սուրամի քիրդ) վէպելով: Վէպելներ և մանր պատկերներ զրողներից առանձին կերպով աշքի է ընկնում Սոչիսութարիձէն՝ լնոնակին կեանքից վերցրած իւր ընտիր պատկերներով:

Բայց սիրուն Վրաստանի բնութիւնն ու կլիման մեծ զարկ են տեսել նորա որդիներին քնարերգ բանաստեղծներ դառնալու: Եւ ահա մենք տեսնում ենք ալստեղ մի շարք պատկառելի ու համակրելի քերթողներ, որոնց գողարիկ ու զիւթիչ ոտանառորները կը կարդացւեն զարուց ի զարու Ալէքսանդր Ճաւճաւաձէ, Գրիգոր Օրբելի անի, Նիկոլով Բարաթով, Խափաէլ Էրիսթաւի, Ակակի Ծիրեթելի և Կլիա Ճաւճաւաձէ—ահա վիրական քնարի փալուն աղամանդները: Ներկայ բապէիս, երբ զրաւմ եմ սոչն տողերը, վրաց ընթերցող հասարա-

կութիւնը ուշի ուշով հետևում է երիտասարդ Ռազիկաշւիլիի ոստանաւորներին, որոնց սրտառուչ, ինքնուրողն ու խիստ ուժեղ արտապատութիւնը մեծ , պագաց է խոստանում այդ նորելուկին:

Անկախ այդ զլիստառը գրականութիւնից, վրացիք ունեն, եթէ կարելի է ալսպէս ասել. նաև մի երկրորդական գրականութիւն՝ գործ ոչ միան երկրորդական, այլ մինչև խոկ տասներորդական հեղինակներին. Դրան ես անւանում եմ փողոցականութիւն գրականութիւն: Դա ամփոփւած է մանր մունք 2—5 կոսկեկանոց բրոշիւրների մէջ և ներկազացնում է (զլիստառը ասանաւորի միջոցով) օրւաչ չարիքը՝ մի վերին աստիճանի զաւշտական ու ռամկութեանը սաստիկ դուռ եկող եղանակով: Թիֆլիսում, ռամկական գրադաների այդ հավենիքում, ոչ մի հետաքրքիր իրողութիւն չի խորս տաչ այդ էժանագին հեղինակների սուր հակեցողութիւնից. Նա իսկոց կ'արձանագրուի, տասնեակ հակարներով կը վաճառւի ու փողոց անցնելով զիշ զիշ ձաւնակ կ'երգուի հէնց օրինակ ալսպէս:

«Երի Երի, Երիակէնա, Կէկէլ ջան,

«Մարի ծաւիդէթ, Վերիսկէնա, Կէկէլ ջան...»

Վրաց պարբերական՝ մամուլը ներկազանում է մեզ ալսօր հետեւալ եղանակով: Մի ամենօրեաւ թերթ (չարաթը վկաց անգամ) իւ երիա (Վրաստան) անունով, խմբագրութեամբ իշխու. Խլամ Շնունա: աձէի (գարձեալ նուն անձնաւորութիւն), մի մանկական երկամսալիք՝ (տարին վեց անգամ, իւրաքանչյուրը մօտ 80 երեսով) «Ձէջիլի» (Արտ), խմբագրութեամբ շնորհալի հարուհի օրիորդ Ա. Թումանեանցի, մի դիւդատնտեսական շաբաթաթերթ՝ «Մէւուրնէ» (Գրւատանտես), խմբագրութեամբ Սուլիմանաշկիլիի և մի կրօնական ամսաթերթ՝ «Մծզեմսի» (Հովիւ), խմբագրութեամբ հայր Գամբաշիձէի:

Վրաց թարգմանական և գիտնական գրականութիւնը ամփոփւած է զլիստառապէս վիշեալ պարբերական հրատարակութիւնների մէջ. իսկ թատերական ճիւղը այն աստիճան առատ է ամեն տեսակ ձիերով ու հեղինակներով և, միենուն Ժամանակ, այն աստիճան անգոյն ու ջրալի՝ գրականութեան միւս ճիւղերի համեմատութեամբ՝ որ ևս բարւոք եմ համարում զրադշել նրանցով մի աւելի լարմար ժամանակ:

Խոստանալով մեր ընթերցողներին քիշքիչ ծանօթացնել թարգմանութիւնների, քաղցածների և ընդհանուր տեսութիւնների միջոցով՝ վրաց հին և նոր գրականութեան, մամուլի և ականաւոր զործիչների հետ, ես անցնում եմ հիմա մեր լարգելի վիստառան—Կաց ի ա. Ա. դ ա մ ի ա ն ի ի (Միթէ մարդ է-Աղամորդի) հեղինակին:

Ամբողջ վրաց հասարակութիւնից լարդւած և սիրւած իշխանը հաւասարապէս անւանի է որպէս վիստառան, բանաստեղծ, հրտապարակախօս ու հասարակական զործիչ:

Աշխատակցելով վրաց պարբերական՝ հրատարակութիւններին դեռ ևս

աշակերտական նստարանից, նա հրատարակեց 1863-ին, մօտ 25 տարեկան հասակում, իւր «Աւացիա Աղամիանին», որ մի լուսանկարչական խիստ զօրեղ պատկեր էր ճորտերի քրտինքով ապրող վրացի կալւածատէրին Ալեքսանդր Բ. Կապրի վետրւարի 19-ի մեծ վերանորոգութիւնը գեռ ևս անձանթ էր Կովկասում՝ և հին պորտարուծ կալւածատէրերի հոգեկան անկումը՝ իւր ահռելի մերկութեամբ՝ զարհուրեցնում էր «Աւացիա-Աղամիանին» ընթերցողներին. Ուրեմն որչափ ժամանակակից ու կինսական զրւածք էր դա, եթէ մինչեւ իսկ մի կողմ թողնենք նորա վերին աստիճանի հրաշալի, գեղարւեստական կտորները, կտորներ, որոնք երբէք չեն հնանաց և չափչափակութեամբ կը կարդացւեն հասարակութեան բոլոր դասակարգերից հաւասարապէս:

1872 թւին իշխան Ճաւաճաւածէն հրատարակեց իւր երկրորդ և նոյն շրջանից վերցրած մէպը—«Գլախիս նաամբորին» (Աղքատի պատմած), Քայլ ակստեղ նա ներկայացնում է ոչ թէ ճորտական զրութիւնից փչացւած կալւածատիրոջ, այլ այդ ճորտութիւնից թշւառացած մի ճորտին:

Վերջապէս իւր երրորդ վեպը—«Օթարանթ քւրիւի» (Օթարենց ալբրին) նա դուրս թողեց 1888-ին. Ուշադրութեան արժանի է, որ ակտոնեղ մեր հեղինակը այլ ևս չի զբաղւում վրաց կեանքի արատաւոր, մռայլ կողմերով, այլ ստուդում է վերին աստիճանի համալրելի անձաւորութիւններով մի փոքրիկ, վարդապոչ աշխարհ:

Նորա մանր սոտանաւորները տպւել են, երեսուն տարուց աւելի ժամանակամիջոցում, զանազան ամսագիրների և լրագիրների մէջ, սկսած «Յիսկարլու-ից» (Ծիածան) 1857-ից մինչև այժմեան վիերիանա. Իսկ նորա խոշոր պումաներից լիշտակւելու արժանի են՝ Ա. Հ. Պ. իւլի (տեսլք), Կ. ա. կ. օ., Դ. ա. ն. գ. է. գ. ի. լ. ի. (ճգնաւոր) և Դ. ի. մ. ի. տ. ր. ի. թ. ա. ւ. դ. ա. գ. բ. է. բ. ի. լ. ի. (Անձնուրաց Դիմիար):

Խիսան Ճաւաճաւածէն դուրս է եկել 1861 թ. Մոսկվայի համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտի վերջին կուրսից. 1865-ից նա վարում էր Քութաէլիսում հաշտարար միջնորդի (միրովոյ ոօօրենութեան) պաշտօն. 1868-ին՝ զատառանական վերանորոգութիւնից անմիջապէս լետու նա ուղարկւեց Դուշեթի իրբեն հաշտարար գատաւոր. Ալյոնեղ, լզանալով «Վրաց աղնւական—հողալին բանկ» հիմնելու գաղափարը և կաղմելով նրա ապագայ զործունէութեան նախագիծը, նա 1874-ին թողեց արքունական ծառակութիւնը, եկաւ թիֆլիս և մեծ չաջողութեամբ ընդունել տալով վրացի աղնւականներին իւր մտածած բանկի ծրագիրը՝ ողեալուց Պետերբուրգ բարձրագուն թուլառութիւն ստանալու. Եւ ահա, չաջորդ 1875-ին մենք անսում ենք ոչ միան բանկը հիմնուած, այլ և իշխան Ճաւաճաւածէն

<sup>1)</sup> Կովկասում ճորտութիւնը վերացւեց ոչ թէ 1861-ին, ենչպէս եւրոպական թուսառանում, այլ երեք տարի ուշ՝ 1864-ին:

Նրա կառավարիչ ընտրւած: Այդ պաշտօնում, ի մեծ գոհունակութիւն վրաց հասարակութեան, նա մնում է դեռ ևս մինչև օրս, 16 երկար տարիների ընթացքում:

Այդ բանկը, բացի իւր գլխաւոր նպատակից, որ է աղնւականութեան համար նպաստաւոր պակամաններով գրաւ վերցնել նրա կալւածները, պարտաւորում է նաև իւր զուտ արդիւնքի մի նշանաւոր մասը չատկացնել վրաց ազգօգուտ հաստատութիւններին:

1863-ին նա հիմնեց «Սաքարթւելո Մոռամբէ» (Վրաստանի Համբաւաբեր) ամսագիրը, որ ունեցաւ միան մի տարի գոյութիւն, Երկար տարիներ «Գրուբա» (ժամանակ) լրագրի գլխաւոր աշխատակիցը լինելով՝ 1877 թ. հիմնեց «Գրերիա» (Վրաստան) ամսագիրը, որ 1879-ից շաբաթաթերթ, իսկ 1885-ից ամենօրեաւ լրագիր դարձրեց: Իբրև խմբագիր նա միշտ մեծ մասնակցութիւն ունի իւր հրատարակութիւններում, որտեղ չաճախ տպում է նաև լողաճների ընդարձակ շարքեր՝ նւիրւած հասարական և քաղաքական կարևոր հարցերին:

Նա ապրում է իւր դիրքին ու իշխանական ափադրուին վախել շքով, և իրւած իւր հակիմնակիցներից և լարգւած Վրաստանի ամենաբարձր շքովներից:

Մի երկու խօսք էլ:

Իմ դիտաւորութիւնը՝ ծանօթացնել մերակիններին վրաց գրականութեան և ազգային կեանքի համար մեծ համակրութեամբ ողջունեց իմ ծանօթ վրացիներից: Երանք պատրաստ եղան ամեն դիւրութիւններ մասուցանելու ինձ և ես չեմ կարող չը լավունել իմ խորին չնորհապ կալութիւնը մանաւանդ մի լարգելի, ազնիւ ու համեստ վրացի գործիչ՝ պ. Պետրէ Ումիկա ւիւի ին, որ խիստ պարտաւորեցնող կ'իրաղով օգնում էր ինձ իմ ուսումնասիրութեան մէջ:

## ԿԱՑԻԱ-ԱԴԱՄԻԱՆԻ ॥? \*)

Պ Ե Պ

Ի Լ Ի Ա Ճ Ա Վ Ճ Ա Վ Ա Զ Ե Ւ

«Բարեկամիդ երե՛սին պախարակիր,  
Թշնամուդ՝ յետեւից»:

Խառապահ առաջ.

Ճարտասանութեան մէջ գրւած է, թէ մարդս ամեն բան  
ներածութիւնով պէտք է սկսի: Ճշմարիտ է: Մենք էլ այնպէս սկսենք:

Ով որ Լուարսարի կերպարանքում ինքն իրան կը ճանաչի, ով  
որ Լուարսարի մասին գրածները իւր զլսի վրայ կ'ընդունի, նաև,  
ինչ ասել կ'ուզի, ցեխ դցել կը սկսի ու զի՞ժ է, զի՞ժ է կը կանչի  
այս գրւածքի անպէտք հեղինակին: Թո՛ղ լաւ իմանան, որ մենք  
անձնաւորութեան հետ գործ չունինք. մենք գրում ենք մի հասա-  
րակական ախտի մասին:

Ով ինչ ուզի թո՛ղ ասի, բայց ես արդարացնում եմ զլուխս  
այն խօսքի ճշմարտութեամբ, թէ «բարեկամիդ երեսին պախարակիր,  
թշնամուդ՝ յետեւից»: Ուր ես արդեօք հիմայ, այդ իմաստուն խօսքի  
ասող: Գիտեմ թէ ուր. ժողովրդի մէջն ես, անտեսանելի և ժողո-  
վրդինը: Այն էլ զիտեմ թէ ինչ է անունդ. քեզ ժողովրդի հանճար  
են ասում: Այն էլ գիտեմ, թէ ինչ յատկութեան տէր ես. անօխա-

\*) Ճարտասանութեան? (Միթէ մարդ է-ադամորդի):

լական ես ու միշտ արդար: Դու և միմիայն դու ես քաջալեր կանգնումնրան, ում սիրալ որ ուրիշի համար է ցաւում: Եւ հենց այն ժամանակն ես քաջալեր կանգնում, երբ այդ ուրիշները սրտացաւի զլիսին են տալիս նորա սրտացաւութիւնը իրրե մի յանցանք: Ի՞նչ փոյժ: Մարդ կայ որ իւր սրտացաւութիւնը հանդէս է բերում իւր սիրածի վաս կողմերն էլ զովելով, մարդ էլ կայ որ հենց այդ վաս կողմերն է պախարակում: Թէ այդ երկու տեսակ մարդկանցից ո՞րն աւելի սէր և սրտացաւութիւն ունի — թո՛ղ ինքն ընթերցողը գուշակէ:

## I

**Ս**իրուն բան էր իշխան Թաթքարիձէի տուն-տեղը: Երեակայեցէք Կախեթի մի փոքր գիւղում մի ընդարձակ, ներքեւ իջած տեղ այդ տեղում մի երկարկանի, քարուկրից շինւած տուն: Ահաւասիկ այդ յարկերն ինչ տեսակ էին. ներքեւն էր եղեգնով ծածկւած մի մառան և այդ մառանի յետեւի մասի վրայ բարձրանում էր մի փոքրիկ անհետի իւր պառշդամբով: Պառշդամբումը շինւած էր ծիծեռնակի բոյնի նման մի փոքրիկ տախտակած տեղ, որ ծառացում էր որպէս անկողնի պահարան: Մի փոքր հետու գտնուում էր տախտակապատ թոնրատոննը, նրանից էլ դէնը՝ ամբարը, որի վրայ շինւած էր եզիպատացորեանի միականի պահարանը՝ անբաղդ ու սգաւոր: Կար նաև ցանկով պատած մի պարտէզ: Յանկի մօտ, մի թթենուկողքին երեւում էր հին, ծղոտներից շինւած խրճիթը, որ ժամանակից այնպէս ծուել էր մի կողքին, որ կարծէս թէ պատրաստուում էր պատկել մի հով տեղում: բայց տեղացաւից տաննչւող մի պառակնոց նման նորից ոտքի վրայ էր մնում: Այդ դղեակի բակը թէ՛ լայնութեան և թէ՛ երկարութեան կողմից բաւական ընդարձակ էր: Նա շրջապատւած էր մի հին ցանկով, որ տեղ տեղ քանդւած էր և նորա այժմեան տէրը երբէք մոքովը չէր անցկացնում նրան վերամորոգել: Երեւում է որ վրացի է...

Յանկը մի տեղ վերջանում էր բակի մեծ գլուխով, որոնց մի հատը, երկու տարուց ի վեր, այնպէս ողորմելի կերպով կախ էր ընկել մի օղակից, կարծես թէ սիւնը բոնել էր նրան ծեծելու, բայց նա յետ էր քաշւում, որպէս զի՞կարողանայ մի կերպով դուրս պրծնել

այնտեղից։ Այդ դռներից սկսում էր բաւական մեծ կալք։ կալսածի մնացորդները մնացել էին բլրի պէս կիտած նրա հարաւային ափին և մի ծայրով մօտենում էին յարդանոցին։ Ծիծաղելին այդ յարդանցն էր. այնպէս ախմար կերպով մտածութեան տրւած ու մի կողքը վեր քաշած կարող է լինել միայն մի թել կոտրած սագ։

Իմ՝ մանկութեան օրերին շատ հետաքրքիր բաներ եմ տեսել այդ կալի վրայ. այսուղի յաճախ զւարձանում էին՝ իրանց զգացումներով ողերուած՝ քնքոյց խոզերը. յաճախ փորել են նրանք իրանց փափուկ դնչով այդ աղբը այնպիսի մի անձնւիրութեամբ ու զգւանքով որ կարծես ճիշտ խոզեր լինեին։ Յետոց նրանց հանաքները, նրանց զւարձախօսութիւնները. օ՛, այդ արդէն աննկարազրելի՛ է։ Մի ինչ որ ինքնաբաւականութիւնից դրված, նրանք շատ անդամ են պատել միմանց այդ դնչով. ի՞նչ գուոց ու ճւճւոց էր բարձրանում այդ միջոցին։ Մեր գիւղացիքն էլ հէնդ այլպէս հանաքուց խփում են բունցքով նորեկ նորահարսի կողքին։ Մէկն ասել է. «Այրացու սէրը յանդիմանութիւնն է»։ ես էլ կ'ասեմ թէ այդ բոնցքով տալն էլ մի կատակերգական գգւանք է։ Խոկ կառավարութեան մէջ դա ուրիշ նշանակութիւն էլ ունի. այնտեղ բոնցքով տալը խրատելու միջոցներից մէկն է։ Բայց այդ մեր գործը չէ։

Ինքը բակը այնպէս անմաքուր էր, որպէս մի հին աստիճանաւորի սիրու։ Մեծ բան էր, եթէ մէկը կարողանար հանել մինչեւ տանտերը առանց կեղառուելու կամ այնտեղի անուշահոտութիւնը շորերի մէջ տանելու։ Այսքանը դրսից. հիմայց, պարոններ, շնորհ բերենք ուղղակի իշխան Թաթքարիձէի տան ներսը։

Բայց այս էլ պէտք է ասեմ, որ ներս մտնելիս պէտք է մի քիչ զգոյց լինենք։ Յատակը աղիւսիցն է։ Այդ ոչինչ։ Դժւարն այն է, որ այդ աղիւսները տեղ տեղ գուրս են թափւած և նրանց տեղերը փորւած փոսերի նման են դարձել։ Աչքերի լաւ աշխատանք է հարկաւոր, թէ չէ Աստուած մի՛ արացէ որ ոտի մէկը նրանց մէջ լնկնի. մտնողին կամ վիզը կը կոտրւի կամ հէնց ոտն ինքը։ Թէպէտե այն էլ ծշմարիս է որ տանտերը շատ ներողութիւն է խնդրում, բայց անշուշտ ամենքիդ յաբոնի է որ ներողութիւն խնդրիլը ոչ ծռւած վիզը կարող է ուղղել և ոչ կոտրւած ոտին մի զարման անել։ Կարքելի է որ այդ վտանգից մարդ աղաւեխ, երբ որ սենեակը լուսաւոր

լինի, բայց ափսոս որ այդ էլ :ը կայ: Թէպէտեւ նա երկու վոքրիկ սպասուհան՝ ունի, բայց գարձեալ մութն է մէջը, որովհետեւ ապահու տեղ ճրագոտ թղթեր են կպցրած այստեղ: Ահա՛ դրա համար է ասած թէ ազոցը գերադաս է ոչժից, եթէ միայն նրան հնարել իմանասոյ: Հնարելու մէջ արդէն եւրոպական առաջին զրագարտողն էլ չէ կարող վրացու հետ համեմատել:

Նատ անգամ եմ տեսել ուրիշ տեղերումն էլ լուսամուտների այդ օրինակ զարդարանքներ: Նատ անգամ եմ տեսել այդ ճրագոտ թղթերն էլ ասղով ծակուած. կամ մի սիրս է լինում դուրս բերւած, կամ խաչ, կամ որ և է զրութիւն, թէկուզ, օրինակ, այսպիսի մի բան՝ «Արջը ծառի վրայ ինչպէս կ'անցնի, ի աւ նանին աօ»<sup>1)</sup>... Բայց դա արդէն ազջկայ գործ պէտք է լինի: Դիցուք թէ ացդպէս էլ է՝ ի՞նչ ապատուհանին բան կայ ացտեղ. Սադմոս կարգալուց յոդնել է, մի ինչ որ վիշտ ծանրացել է նորա սրտին և նա՝ իւր մոռքի զրօսանքի ու անհամ օրը մի կերպով վերջացնելու համար—մօս է նստել պատուհանին, դուրս է քաշել կրծքից գնդասեղը ու ձեռք տւել այդ՝ ճշմարիտ որ միտքը զբօսեցնող՝ պարապմունքին: Անգործ է եղել ու գործ ստեղծել իւր համար, հանգոյն առածին թէ և զուր նստելուց ի զուր աշխատելը գերագաս է»:

Թաթքարիձէի այդ սենեակում դրւած էին միմեանց հանդէպ հրկու երկայն թախտեր: Այնպիսի մի մաքուր թաղիք ու գորգ էր փուած նրանց վրայ, որ ամեն անգամ երբ իշխանուհին վեր էր կենում նրանց վրայից՝ նորին պայծառափայլութեան պայծառափայլ սոսի ամեն մի պայծառափայլորէն շարժւելուց այնպիսի մի սիրուն թող էր ենում, որ մարդ նայելով չէր կշաանում: Այս երկու թախտի միջում, արևելեան կողմի պատի մէջ, երեւում էր ատամները թափւած մի պառաւ կնոջ բաց բերանի նման՝ ներսից և դրսից միի կեղոտի ծածկւած՝ անշնորհք և այլանդակ բուխար (վառարան): Այստեղ ու այնտեղ, իբրև մենեակի զարդ, վեր էին ածած զանազան իրեր, օրինակ՝ Ղարաբաղի ցեխոտ սպիտակ կոշիկներ, բերանը կոտրած, պղնձի թունգանոց, ճենճոս մոմակալ, սղնձի թէկամանի մէջ եփած, հոտած խոտ, զուրգելի կտորանք և այլն և այլն:

<sup>1)</sup> Վրաց ազգալին լաւանի երգի մի կտոր: Ծանօթ. թարգ.

## II

**Զ**ը կարծէք, ընթերցող, թէ այդ տունը պատկանելիս լինե  
աղքատի մէկին ու այդ պատճառով այդքան անսրտացաւ կերպով  
բարձի թողի եղած. ոչ, դորա տէրն ունի քսան ծուխ բաւական  
ունեոր գիւղացի, այնպէս որ մօս տասը սայլ էին լծում նորա օգ-  
տին, ոչխար մեծ քանակութեամբ ու հարիւրի չափ ձի, որ ճորտե-  
րից պակաս արժէք չունի մեր լուսաւորւած պարոնի աշքում: Այդ  
նորա շնչաւոր հարստութիւնը Համբենք հիմայ անշունչը. երկու  
լաւ հասած այզի և հարիւր ցիսուն օրավար գետին: Այդ ճորտերից,  
ձիերից և վարելահողերից բաղկացած կարողութիւնը մեծ բան  
կը գառնար այն մարդու ձեռքում, որ կ'իմանար նրանց դուրս կանգ-  
նեցնելու կերպը: Հասկա ինչո՞ւ է ընկած նա այդպէս անշահ, կը հարցնէ  
զարմանալով կարդացողը: Նորա համար որ վրացունն է, կը պատաս-  
խանեմ ձեզ, լիովին համոզւած՝ որ մի սիրուն ապացոյց ներկայացրի:

Այս՝ այն շնորհքով տան մէջ վրացի էր կենում: Այսոեղ ապ-  
րում էր, քաղցր և անվրդով, մի քաւասուն տարեկան մարդ, իշ-  
խան Լուարսաբ Թաթքարիձէն, իւր անբաժանելի լծակից իշխանուհի  
Դարեջանի հետ:

Իշխան Լուարսաբ Թաթքարիձէն մի լաւ պարարտացած, հին  
վրացի էր, կլոր —ներեցէք այս դարձւածիս համար—ինչպէս մի լու-  
գերացրած կարկանդակի: Ազնւազարմի տեսք ունէր նորին պայծառա-  
փայլութիւնը. գլուխն այն ասովիձան հաստ, որ կարծես թէ նրա  
ծանրութիւնից անւի գնդի նման թանձր վիզը ուսերի մէջն  
էր խրւած. կարմիր թուրաշի խնձորի նման վարվուոն թշեր, երեք-  
ծալ վազր եկած՝ տռփանք ներշնչող փափուկ կզակ, միշտ արիւնով  
լիքը խոշոր աչքեր, ինչպէս վիզը շւանով հուպուած մի մարդու  
մօս. վրած, գուրս ընկած, պատուական ու պատուելու արժանի փոր-  
կարծլուկ ու ճենձով լիքը, մազոտ ձեռքեր. կարճացած հաստ ուներ,  
ահա՛ այսպէս էր ամբողջապէս և մաս մաս վեր առած իշխան Լուար-  
սաբի երկնքից ներշնչած հոգու» թանկագին զարդարանքը: Այդ  
ներշնչած հոգին» ոչ մի տեղ չէր երևում, կարծես թէ հանգել էր.  
այն ասովիձան ցիր ու ցան էր եղել նա իշխանի լուսափայլ ճարպի  
մէջ: Վրացի մարդը ոչ քամու բերածն է ուզում, ոչ տարածը: Զը

լինի՞ թէ այն ներշնչած հոգին, քամու տեղ ընդունեց մեր իշխանը։  
Ուսումով, Աստծու ողորմութեամբ, ուսում չունէր նա։ Ուսում  
որ ունենար խօ ացդքան էլ պարարտ չէր կարող լինել նա։ Սովորա-  
կան երեսոյթ է տեսնել, որ ինչ ժամանակ մարդուս հոգին բարա-  
կում է՝ մարմինն է փարթամանում, իսկ երբ հոգին է ծաղկում՝  
միաբ հալում։ Այդ պատճառով էլ ասում են թէ նիշար և բարա-  
կացաւոս մարդիկ աւելի խելօք են լինում։ Կարծեմ հէնց այդ պատ-  
ճառով մեր Լուարսաբն էլ շատ չէր վայ տալիս իւր գլուխը որ ան-  
ուսում էր մնացել։

— Դա մի ժամանակակից ախտ է, — ասում էր նա այնպիսի մի  
վշտալի եղանակով որ կարծես թէ ուզում էր ամբողջ աշխարհը  
ազատւած տեսնել այդ ցաւից։

Բայց իրաւացի էր նորին պայծառափայլութիւնը։ Նորա կար-  
ծիքով մարդս մի յատակը պոկւած կարաս էր, որի մէջ պէտք է ամեն  
Աստծու օր ածես ուտելիք և խմելիք ու երբէք չը կարողանաս նրան  
լըցնել։ Նորին պայծառափայլութիւնը տեսնում էր հէնց իւր գլխի  
վրայ իւր պայծառափայլ խելքով, որ մարդս այդ իւր կոչումը առանց  
ուսումի էլ շատ լաւ է կատարում, նամանաւանդ մի տէր ջոկի և ճոր-  
տերի։ Ճորտերի, որոնք այդ ջոկից ոչնչով չեն զանազանուում։

— Ժամանակը փոխւեց, — ասում էր նա յանձախ, հոգւոց հա-  
նելով։ Ժամանակը փոխւեց։ Եղացը, ինչ որ այդ սատանական  
ուսումնարանները հնարեցին, վրացի մարդու բարօրութիւնը  
պրծաւ գնաց։ Էլ գոյն չը մնաց մեր երեխաների վրայ... Ուտելով  
նրանք բա՛ն չեն ուտում, խմելով խմում։ Էլ ի՞նչ մարդիկ են նրանք։  
Գի՞ր գիտեն։ Թէ ես գիր չը գիտեմ է՛ մարդ չեմ ա՛յ, գդակ չու-  
նիմ գլխիս ծածկած ա՛յ։ Մի՞սս է պակաս թէ ինչու։ Դիրն ինչ տղա-  
մարդու բան է, դա աղջկաց պարապմունք է։ Ափսո՞ս հին ժամա-  
նակ, ամե՞ն բան իւր տեղն էր, ամեն մարդ իւր չափն հասկանում։  
Ափսո՞ս... Դո՞ւ էիր՝ լաւ ձի, լաւ հրացան, աջող ձեռք ու պատ-  
ւական մարդ։

Ե՛հ, սիրելի Լուարսաբ, գիտեմ որ մաքրասիրս ես, ինչպէս  
ամեն մի հին վրացի, բայց ի զուր ես երանի տալիս հին ժամանա-  
կին։ Հապա որ չը գիտես էլ թէ ի՞նչն է խոկապէս երանելին հին  
ժամանակինը։ Մի՞թէ ձի հիմաց էլ չը կայ. մի՞թէ հրացանը հիմայ

Էլ նշանին չի դիսցնում. աջող ձեռք քիչ կա՞յ: Հիմայ էլ կայ այդ ամենը, բայց չը կան այլ ևս այն սիրոբ, սրտի այն ջերմութիւնը, այն հոգատարութիւնը կալածքի համար, որ զիտէին լաւ ձին ու լաւ հրացանը լաւ գործերի համար բանեցնել: Առաջ մարդն էր զարդ տալիս ձիուն և հրացանին, իսկ հիմայ ձին ու հրացանն են մարդուն զարդարում: Լաւն էր հին ժամանակը, բայց ոչ էլ Բեսարիոն Գաբրաշւիլիի հետեւալ խօսքն է անարդ. Մի ունեմ-ը հազար ունէի-ց լաւ է: Այդ ասենք ու լեզուներս կծկենք, թէ չէ...»

Թէսկետև Լուարսարը ացպիչս նեղանում էր նոր ժամանակի այդ ախտի պատճառով, բայց այնուամենայնիւ նորա գէմքը մի առանձին տիմարութեամբ ժպտում էր առնեն օր: Ասած է. «Եզր եղան հետ որ կապես, կամ գոյնը պիտի փոխի կամ բնութիւնը: Այդ առածը ես ոչ մի տեղ այնքան իրականացած չեմ տեսել, ինչպէս իշխան Լուարսարի տանը: Նորա անգին լծակից իշխանուհի Գարեջանը ծիշդ իւր մարդու երկրորդ կողն էր և էին երկոքեան մի հոգի, մի մարմին, ինչպէս հրամայում է Սուրբ Գիրքը: Եւ այն էլ ինչպէս. միւնոյն կլորութիւնը, միւնոյն լրարարութիւնը, միւնոյն ծիծաղդկոտ գէմքը և համարեա թէ միւնոյն տիմարութիւնը: Այդ երկու սիրասուն ճնճղուկները՝ մի հոգի—մի մարմին գարձած՝ ասդրում էին մի գարմանալի քաղցրութեամբ, հեռու աշխարհիս անհամ աղմուկներից: Հէնց որ աքաղաղը խօսէր՝ երջանիկ ամուսինների աչքերը արդէն պլատացած էին. Գարեջանն իսկոյն վեր կը թռչէր, իսկ Լուարսարը, այդ քնքշացած Լուարսարը, մի մի անգամ մի քիչ ծուլանալ էլ զիտէր: Ու զղակի անկողնից, կրւճքն այնպէս քրքրւած, դուրս կը զլորւէր թախտի վրայ, մի տեսակ հեալով, ախ ու վախ անելով և էլ սատանան զիտի թէ ինչ օյններով... Նատ էր պատահում որ մինչեւ ճաշ ուտելը նա մնում էր այդ մեղկ ու անհամ գրութեան մէջ:

Վրացիք ասում են թէ ում մարմնի վրայ որ առատ մազ լինի գուրս եկած, նա երջանիկ կը լինի: Եւ իրաւ է. Հէնց գորա համար են այնքան երջանիկ բոլոր անասունները: Իսկ եթէ այդ սուտ է՝ հապա էլ ինչո՞ւ են մերժնցից շատերը անասութիւն անել վորձում: Նորա համար որ անասունները երջանիկ են լինում, և երջանիկ են՝ որովհեամ մարմնի վրայ շատ մազ ունին:

Լուարսաբի ամբողջ մարմնի համար ի՞նչ կարող եմ ասել. սակայն նորա կրծքի համար կարող եմ պնդել, թէ այն աստիճան թանձը էր այնուեղ խոզի մազի պէս պինդ բուսականութիւնը, որ կասկածաւոր հոգևորները լաւ ապաստան կը գտնէին այնուեղ ահի տարին, բայց... բայց ի՞նչ. մի՞թէ Լուարսաբն երջանիկ չէր: Այնքան արեշատութիւն թո՞ղ այս տողերի գրողին հասնի, ինչքան որ նորա հասակակից իշխանազուններ երանի էին տալիս նորա կենցաղավարութեանը: Միանց հէնց նորա մարմնի մազը բաւական էր մի դժբաղդ մարդու նախանձը վառելու, եթէ միւս բոլորն էլ մի կողմ թողնէինք: Եւ ի՞նչ էր պակաս Լուարսաբին. գո՞յն թէ միս: Մի՞թէ մտածողութիւնն ու հոգսը կ'անհանգստացնէին նորա քունը կամ ախորժակը կը կապէին, ինչպէս մի հասարակ մարդուն: Գոյնը լաւ, միսը տեղը. ուտել, խմելն և քնելը—խօ էլ ասել չի ուզի: Էլ դրանից աւելին ինչին է պէտք վրացի մարդուն, նրան, որ իւր բաղդն ու դժբաղդութիւնը իւր մարմնի մազով է չափում և որի համար բնութիւնը կարգադրել է որ իւր օրերը ճանճ քշելով անցկացնէ:

Զը լինի՞ թէ վիրաւծրւեցար, ընթերցող: Ի հարկէ որ այո՞ւ այսուեղ չը կաց ոչ սիրահարութեան ճարպիկութիւն, ոչ մարդասպանութիւն, ոչ անցոս աղջկաց ախ ու վախ, ոչ ջրի մէջ ընկնել,—մի խօսքով այն ամենը ինչ որ շնորհք է տալիս մի զւարճացնելու համար զրւած շարադրութեան՝ այսուեղ գոյութիւն չունի: Կը նեղանաս, ինչ ասել կ'ուզի, բայց այս էլ պէտք է քեզ իմանալ, ընթերցող, որ զրւածքիս հեղինակը ընթերցողներին զւարճացնելու համար չէ յատկացրել իւր չնշին աշխատանքը: Ես կամենում եմ որ այս զրւածքը մտածել տայ կարգացողին և եթէ ցաւելու բան ունի հէնց այդ պատճառով ցաւի, որովհետեւ մտածողութիւնն ու վշտակրութիւնը անբաժանելի քոյրեղբայր են: Ես կամենում եմ որ ընթերցողը ցաւի ոչ թէ նորա համար, որ սա զւարճալի չէ, այլ նորա համար որ սա մտածողութեան մէջ գցի նրան: Եթէ այդքան յաջողւթիւնը անբաժանելի քոյրեղբայր են: Ես կամենում եմ որ ընթերցողը ցաւի ոչ թէ նորա համար, որ սա զւարճալի չէ, այլ նորա համար որ սա մտածողութեան մէջ գցի նրան: Եթէ այդքան յաջողւթիւնը այս իմ աննշան աշխատութեան, ես այլ ևս զրանից աւելին ոչ ուզում եմ և ոչ ուզեցել, իմու վշտացած ընթերցողը նոկ եթէ կը չաջողութիւն: Ես գոնէ կը միսիթարւեմ նրանով որ «զուր նատելուց զուր աշխատելը գերազաս է»: Արքան անողետք մարդ պէտքական է.

շինում ու շինել այս օրհնւած առածը. ե'ս էլ թող նրանց մէջ լինեմ...

Երբ որ կուարսաբը վերևը նկարագրւած վայելչութեան մէջ էր լինում՝ մի կատարեալ մահ էր նորա համար, երբ մէկը խանգարում էր նորա քէվն ու մեզկութիւնը, այսինքն թախտի վրայ այնպէս ծիծաղելի կերտով զլոր-մլոր գալը: Անմիտ ժողովուրդն ասում էր թէ նա հիւր չէր սիրում, բայց մի՞թէ դա առաջ էր գալիս նորա ժամանութիւնից: Ամենաին: Մի՞թէ գձնութիւնն ու վրացին կարող են միմեանց հետ հաշուել: Մի՞թէ սառուցն ու կրակը միմեանց չեն կլանի: Հիւրին նա ասում էր այն պատճառով, որ սախուած էր լինում վեր կենալ ու շորերն հաղնել: Բայց վերինալն էլի ոչինչ, այդ այնքան էլ չէր դժւարացնում նրան. հաղնելն էր նորա հոգեհանը: Ամրող ամառն այնպէս կ'անցկացնէր, որ շապկից ու նորա ընկերից զատ ոչինչ չէր մօտեցնի իւր մարմնին. Զմեռն էլի շապկի վրայ մի մուշտակ էր զցում, եթէ միայն մի մեծ հիւր չէր, ունենում, ասենք օրինակ՝ գաւառապետին: Այն միջոցին, որին որ սոյն զրւածքն է վերաբերում, խիստ մեծ անձնաւորութիւն էր գաւառապետը: Հիմայ է որ, ինչ որ այդ անտեր ուսումն առաջ եկաւ, գաւառապետին ոչ ոք մեծ մարդու տեղ չէ դնում. թէ չէ առաջ, օ՛, ինչքան մեծ էր նա:

Բայց Դարեշանը այնքան ծոյլ չէր, ինչքան կուարսաբը. այդ բանի մէջ, պէտք է մարդն ուղիղ խոստովանի, նրանք միմեանց չէին նմանում: Աւրեմն հիմայ մենք անենում ենք որ նրանց գոյնը մէկ էր, բայց սովորութիւնը տարբեր: Աչքը բաց անելուն պէս նա վեր էր թռչում թախտից, կապում ճակատը, փաթաթում մի չթի շորով, վրան զցում չթի գերիան (երբեմն, շոապելուց, շուր տւած էր հագնում), բորբկ տոերը չտոերի մէջ կոխում և—հայդէ—ուղղակի գէպի բակի խրճիթը, որտեղ տիրում էին ինքնիշխան ծաւաները, այսինքն բարկութեամբ զեղուն սրտով հազիւ հազ շունչ քաշում: Թէ զարմանալի և թէ ծիծաղելի էր մեր իշխանուհու այդ օրինակ մի անհանգստութիւն: Այդ ահապին քթոցի նման լքցւած և կլորւած կինը յաճախ մնում էր առաւօից մինչև կէսօր ոոի վրայ և թելի կծիկի պէս զլորում դէս ու դէն: Նա պարապ չէր, ինչպէս երեսում է. անտեղ մի բռնցքի հարւած կը տար կարի

վրայ կուացած փոքրիկ աղախնին, այստեղ՝ գլխին կը չմիացներ հին-  
շորի կտորների մէջ փաթաթւած մռուս փոքր ծառացին, որ յորան-  
ջելով ու ծոյլ ծոյլ մաքրում էր երեկոյեան համար գեռ ևս երեկւա-  
նից ճրագուռած մոմակալը. մի տեղ մէկից կը խոռվէր, ինքն էլ չը  
գիտէր թէ ինչու, միւս տեղ մի ուրիշին մի լաւ կը խացտառակէր,  
դարձեալ առանց իմանալու թէ ինչ պատճառով. կ'անիծէր, կ'ա-  
նարգէր, կը յանդիմանէր — մի խօսքով ինչ որ ամբողջ գիշերւայ մէջ  
հաւաքել էր՝ բոլորը թափ կը տար իւր ստորագրեալների վրայ ու-  
յետոյ յոդնած և ուժից ընկած տուն կը վերադառնար. բայց եթէ  
ճանապարհին պատահէր նորից փոքրիկ աղախնը՝ դարձեալ մի քանի  
հարած կը շնորհէր նրան, «գետինը մտնեմ» էլ աւելացնելով եթէ  
լաւ քէֆով էր՝ և այնպէս ուժասպառ կը զլորւէր դէպի սենեակը  
որտեղ ուումբի նման փեւած իշխանը դեռ ևս շարունակում էր իւր  
թախտի վրայ զլոր — մոր գալը ուհամարում էր, եթէ ամառւայ  
եղանակ էր, առասաւաղի ճանճերը: Մի անգամ՝ նրանք մի խօսո  
ուշադրութեան արժանի վէճ սկսեցին: Այդ էր ամառւայ մէջերքում,  
մի շատ տոթ օր, երբ Դարեկանը, աւարտելով վերեւը նկարագրւած  
իւր ճանապարհորդութիւններից մէկը և սրա նրա գլխին թրմիաց-  
նելը, քրտինքի մէջ քամւած՝ մտաւ սենեակը: Լուարսաբը նայեց և  
հէնց որ տեսաւ որ իւր կնօջ կարմիր թշերից քրտինքը ծործորում  
էր կաթիլ կաթիլ՝ — մի կատարեալ գոհունակութեամբ ասաց իւր  
սրում: Վա՛ւ ընտանիքի սիւն է, երախտաւոր կինարմատ է:  
Փառքդ մեծ, Տէր, որ այզպիսի մէկին հանդիպեցրիր ինձ:

Այդ ասաց ու մի կողքից շուռ եկաւ միւսի վրայ իւր բաղադրութիւնը ու Ասածուց ու կնօջից միշտ ջնորհակալ Լուարսաբը: Այդ շուռ  
գալը նշան էր թէ նրան մի որ և է բան դուր էր եկել:

— Որտեղ էիր, ցաւդ տանեմ, որ այզպէս յոդնել ես, — հարց-  
րեց նա իշխանուհուն:

— Ինչպէս թէ որտեղ, ջանի՛դ մատաղ լինեմ ես, օջախ է,  
տուն է, կազք է, չէ՞ որ մտիկ տալ է հարկաւոր, ցա՛ւդ տանեմ ես:

— Այդպէս, ի՞մ Դարեկան, ա'յզպէս, հոդուդ մեռնեմ ես. կին  
լինելն էլ հէնց ա'ցդ է նշանակում:

— Հապա՛, — վրայ բերեց գովասանքից խրախուսւած իշխանու-  
հին. պէտք է այզպէս տամաշք դարձած պառյու դալ ծառայող-

ների մէջ, թէ չէ ուտելուց զատ էլ ոչինչ չեն շինի. ծառաներին հսկել է հարկաւոր:

—Հապա՛, հապա՛:

—Նատերը չը գիտեն թէ ինչպէս կառավարեն նրանց:

—Չը գիտեն, հապա՛, չը գիտեն, որ գիտենան իո լաւ բան կը լինի, հապա՛:

—Երբեմն հարկաւոր է լինում հէնց անոնդ տեղը նրանց յանդիմանել: Որ մի լաւ էլ խայտառակես, վատ չի լինի: Այ ես խայտառակում էլ եմ, անիծում էլ եմ; բարկանում էլ եմ—ինչո՞ւ, որպէս զի ահ ու պատկառանք ունենան, թէ չէ Աստուած հեռուպահէ...

—Աստուած հեռու պահէ... ի հարկէ...

—Սրանք ճորտեր են. թէ որ վարձւած էշի պէս մի անգամ կանգ առնեն, էլ որ հունի դադանակով էլ վեր տաս՝ ոտը չես կարող փոխել տալ, թէ որ առաջուց խրատած չունենաս:

—Ի հարկէ' պէտք է խրատած պահես, —պատասխանեց կնոջ իմաստութեան վրայ հիացած Լուարսաբը—ի հարկէ' վարձւած իշի պէս կը կանգնի:

—Մի տաս՛, ցաւդ տանեմ. ինչ որ ես ասացի՝ ոո՞ւտ է:

—Սուտ ինչո՞ւ կը լինի. շա՛տ ձիշտ է: Քո չափ կնոջ երազին էլ պէտք է հաւատալ, —դուրս տուեց առանց մտածելու Լուարսաբը: Ինքն էլ չը գիտէր թէ ացդ երազը որտեղից մոցրեց խօսակցութեան մէջ:

Երկուսն էլ լոեցին: Լուարսաբը աչքերն յարեց առաստաղին. այնտեղ խումբ խումբ ճանձեր էին նստած: Դարեջանն սկսեց բրդի գուլբազի գործելը:

Մի փոքր ժամանակից յետոյ Լուարսաբը ձայն տւեց:

—Դարեջան, հապա թէ խելօք կին ես, իմացի՛ր, հրե՛ն այն տախտակի վրայ քանի՛ ճանճ կայ:

—Ո՞րտեղ:

—Հրէ՛ն առաստաղի տախտակի վրայ:

Դու մի ասիլ որ այն անիծւած Լուարսաբը երկուսի լուռ եղած ժամանակը այն ճանճերն է եղել համարելիս: Դարեջանն ինչպէ՞ս կարող էր գուշակել:

— Քանի՞, հարցրեց Դարեջանը Համբերիր մէկ համարեմ:

— Այդպէս խօ ես էլ կարող եմ գուշակել: Թէ մարդ ես, այնպէս իմացիր:

— Այնպէս իմանա՞մ: Դէ լաւ, երեսուն հատ կը լինի:

— Եատ անշնորհք ես, չիմացար:

— Հապա քանի՞:

— Քանի՞, ասե՞մ... չէ՛, չեմ ասի:

— Ասա՛ էլի, թէ գիտես:

— Թէ ես մարդ եմ, քառասուն պէտք է լինի: Անշնորհքը դու ես, իմացաք:

— Հրամա՞ն քեզ, իմացա՞ր... համարել ես, ինչպէս որ անցեալ օրն արիր. այդպէս խօ ես էլ կարող եմ իմանալ:

— Դու չը մեռնես, այն պատւական հօրս գերեզմանը վկայ, որ չեմ համարել:

— Հապա ո՞րտեղից գիտես թէ քառասուն է:

— Ո՞րտեղից. այնտեղից, որ բանականութիւն ունիմ:

— Բայց մի՞թէ ես զուրկ եմ՝ բանականութիւնից:

— Դու էլ ունիս, բայց մարդու խելքին կնոջ խելքը կարող է հասնե՞լ: Ես ենթադրեցի որ քառասուն պէտք է լինի:

— Իսկ եթէ քառասուն չ'եղա՞ւ:

— Տուգանքի ենթարկիր ինձ:

— Ուրեմն համարե՞նք:

Մարդ և կին սկսեցին ճանճերի համրելը: Բանից դուրս եկաւ, որ ցիսունից աւելի էին նրանք:

— Իմացա՞ւ, ասաց մի առանձին շեշտելով Դարեջանը. իմացա՞ւ: Խե՛լք ունի այս իմ սկարոնս, նորա համար իմացա՞ւ:

Լուարսաբն ամաչեց, մի քիչ դժւար տեղն ընկաւ:

— Թռել են, թէ չէ քառասուն հատ էին, — ասաց տխմարը իւր գլուխն արդարացնելու համար. հաւատա՛ որ թռել են:

— Աւելի լաւ թէ թռել են. չէ՞ որ աւելի պակաս պէտք է մնացած լինեին հիմայ: Այսուեղ ցիսունիցն էլ աւելի է դուրս գալիս հիմայ:

Լուարսաբն ընկճեց, նա զղջաց իւր անմիտ վարժունքի համար:

Որպէս զի իւր որոգայթ լնկնելը աննկառելի անէ, նաև առամբները կրճացնելով, որին իշխանուհին ժպտալ էր անւանում, ասաց.

—Աստուած անիծի՛, այդ բնաւ մոքովն չ'անցաւ, չէ՞ որ չորս անգամ համարել էի:

—Թէ՞ որ չէի՞ր համարել:

—Այդ ի՞նչ խօսք է, որ համարած չը լինէի՝ Սողոմոն իմաստունը իր չէի որ այնպէս գուշակէի: Խնչպէ՞ս թէ չեմ համարել—այ Աստուած անիծի՛—սխալեցաց թէ չէ անպատճառ: Կը յաղթէի քեզ: Ես ու իմ Աստուած՝ կը յաղթէի, հոգիս:

Ասաց և յաղթութիւնը տանուլ տւած Լուարասբը շաքարի պէս քաղցրացաւ յաղթութիւնը տանող իշխանուհու համար:

—Թէ չէիր համարել, առ սատանայ—պատասխանեց նոյնպէս ժպտալով իշխանուհին:

—Խօ կոտրեցաց, հոգի՛դ ուտեմ, էլ ի՞նչ ես ու գումա:

—Ողջութիւնդ ու երջանկութիւնդ, ի՞մ սիրունիկս. ուրիշ ինչ պէտք է ու զինամի:

—Դարեջան.. ձայն տւեց Լուարասբը սրտապակաս ու ամա-

չած—Դարեջան... թէ ինձ կը սիրես, «սիրունիկ» մի՛ կանչիր ինձ:

—Խնչո՞ւ, ցաւդ տանեմ; ինչո՞ւ;

—Եմ հասակով մարդուն չի սազում, հոգուդ մեռնեմ: «սիրու-

նիկ» փոքրիկ շանը կ'ասեն, մի՞թէ դա մարդու լացեղ անուն է:

—Եւ մի՞թէ զու իմ շնիկը չես: Զե՞ս էլի: Ես այդ առաջին անգամն եմ լսում քեզանից, ասաց հողոց հանելով Դարեջանը, մտածելով որ եթէ նա այսօր շնիկ լինելուց է ձեռք քաշում; վաղն էլ մի ուրիշ բանից կը քաշի:

Լուարասբը զիլսի լնկաւ, որ նորա սիրաը ցաւացրեց և այն էլ իզուր տեղը. որպէս զի նորա շուռ եկած սիրաը հանգստացնէ, ասաց առամները կրճացնելով.

—Հա՛, ցաւդ տանեմ, հա՛. քո շնիկդ եմ, հապա ի՞նչ եմ:

—Ի՞նչ շնորհալի կին-արմատ է եղել այս օրհնածի որդին—ասաց նա իւր մոքումը—ի՞նչպէս մի լաւ աշբդի նման սազացրեց իմ շնիկ լինելը... ի՞նչ լիզւի տէր է... ի՞նչպէս յարմարեցրեց:

Խնքն էլ ուզեց մի ացգալիսի փաղաքշական բառ գտնել, բայց հէսց որ մի ացգալիսի դժւար տեղն էր ընկնում, իսկոցն միտն էին

գալիս լաւ զուրդէլ, թարթի զօշ, սխսորով արտալայ և այնու Հապա ացդպիսի բաների վրայ մտածելիս էլ ինչ փաղաքշական խօսքնը տուեղծէ մարդու Բայց Լուարսաբը էլի մի լաւ աղի խօսք սաշցցրեց.

— Իսկ զու զիստս իմ. ի՞նչն ես — հոգուս կոտեմը, սրտիս տարխունը, խելքիս — հապա ի՞նչն ասեմ — թէ կուզ աղը եղի՛ր հա՛: Ասա՛, լա՞ւ ասացի թէ չէ, թէ այն պատւական ու անւանի հօրդ հողին կր սիրես: Լաւ չը սազացրի՛:

Դուքս տուեց ացդպէս և, ի նշան իւր գոհունակութեան, կրծտացրեց ատամները՝ իւր շնորհքի վրայ հիացած Լուարսաբը: Դարեշանն էլ շատ ուրախ էր: Յաճախս էին ացդպէս իրանց ժամանակն անցկացնում մեր ամուսինները: Երանի՛ նրանց, լնթերցո՞ղ...

## III

Լուարսաբն էլ զիտէր Ժառաներին ահ տալը, ինչպէս ինքն էր տում: Ճիշդ է որ մի քիչ ծով էր, բայց չէ՞ որ այն ահագին կալւածին էլ հսկել պէտք էր: Այդ կալւածքի հոգատարութիւնը երբեմն նրան սթափեցնում էր ու ստիպում թախափից վեր թռչել: Այն ժամանակ պէտք է տեսնէիք թէ որչափ սիրուն էր մեր Լուարսաբը: ոտաբորիկ, զալմուխի կսպոյտ զլիսարկը զլիսին, կարմիր շապիով ու նրա անբաժանելի լնկերով, զզգզած կրծքով, ուռած փորով, շիրուխը ձեռին՝ մօսենում էր տմբտմբալով պատշամբին ու կանչում քնից թանձրացած ձայնով իր կառավարիչ Դաթօին:

— Դաթօ՛, միաը բերել ես բազարից թէ չէ (այն զիւղում շուկայ էլ կար):

— Հրամեր էք, ցաւդ տանեմ:

— Ի՞նչ կոոր է:

— Զալազած:

— Իսկ խորւածացո՞ւն:

— Սուկի եմ գտել, ցաւդ տանեմ:

Հազւագիւտ մարդ է սա, — կը մտածէր ինքն իրան ձորսերի տէր Լուարսաբը: Յետոյ կասէր Դաթօին. ապրի՛ս իմ Դաթօ, ապրի՛ս. թէ մարդ մոռանայ, Աստուած չի մոռանայ պարոնի արած լաւութիւնը. ապրիս. զու իմ աջ ձեռքն ես, սկի՞նդ ձեռքս:

Դամթօն գլուխը քորում էր ու անշնորհք կերտով ժպտում՝ այդ գովասանքները լսելով:

—Պարտէզպանը կանանչի բերե՞լ է, հարցնում էր դարձեալ պարոնը:

—Բերեց:

—Տարխուն իս կայ մէջը:

—Կայ:

—Վարո՛ւնգ:

—Վարունգ էլ կայ:

Լուարսաբն ուրախացաւ. եթէ այնուեղ մի թալսո լինէր, գոնէ նա մի անգամ կը զլորւէր նորա լրայ:

—Ուրեմն առւնս լիքն է եղել, —ասաց պարոնը մի առանձին հաճութեամբ:

—Ե՞րբ է պակտառթիւն եղել, ցաւդ տանեմ, տանդ մէջ որ հիմայ լինի...

—Ազգպէս, սիրելի Դամթօ՛, պարոնի օջախի պատիւն ու անունը պէտք է անձնանւէր ճորտը աշխարհի առաջ բարձրացնէ, ապրի՛ու Դատարկ էլ որ լինի՝ դու պէտք է ասես թէ լիքն է: Դու փորձւած մարդ ես, ամեն բան դիտես:

—Այս հասակի մարդ քո ձեռքումդ եմ գարձել, ցաւդ տանեմ, մի՞թէ կարելի է որ չիմանամ:

—Հիմայ մէկ այս էլ հարցնե՞նք, —մոածեց մի քիչ յետոյ հոգատար Լուարսաբը. —սացերը ճանապարհ ես զրե՞օ:

—Ճանապարհ զրի, ցաւդ տանեմ, հիմայ արդէն բաւական տեղ գնացած կը լինեն:

—Ի՞նչ տեղ ուղարկեցիր:

—Արտը, ցաւդ տանեմ:

—Քանի՞ հատ է:

—Չորսը պարոնի և ասաը ճորտերի բաժնի համար:

—Ի՞նչու ճորտերինը տասնըհինգ հատ չէ:

—Տասնըհինգ հատ մենք, երեկ լծած չենք, ցաւդ տանեմ, այսօր ինչպէս կարող էինք լծել:

—Տասնըհինգ հատ պէտք է լինէր, առօ՛ ինչո՞ւ չը լծել տւիր: Ես չը դիտեմ, պէտք է տասնըհինգ հատ լինէր: Ի՞նչպէս կարելի

էր: Պէտք է պարոնին ծառացեն. ուրեմն ես էլ պարոն չե՞մ համարւում... լսւա՞ծ է այդպիսի բան... փի՞է, տասնըհինգ հատ պէտք է լինէր: Ես նրանց ցոյց կը տամ որ ես պարոն եմ ու նրանք ճորտեր:

Ճիշտ որ երբէք տասից աւելի լծւած չեր եղել, էլ ի՞նչն էր ստիպում Լուարսարին այդպէս առանց այլեայլութեան շարանալ: Դաթօն էլ ոչ մի կերպ չեր կարողանում բացատրել. նա սկսեց ուշի ուշով զննել իր տիրոջը, թէ արդեօք չէ գժւել նա: Ի՞նչ ատուղ էր մեր Լուարսարը որ գժւէր է... Այդ սուտ խոսվելու պատճառները նա արդէն իր զլսումը շարած ունէր: Նա էլ, ի՞նչպէս իր թանկագին իշխանուհին, ունէր իւր որոշ հայեացքները ծառալողներին ու ճորտերին կառավարելու մասին:

—Գիւղացիներին պէտք է այդպէս հուալ տայ պարոնը, ասում էր յաճախ զիւանագէտ իշխանը. այդպէս է պէտք, որպէս զի ամեն Աստծու օր նրանք վախ ունենան. թէ չէ նրանց որ խոզի կծողների պէս ոտիդ նստացնես՝ զլսիդ կը բարձրանան քիչ քիչ: Հապա՞ ահն է ծնում սէրը:

Ի հարկէ, սիրելի Լուարսար, ի հարկէ:

Բայց ամենեւին չեր հասկանում մեր երջանիկ իշխանը, որ այդպիսի անհիմն ու սուտ բռնկումների մասին բոլորովին ու ըիշ կարծիք ու եզրակացութիւն է կազմում զիւղացի մարդը: Ե՛հ, ընթերցող, ու եզրակացութիւն է կազմում զիւղացի մարդը: Ե՛հ, ընթերցող, զու ինչ կ'ուզես ասա, բայց այդ ամուսինները համոզւած էին որ եթէ փորները կուշտ ունէին՝ զրանով պարուակն էին իրանց՝ այդ տեսակ ճորտերին՝ լաւ կառավարելու ընդունակութեան:

Այսպիսի մի տխմարութեան մեր մաքրասիրտ իշխանը ասում էր ծառաներին՝ «ահ ուտացնելու: Նա համոզւած էր, որ այդ ահ տալլը այնքան անհրաժեշտ էր օջախի համար, որքան անհրաժեշտ էր ուտել-խմելլը մարդու համար: Այդ պատճառով էլ, երբ նա վերադառնում էր իր սենեակը, ասում էր կնոջը մի ինքնազոհ սրտով.

—Հազի՞ւ հազ ճանապարհ զրի սայլերը (մեր Լուարսարը սուտ խօսել էլ էր սիրում), հազի՞ւ հազ: Աստուած անիծի ճորտերին. մինչեւ որ զլիներին չը կանգնես ու չը զոռաս, ոչ մի բանի ձեռք չեն զիւղնի: Այսպէս էլ բան կը լինի: Ես որ չը լինէի՝ արտերս դաշտումը կը փառէին:

— Ազգակ'ս, ցաւդ տանեմ,—քաջալերում էր նրան Դարեջանը—այդպէս է պէտք: Այն օրից, որ Եւան Աղամին փորձանքի մէջ գցեց, Աստուածանից պատուէր ունենք որ մեր քրտնքով հաց ուտենք:

— Այդ խո իշխանների համար չէ ասւած, — վրայ բերեց Լուարաբը:

— Այն ժամանակ իշխաններ ո՞վ էր տւել:

— Ինչպէս չէ, կային. մեր ցեղը այն ժամանակներիցն է սկսում:

— Խնչ ես ասում: Այնպէս ես խօսում, կարծես թէ ոչինչից տեղեկութիւն չունիս: Այն ժամանակ Աղամից և Եւայից գատ ոչ ոք չը կար. Աղամը խո իր զլիսի վրայ թաւազութիւն (իշխանութիւն) չէր անի:

— Ճիշտ է, այդ բոլորվին միտս չեկաւ: Ասա խնդրեմ, ա՛ կին, այն ինչ ծառ էր, որից որ պառող գողացան նրանք:

— Ծառ բարւոյն և չարի:

— Հիմայ այնպիսի ծառ էլ չը կա՞յ արդեօք:

— Ինչպէ՞ս չէ. ասում ին որ Առուսաց թագաւորի այդում մի ոսկի սենեակ կայ ու նրա մէջն է այդ ծառը՝ յակինթի տերեներով:

— Զմրուխտի տերեներով կը լինի, ուղղեց Լուարսաքը:

— Այո՛, ճիշտ զմրուխտի, զմրուխտն էլ տերեւի պէս կանաչ է. այո՛ զմրուխտի, մրգի տեղ էլ աղամանդներ ու յակինթներ բռւսած վրան:

— Երանի՛ ինձ ուտայնին. ա՛յ համը նրա մէջը կը լինի, հա՛:

— Ո՞վ կը թողնի որ մօտենաս. աւազից շատ գօրք կայ նրա բոլորտիքը ժողոված:

— Հապա սուլթանն ի՞նչպէս է գողանալ տւել:

— Ահա թէ ինչպէս. մի գեւ է եղել որ արծւի կերպարանք է առել, ծածուկ տուն մտել, պոկել է մի մեծ աղամանդ, կուլ տեղ ու նորից դռւրս ծլկւել:

— Տարե՞լ է ու տարե՞լ. ի՞նչ սասանայ է եղել:

— Հապա՛, տարել է: Յետոյ թագուհին ներս է զնացել տեսել որ մի մեծ աղամանդ պակասել է. նա իսկոյն իմաց է տւել ուտաց թագաւորին: Առուսաց թագաւորն էլ իսկըն զլիսի է ընկել որ դա սուլթանի բանը պէտք է լինի, պատերազմ է սկսել նրա հետ. և այդ պատերազմն է որ մինչև հիմայ էլ դեռ չի վերջացել:

— Ուրեմն նա մարսեց էլի՛:  
 — Ո՞վ զիտէ, զեռ պատերազմը շարունակում է:  
 — Երանի՛ ես էի գողացել:  
 — Խօ կը խեղահի՛ն քեզ:  
 — Ես որ չէի՛ իմաց տայ. ես կուլ կը տացի, խօ չէին կարող  
 փորս ճղել:  
 — Կը ճղէին էլ ու ամեն բան էլ կ'անէին:  
 — Որտե՞ղից պէտք է իմանացին թէ ինձ մօտ է:  
 — Կարծես թէ չէին կարող մի զրբաց գոնել ու հարցնել նրան:  
 — Ճի՛շա, այդ միտս չեկաւ: Կա՛ց, ի՞նչ եմ ասում. Ագամի կե-  
 րածն ի՞նչ եղաւ, մարդ ասի՞:  
 — Ասում են որ մի կղզու թագաւոր գտել է ու պահել իւր  
 մօտ:  
 — Հապա մի նայի՛ր Ասուծու զատաստանին. աւելի լաւ չէ՞ր  
 լինի որ ես գտնէի:  
 — Յետոց ո՞վ կը թողնէր բեղ մօտ: Երկու հարիւր տարի է որ  
 ցամարի թագաւորը կախւ է մզում կղզեցիների հետ:  
 — Եւ չը կարողացաւ յետ խլել մինչև հիմայ:  
 — Ո՞չ:  
 — Վա՛յ, վա՛յ, վա՛յ, նա էլ մի զօրեղը չէ եղել:  
 — Ի հարկէ զօրեղ է. էլ ի՞նչ թագաւոր է որ զօրեղ չը լինի:  
 — Հիմայ որ երակը թագաւորը ողջ լինէր, անպատճառ յետ  
 կը խլէր. խիստ մեծ տղամարդ են ասում նրա համար:  
 — Ի հարկէ նա կը խլէր, բայց ո՞ւր է նա:  
 — Մեղք չէ որ նա հիմայ հողի տակ փթէլիս լինի և քո  
 աեգը Դաւիթը կենդանի՞:  
 — Տես է՛ այս փուճ աշխարհի վատամարդութեան. Թամար  
 թագուհին պէտք է գետնի տակ լինի՞ և քո հարս Ելիսարէթը  
 արելին նայի՞:  
 — Ե՛հ, այդպէս են այս փուճ աշխարհի բաները, — վրաց բերեց  
 Լուարսաբը և այնպէս հողոց քաշեց, որ եթէ մոմ լինէր առաջը  
 դրած՝ կը հանդցնէր:  
 Առաւոնները, երբ որ մեր Լուարսաբն և նրա կին իշխանուհի  
 Դարեջանը կը կատարէին իրանց գէտի օջախն ունեցած պարտակա-

նութիւնները (ինչպէս որ տեսանք վերը՝ նկարագրած նմուշից), կընսումէին չայի ու կ'ուռչէին փառաւորապէս տաք ջրից, ինչպէս որ ասում է մեր հասարակ ժողովուրդը։ Մի փոքր միջոցից յետոյ, երբ նրանք արդէն մի երկու խելացի վիճաբանութիւն ունեցած էին լինում (վերև նկարագրւած տեսաներից), հասնում էր ձաշելու ժամանակը և նրանք, «հին սովորութեան» համեմատ մի լաւ կշառնում էին։ Լուարսարը յոգնած ու ախորժալի ձայնով արտասանում էր. «փա՛ռք քեզ, տէ՛ր, որ այսպէս կշապրիր ինձ»։ Այդ ասելուց յետոյ խելոցն սուփրից» զլորւում էր թափափ վրայ ու մի կատարեալ գոհանակութեամբ իւր կենցաղավարութիւնից, խփում էր ձեռքը փորին ու մի առանձին պարծենկոտութեամբ արտասանում։ «Ժէ որ ես անուսում եմ... ինչպէս են ասո՞ւմ... քաղցացութիւնից դուցէ ստամոքսս հալում է... դրսիցն էլ նկատուում է գուցէ փորիս վրայ... Փորձի համար մի անգամ էլ խփում էր ձեռքը փորին որպէս զի ստուգէ թէ նա ճիշտ լի՞քն է արգեօք. և երբ որ համոզւում էր թէ նա լաւ լցւած է արդէն, ձիու նման կրնացնում էր առաները և մեծ բաւականութեամբ զարձեալ առում։ Այս՝ լուարսարը անուսում է, զրա համար էլ այսպէս քաղցած է։ Ճաշից յետոյ քնել, յետոյ զարթնել, ապա թէ խմել, յետոյ լնթրել, վերջն էլի նոյն ցանկալի քունը մանել — այսպէս քաղցր ու անվլորով էր անցնում այդ երկու անարատ հոգիների կեանքը այս փուճ աշխարհում։ Փուճ աշխարհ, որը այսպէս ոչինչ տեղեկութիւն չունէր նրանց քը լինելու մասին, ինչպէս որ նրանք բնաւ ոչինչ ըլ զիտէին Աստծու ստեղծւած այդ փուճ աշխարհի մասին։

## IV

Այս զրութեան մէջ և խելքի իմաստալի վարժութեան մէջ անց էր կենում առաւօրը։ Ճաշից յետոյ, երբ արդէն նրանք մի լաւ քնած պրծած էին լինում, երբ երեկոյեան զեփիւով՝ բաց անելով իւր թեւերը՝ հովանաւորում էր ալզու ցանկի երկարութեամբ տարածւող առերածածկ բակը — իշխանուհի Դարեջանը Դրամացում էր փոել այդ հով տեղում մազը թափած մի զորդ ու նասում վրան որպէս մի ինքնահաւան նորահարս՝ զլուխը կապած, յոնքերը հուպ տւած

ու զպլուած։ Կուարսաբն էլ՝ իւր անբաժանելի հիբու խը ձեռքին՝ ներքեւ էր իջնում, քոշերը բորիկ ոտներին, յաճախ միմիայն կարմիր շապկով և աւելի յաճախ էլ կապոյտ, ծիծաղելի կերպով մի կողմը կոտրած, կալմուխի գլխարկով. իջնում էր ու գրօնում, յետ ու առաջ գնալով այդ սուերածածկ տեղում։

Երեկոցեան պահը—ինչպէս սր ձեզ յայտնի է—հիւրին յատկացրած ժամանակ է մեր գիւղերում, նա մանաւանդ կախեթում։ Ինչ ասել կ'ուզի, որ ինչ որ այս անիծւած լուսաւորութիւնը ներս ընկաւ մեր աշխարհը՝ քիչ թէ շատ մեր ազդ հին, գովելի սովորութեանն էլ իսանգարեց. այնակէս որ հիմայ երթեմն մշայն կը պատահես լուսաւորւածներին այդ միջոցին հիւր գնալիս, մինչդեռ երեկոցեան պահը մեծ պատիւ էր վայելում հին ժամանակ։ Այդ պատճառով էլ երեկոները մեր Դարեջանը ազգպէս զուգուում էր և մինչև իսկ— ներեցէք այս խօսքիս համար յետոյքի բարձն<sup>1)</sup> էլ սարքում։ Ան միջոցին, որի մասին ես զրում եմ սոյն տողերը, զեռ ևս կրիսովին չը կար. և եթէ լիներ էլ՝ ո՞վ կը հասցնէր մինչև այն զիւղը ացն «իւրկերի» թագուհուն։ Ամեն ոք լաւ զիտէ, որ լուսաւորութիւնը ծանր քայլով է մանգալիս, նամանաւանդ մեզանում. ուրեմն էլ ինչպէս կարող էր հասնել այն զիւղը այլքան շուտ այն անւանի օխարարուան։ Ճիշտ ասած, այդ լուսաւորւած կրիսովինը չէր կարող տեղաւորւել զիւղերի շատ նեղ փողոցներում, եթէ հասած էլ լինէր այնտեղ։

—Աստուած կեանք տայ մեր աղջիկ-պարոնին, —ասաց նրան մի անգամ կաւերը ուղղելով ու շրթունքը ծռմուելով մի լաւ կազմւած բով սիրուն գեղջկուհի—նորահարս։

—Այ Աստուած քեզ պահի, ի՞մս Բարպահէ, ի՞նչպէս ես, խօ լա՞ւ ես,—հարցրեց իւր կարգին Դարեջանը, բայց այն եղանակով որ իշխանակուն պատիւը մազաչափ անգամ փոքրացած չ'երեաց։

—Էլ ի՞նչպէս պէտք է լինեմ, ցաւդ տանեմ. մեր գոմէշը մտած է եղել ձեր այգին և վերակացուները այս երկու օր է բռնել պահել են այնտեղ։ Հիմայ այս եմ պազատում, ցաւդ տանեմ, որ ներել

<sup>1)</sup> Դեռ ես շատ տարիներ սրանից առաջ Վրաստանում սովորութիւն կար գործածել ալժմեան նորադիւտ համարւած առուրմիւրը։

տաս մեղ այդ պատահմունքը ու դրա փոխարէն կը խնդրեմ Արարիչ Աստծուց քո արևշատութիւնը:

— Ի՞նչ. ուզում ես ասել որ գուրս թողնել տամ:

— Այո՛, թէ արևդ կը սիրես. հիմայ մեր աղաչանքն էլ այդ է, աղջիկ պարոն:

— Ի՞նչպէս կարելի է, սիրելի Բաբալէ. ճիշտ է մեր մէջ խնամութիւն էլ կայ, բայց չէ որ յետոյ ամբողջ գիւղը իրարու կ'անցնի: Ամենքն էլ կըսկսեն նոյնն անել:

— Մի՛ մերժիր, թէ պարոնի արևշատութիւնը կը սիրես. դրա փոխարէն ես պատրաստ եմ ձեզ ամեն տեսակ ծառայութիւն անել. ահա՛ հիմայ էլ մի կապ մետաքս եմ բերել ձեզ համար ու թէ որ Աստուծով ու ձեր ողորմածութեամբ էլի մի բան կարողանանք — ձեր ականջ-կտրած ճորտերն ենք:

Բաբալէն դրսպանիցն հանեց մի կապ մետաքս և շնորհեց իշխանուհուն: Իշխանուհին վերցրեց, իւր տակը դրեց ու ասաց:

— Մի՛թէ առանց այդ էլ իմ կարողութեան համեմատ չէի աշխատի քեզ համար: Լուարսա՛բ, լուարսա՛բ, — ձայն տւեց նա իւր մարդուն որ մի քիչ այն կողմը յետ ու առաջ էր քայլում ու մի աչքածակի հայեացքով անտղում գեղեցիկ նորահարսին:

Լուարսաբն եկաւ:

— Փա՛, վերակացուները բռնել են Բաբալէի գոմեշն և սա խնդրում է քեզ որ արձակել տաս:

Լուարսաբը նայեց նորահարսին, որ սովորութեան համեմատ երեսը շուռ տւեց մի կողմը: Լուարսաբը կրծտացրեց իւր ատամները բաւականութիւնից ու աշխատում էր ժպտալ:

— Գոմեշը...

— Հա՛, գոմեշը, — վրայ բերեց Դարեջանը. ա՛յ մի կապ մետաքս էլ է բերել քեզ շնորհելու:

— Ուրեմն լա՛ւ... Դաթօ՛, այ աղայ — Դաթօ՛, — գոռաց նա գնա՛ վերակացուներին ասա որ իմ սանամօր գոմեշն արձակեն թէ չէ կերծամ քար ու քանդ կանեմ բռլորը:

Ասաց, մի անգամ՝ դարձեալ կրծտացրեց ատամները ու գնաց հպարտ հպարտ՝ որպէս մի յաղթանակը տարած մարդ՝ դարձեալ յետ ու առաջ քայլու:

—Այ Աստուած զրանից էլ աւելի մեծութիւն ու պատիւ տայ ձեզ, բախտաւորացնէ և մի լաւ արու զաւակ շնորհէ ձեզ, որպէս զի ծիծս ուտացնեմ նրան, ձեր ցաւը տանեմ ես, ձեր ցաւը, իմ պարոն ու իմ աղջիկադարոն:

—Տեսա՞ր,—ասաց իշխանութին, երբ որ Լուարաքն այն կողմը գնաց. —տեսա՞ր ինչ սպառնալիք ուզարկեց. ասում՝ Երանո՞րը քար ու քանդ կ'անեմ:

—Իշխանութիւն ունի, ցաւդ տանեմ ու նրա համար:

—Ազդ խօ այդպէս է, բացց մե՛ծ անուն էլ ունի հանած զիւղում: Վեր ա՛ռ, օրինակ, իմ տեգը Դաւթին. նրան ոչ ոք մարդատեղ չի դնում:

—Է՛հ, ցաւդ տանեմ, մի՞թէ նրանց ուր կարող է ձգւել մինչեւ ձեզ, ելիսարէդն էլ թաւաղի որդու կի՞ն է և դո՞ւք էլ:

—Հասպա հիմայ նրան հարցընու. նրա չափ մեծ մարդ այսուեղ ամենեւին չը կայ:

—Նրանց գլխի արևէլ: Երէկ մեր հարեւանի մօտն էի, նրանց աղախինն էլ այնուեղ էր եկել: Խնչոր նա նրանց մասին խօսեց՝ ամենեւին մի աղամո՞զդուց լսւած չէ:

—Խնչ էր ասում, հոգուդ մեռնեմ, ի՞նչ, —հարցընց շտապով ու անհամբեր Դարեւջանը:

—Էլ ինչպէ՞ս թէ ինչ, այն որ՝ խեղճ աղջիկը իւր մատների աշխատանքով հաւաքած փողով մի ։թի գլուխ կապելու էր առել և նա տեսել, խլել է նրանից: Հիմայ նա ունի կապած գլխին: Աղախինի մեղքից չենք կարողանում դուրս գալ, իմ աղջիկ-պարոնի արևէլ վկայ, այնպէս կոտրած սրտով պատմում էր ազդ թշւառականը: Ես, որ ձեր ոսի հողն էլ չեմ կարող լինել, լայեղ չէի անի՝ հօ՛րս հոգին վկայ:

—Ո՛չ, ո՛չ, տես ի՞նչ անիծւածն է եղել: Էլ ինչպէս է դրանից յետոյ նա իրան թաւաղի որդի անւանում: Խլելը դեռ ոչինչ, այդ—ինչ ասել կ'ուզի—աղջիկ-պարոնի կամքիցն է կախւած. աղախինն էլ իմա է ու ։թի կապելուն էլ: Բայց աղախնու ։թի փաթաթանը գլխին դնելն է խաղը-խայտառակութիւնը: Հիմայ նա՛ էլ իրան մարդատեղ է դնում էլի՛, ա՛յ հոգե՞մ նրա զլուխը: Նա՛ էլ մեր մէջն է խառնւում ու իրան թաւաղի-որդու կին համարո՞ւմ: Էլ ուրիշ բան չի՞ ասել աղախինը:

—Ո՞չ, էլ ոչինչ չի ասել:

—Մի՛ ծածկիր ինձանից, Բաբալէ ջան: Խօ գիտես որ ես քո լաւութիւն ուզողն եմ. թէ էլի բան է ասել՝ ասա' ինձ:

—Ոչինչ չէ ասել, հօրս զերեզանց վկայ. թէ չէ որ ասէր՝ ինչո՞ւ կը թագցնէի:

—Ո՞վ գիտէ, կարելի է դու վախենալիս լինեաւ:

—Քեզպէս ողորմածի մէկը որ ինձ քաղցր աշքով նայելիս լինի՝ էլ ի՞նչ վախի խնդիր կարող է լինեաւ:

—Ես էլ հէնց այդ էի ուզում ասել, սիրելի Բաբալէ:

—Ճշմարիտ է մենք աղքատ մարդիկ ենք, բայց այդքանն հասկանում ենք: Ումից պէտք է վախենամ, քանի որ ձեզ այսուղ ունեմ:

—Ուրեմն էլ ուրիշ ոչինչ չի ասե՞լ:

—Ինձ չը թաղես, որ ամենևին ոչինչ չի ասել:

—Ասած կը լինի:

—Այն միակ, մինուճար որդիս մեռնի թէ բան ասած լինի:

—Ճիշտ, երեխադ ինչպէս է, —հարցցեց մի քիչ յետոց Դարեշանը, տեսնելով որ այլ ևս ոչինչ չէ դուքս գալիս:

—Էլ մի՛ հարցնի, ցաւդ առնեմ, աղջիկ-պարոն. թշնամիդ էլ թող այնպէս չը հիւանդանայ ինչպէս երեխաս է: Էլ ի՞նչ մնաց որ չ'արի, խոսի մէջ չը լողացրի՞, աղօթել չը տւի՞, ձեռքին փող չը կապեցի՞<sup>1)</sup>, բայց ոչինչ չ'օգնեց. Ասուած թող թշնամուդ այդպէս անօդնական պահի: Ինձ սովորացրին որ ձեզ դիմեմ: ասում են որ խիստ զօրաւոր աղօթք զիտէք դուք, ի սերն Ասածու խաթեր՝ օգնեցէք ինձ ու Ասուածանից ստացէք փոխարէնը:

—Ես միայն զլխացաւի ու թունաւորւածի աղօթել գիտեմ. մի՛թէ երեխայիդ հիւանդութիւնը զլխացաւ է:

—Այո՛, արեւդ սիրեմ, զլխացաւ է. քիչ է մնացել որ գլուխը

սուաքացնի:

—Աղջի՛, Լամազիստուլ, ճղաւեց իշխանու հին, զնա՛ գրիշ-

թանաքաման, թուղթ ու թաղիքի տակը որ գրւած նամակ կայ՝ բեր

<sup>1)</sup>) Յօդուած սրբերին

այստեղ։ Ազօթքն ես կը գրեմ, սիրելի բարալէ, զրած թուղթը պէտք է կպցնես այն կողմը, որտեղ որ ցաւ է զգում։ այդպէս թող մնայ երկու երեք օր, թէ որ զիմացաւ է՝ իսկոյն կ'անհետանայ։

— Տեսնում էք, ընթերցող, իշխանուհի Դարեջանին ես անու։ առւմ էի համարում ու նա այդպէս բաներ է իմացել։ Հմայ միտա եկաւ որ զրա Ելիսաբէթ հարալ, որի մասին արդէն երկու տեղ չի շեցինք, ծածուկ լուրեր էր տարածում թէ Դարեջանը ջագու անել է իմանում ու թէ այդ պատճառով էլ Աստուած նրանից խռովիլ է ու որդի չէ տալիս։ Խնչպէս հաւատանք այդպիսի զրարսութեան։ Սակայն Ելիսաբէթը երդումատուաք էր լինում թէ այդպէս է։ Բաց էլի չեմ հաւատայ։ Հարալ՝ ինչպէս որ յայտնի կը լինի ձեզ մեր օրհնւած բարքերից—Հարսի թշնամի է։ Միթէ միայն այդ բամ բասանքն է արել Ելիսաբէթը Դարեջանի մասին։

Այդ միջոցին շունը, որ պառկած էր մի քիչ այն կողմ ու խրել էր քիթը հողի մէջ, հաշեց. բաց հէնց որ աչքը բացեց ու տեսաւ եկող երկու կանանց՝ նորից ձայնը կորեց ու վնթվնթալով կօխեց էլի իւր քիթը ոսներով փորած հողի մէջ։ Դարեջանն էլ գլուխը բարձրացրեց այդ ձայնի վրայ ու տեսաւ իշխանուհի Ելիսաբէթին և նրա սրտապակաս, գլխի փաթաթանից զրկւած աղախնին։

Դարեջանը ոտքի կանգնեց։

— Համեցէք, սիրելի հարս, — զարձաւ նա դհպի Ելիսաբէթը, հազիւ մեզ միտգ ես բերել։

— Դու չը մեռնես, ժամանակ չէի ունենում։ Հայ այս, հայ այն, տուն է, տեղ է՝ խօ գիտե՞ս հրամանքդ։

— Այս կողմն համեցէք, այս կողմն աւելի հով է, — պառա սիրեց Դարեջանը։

— Միւնոյնն է, — ասաց Ելիսաբէթն ու դուրս պոկելով ոտից կոօյի չուսոմիքը, նստեց զորդի վրայ, Դարեջանի կողքին։

— Ուրիշ ինչպէս էք, սիրելի հարս. լաւ է արդեօք իմ տէզը Դաւիթը, — սկսեց զարձեալ Դարեջանը։

— Լաւ ենք, — պատասխանեց Ելիսաբէթը։

— Տէղըս տա՞նն է։

— Միթէ այդպիսի մի ժամանակ կալւածքի ու վարուցանքի տէր տղամարդը տանը կը նսոի. արդէն երկու օր է այնտեղ է, — ասաց

Ելիսաբէթը մի առանձին նշանակութեամբ ու ակամայ աչք զցեց Լուարսարի վրայ, որ զբօսնում էր յեռ ու առաջ գնալով և որի տոներին էր կախ վարուցանքն էլ ու կալւածն էլ:

Դարեհանը վիրաւորւեց: Նա ենթադրեց որ Ելիսաբէթը դիտամբ մորակը Լուարսարի կողմն ուղղեց:

—Ի հարկէ, ով որ մի մարդ չունի, որին որ կարողանայ տան կառավարութիւնը յանձնել և ով որ այնպէս է մեծացել փոքրութիւնից որին ոչ արեւ կարող է այրել և ոչ ցուրտը մրսացնել—նա տանը չի մնայ, իմ Լուարսարը այդպէս չի կարող անել:

—Մի՞թէ ես նրան ունեի աչքի առաջ,—սկսեց Ելիսաբէթը:

—Ես էլ այդ պատճառով չեմ խօսում՝ վրայ բերեց Դարեհանը. ես միայն այն էի ուղում ասել թէ զեռ ևս իմ Լուարսարը այնպիսի մի նեղութիւն չէ տեսել որ գիւղացութիւն անի:

—Գիւղացութիւն անե՞լ... ինչ էք հրամայում, ի՞մ հարս Զէ, ձեր արեւը գիտենաց: Մի՞թէ ով որ բերք ժողովելու ժամանակ տանը չէ նստում՝ կարիքի մեջն է կամ գիւղացութիւն է անում ու, վարձկան մշակի նման հնձելիս, ճորտերի հետ քրտինքարքամ լինում: Զէ, դուք չը մեռնէք: Վեր առէք, օրինակ, ձեր տէղըին. մի՞թէ նա աղքատ գիւղացի է կամ աղքատ երեւում երբ որ արտունն է լինում. ամենեին, ձեր արեւը: Մշակներն այնուեղ հնձում են, իսկ նա ինչպէս որ վայել է թաւաղի որդու պատւականութեան՝ մի սիրուն բազէ ունի նաև ացրած ձեռքին ու որսորդութիւն է անում: Երէկ երեկոյ էլ, երբ որ ծառան տուն եկաւ, հետք մի խուրջին կաքաւ էր ուղարկել: Ի՞նչ ստորանալու բան կայ այդտեղ, թէ ձեր Աստուածը կը սիրէք: Թագաւորներ են որս անում, մի՞թէ նրա համար ստորութիւն է:

—Զէ, ձեր արեւը, սիրելի հարս, ես տէզրիս վրայ չեի ակնարկում: Մի՞թէ նա էլ Լուարսարի եղբայրը չէ—մի արիւնից ու մի մսից: Մի՞թէ չը զիտեմ որ նա իւր ձեռքերը չի պառաւացնի մանգաղ բռնելով և ոչ էլ այս անտանելի շոքերին կ'ացրւի: Մի՞թէ չը զիտեմ որ իսկական թաւաղի արիւն ունեցող որդին լացեղ չի անի այդպիսի բան. և յիրաւի, ի՞նչ լացեղ անելու բան էլ է. թաւաղի վրայ պէտք է թաւաղութիւն երեայ, շինականի վրայ՝ շինականութիւն:

— ճշմարի՛տ խօսք է, ձեր արելք:

— Ախոր չի կարելի, է՛. լեռն ու հովիտը ո՞վ է հաւասարացրել:

— Ոչո՞ք, ձեր արելք, ո՞վ կարող է Աստուծու հրամանի դէմ գնալ:

Այդ միջոցին Դարեջանը ոտի ձայն լսեց. յետ նայեց և տեսաւ իւր փոքրիկ աղախին Լամազիսէտլին, ձեռքին բռնած մի ինչոր գրած թուղթ և գուշը կոտրած գեղի սրւակ, որ թանաքամանի դեր էր կատարում:

— Ի՞նչ եղար մինչև հիմայ, ո՞վ գիտէ արդէն գնացած է, — բարկացաւ Դարեջանը:

— Դեռ չի գնացել, այստեղ է խրճթումը՝ Թափլուայի հետ, — ուստասիսանեց աղախինը:

— Դէ լաւ, — ասաց Դարեջանն և դրեց թուղթը ծնկան վրայ, սկսելով գրել գլխացաւի աղօթքը: Այդ միջոցին Լուարաբն էլ շալւարն ու ախալուխը հագած՝ եկաւ քաղաքավարի կերպով հարց ու բարով արեց իւր հարսի հետ ու զլորւեց հենց գորգի մօտ եղած կանաչ խոտում: Յետոյ չի բուխի կոթը դէմ տւեց իւր պատւական փորին ու սկսեց զիտել՝ մէջքի վրայ պատկած՝ երկնքի հաստատութիւնը:

Մի լաւ պառկեր էր ներկայացնում այդ խումբը: Կը նկարագրեմ, եթէ ոյժս պատի: Առաջ աղախինից սկսեմ:

Մի ծիծաղելի արարած էր այդ Լամազիսէտլը. մի անշնորհք կերպով պարարտացած, կարծահասակ ու կեղոսա: Հագած ունէր մի կոպիտ չժի զէրիայ, որի գոյնը՝ նրա կեղոսութեան պատճառով՝ անկարելի էր իմանալ: Փէշերը տեղ տեղ գուրս էր ացրւած՝ չափագանց շառ կրակի մօտ կանգնելուց, իսկ ափերը՝ փտած ու գջլուած. պատաճ տեղերից երևում էր զէրիայի տակը շրջանաձև հախարած մի ինչ որ փտած վերմակի կտոր—իբր թէ իւրեկայ: Այս հողը գլխի՛զ, զո՞ւ էլ ես իւրեկայ ուզում: Գլխին ունէր իւր տիրուհու փոխած ու տեղ տեղ դուրս պոկւած չժի փաթաթան: Այդ ծակերից դուրս էին ցցւում գունդ-գունդ՝ մութաքի բրդի նման զզզզւած սև—ներեցէք ասել—անիծու ու չը սանդրւած մազերը: Ուի կոնկները ճեղքուած, ուները ածուխի պէս սև, ձեռքերը թարմ ընկուզի կճեսլից ներկւած, քիթն ու երեսը պղնձների մոռով աղտոտած, — ահա՛ այսպէս էր այն արարածը, որին Դարեջանը

Ա. ամազլիսէուը (գեղեցկուհի) էր անւանում և որը ձեռքերը խաչած նայում էր մազը թափւած գորգին։ Գորգի վրայ բազմած էին երկու պատւական ու հետաքրքիր իշխանուհիք, երկուս՝ բայց տարբեր տարբեր տեսակից։ Մինը պարարտ ու կարմիր, միւսը՝ նիշար ու զեղին։ Պարարտը գլուխը կախ գրում է, նիշարը հետախոյզ աչքով հետեւում է զրոյի ձեռքին, որպէսզի մի կերպով կարողանայ զլխի լնկնել թէ նա ի՞նչ է գրում։ Երբեմն նա աղախնին աչքով է անում ու գլուխը շարժում, ուզինալով հասկացնել նրան թէ ոմի փոքր առաջ որ տիրուհին ասում էր թէ զնաց՝ ո՞ւմ՝ համար էր ասում։ Ազախնն էլ այնտեղից նրան նշաններով զլխի է զցում, բայց նա ոչինչ չէ հասկանում։ Այն ժամանակ փոքրիկ աղջիկը ծածկում է բերանը ձեռքով ու գլուխը մի կողմ շուռ տալիս իբրև թէ իւր խելքում ծիծաղելով որ ելիսաբէթը ճիդ է թափում զլխի լնկնել ու չէ յաջողում և իրք թէ մի կողմից էլ ամաչում է որ չի կարողանում ծիծաղը պահել իւր տիրուհու հարսի ներկացութեամբ։ Մի կողմը խոսի վրայ ախորժանքով ու ծանր շունչ էր քաշում և ուարսաբը՝ մէջքի վրայ պառկած։ ծուխ է բարձրացնում՝ իւր չիրուխից և՝ մինչև որ աչքերում արտասունք չ'երևայ՝ հետեւում է համբերատարութեամբ ծխի վեր ենելուն, որպէսզի տեսնէ թէ կարո՞ղ է արգեօք նա հասնել մինչև ամսկերը։ Այն կողմը, գորգի ծայրին և ցանկի տակ պառկած է, մեր ծանօթ պառաւ շունը՝ կրկին իւր քիթը փորւած հողի մէջ կոխած ու մի ինչ որ ուժից լնկած մարդու պէս աչքերը կուչ բերած։ Ամեն մի աղմուկի վրայ ծանր կերպով բաց է անում նա իւր աչքերը ու մի գժգոհ մարդու նման հէւսում՝ իբր թէ ուզինալով բարկանալ, որ այսպէս շուռ շուռ նրա քունը կոտրում են։ Մի քիչ հեռու սարքւած է մի կեղտուու սամօվար որի կողքին նատած փոքրիկ աղախնից էլ աղասու ու զջլուած փոքրիկ ծառան փշում է, հա՛ փշում նրա մէջ՝ որքան որ ոյժ ունի։ Մերթը լողմերթ ծածուկ նայում է նա այն կողմը որտեղ որ պառկած է այնքան երջանիկ և հանդիսատ կերպով տան շունը, նայում է և կարծես երանի՛ տալիս նրա կենցաղավարութեան ու ասում իւր սրտում՝ երանի՛ քեզ որ շուն ես, երանի՛ ե՛ս էլ շուն եղած լինէ՛ի։

Անպիտան երկրի այդ գարշելի պառկերը ծիծաղելի կերպով ներկաշնակում էր հարաւի հոյակապ երկնքին, նրա խոր ու բաց —

կապոյտ կամարին, որի վրաց պորտապորտ հիսուռմ էր մի միալար գծով՝ սարերի մուգ-կապոյտ շղթան:

Մի քիչ ժամանակ անցկացաւ: Դարեջանն աւարտեց աղօթք զրելը և ուեց թուղթը աղախնին հետեւեալ խրատով՝ ասա՛ թող աջնպէս վարւի, ինչպէս ես իրան ասել եմ:

Ապա շուռ եկաւ դէպի Ելիսաբէթն ու սկսեց խօսակցել: Լուարաբը դեռ էլի մաածում էր ու ծխեցնում շիբուխը:

—Հացի բերքն ինչպէ՞ս է, —հարցրեց Դարեջանը:

—Զեր արել, անցեալ տարւանից քիչ: Զեր աէզրը երկուն սացի յօյս ունի, —պարծեցաւ Նղիսաբէթը:

—Այդ, բարեկամ, լաւ հունձ է: Երեսուն սացը հանաք չէ, մենք էլ կունենանք այդքան, բայց մեր հնձելու տեղերը երկու ձերինի չափ են, —փչեց իւր կարգին Դարեջանը:

—Ի՞նչ էք հրամայում, իմ հարս, մեզանից աւել ինչու պէտք է ունենացիք: Այս տարի մենք մեծ տեղեր ունեինք հնձելու:

—Ինչու, թէ Աստուածդ կը սիրես: Մենք արդէն օգոստոսի կէսին արտերը վառած ունէինք, մինչդեռ դուք սեպտեմբերին էլ չէիք վառել:

—Զէ, ձեր առել, մենք ձեզանից վաղ ենք սկսել: Մենք մեծ վար ու ցանք ունեցանք:

—Ահա՛, սիրելիս, ուզում էք Լուասաբին հարցնենք: Դա տղամարդ է, աւելի լաւ կ'իմանայ: Լուարսա՛թ, ձայն ուեց նա մարդուն:

—Հը, —հարցրեց Լուարսաբը և շուռ ուեց վիզը դէպի իւր կինը:

—Հարսդ ասում է թէ մենք նրանցից պակաս վար ենք ունեցել այս տարի:

—Ե՞հ, ի՞նչ ես ասում, իմ հարս. այս տարի մենք չորս ձեր չափ վար ենք ունեցել (այսպիսի բաներում սարսափելի վշող էր Լուարսաբը) ի՞նչ ես ասում... իմ բերքի չափ բերք ամբողջ Կալսեթում ոչ ոք չէր տօանում, մինչեւ անդամ Վրաստանո մն էլ շատ քչերը կ'ունենան: Կը տեսնես թէ ո՛րքան դէզ կը շարեմ կալի վրաց. այնքան շարեմ, այնքան շարեմ որ... որ... հապա ի՞նչ ասեմ, կ'ուզես տասներկու այս տան չափ - կարծես թէ չէ կարող Լուարսաբը: Փի՛է, վառը՝ իմ վառս էր որ էր: Այս էլ դարձաւ անցեալ տարւայ

պինու հարցը. իմ գինու չափ գինի ամբողջ կախեթում երկու մարդ  
չի ունենայ: Քարթլու կողմերը խօ՝ կէսի կէսն էլ չեն ստանայ:  
Հառածա՞: Թէ որ ասածս ձիշտ չը լինի՝ հապա ո՞րտեղից եմ այսքան  
լաւ ապրում: Ո՞րտեղից. —մի՞թէ ես էլ Աւեանի պէս սայլերս վար-  
ձով եմ տալիս: Ես կարո՞ղ եմ՝ իմ թաւաղական արիւնս անպատճել:  
Հայ խօ չե՞մ ես. չ՞ որ ես լաւ օջախի և ազգի զաւակ եմ...

Դեռ էլի ուզում էր ինչ որ ասել, բայց Ելիսարէթն ընդհատեց  
նրան:

—Իրաւ, իմ տեղը, ճի՞շդ է որ Աւոնը վարձով է տալիս իւր  
ասյլերը:

—Ճիշդ է, հապա՞ ամօ՞թ նրան որ ազգի խախահիչ է զարձել:

—Նիկոլովն էլ է եղել տալիս, —աւելացրեց Դարեջանը:

—Տաղիս է —պատասխանեց Լուարսաբը:

—Վա՛յ, խախտառակւե՞ն նրանք, լաւ ազդի որդիք են եղել  
հա՞, —ասաց Ելիսարէթը:

—Երանի դռնէ թաւաղի որդի եղած չը լինէր, —աւելացրեց  
ցաւած սրտով Դարեջանը:

—Յաւն էլ այդ է որ թաւաղի որդի է, —ասաց վշտաշած  
Լուարսաբը. թաւաղի որդի որ չը լինէր՝ չհանդամը նրա գլուխը:  
Հասարակ գիւղացի լինէր կամ հայ լինէր, էլի ոչինչ. բայց ինձ  
սպանողն այն է, որ նա թաւաղի որդի է: Ի՞նչ վասն կերպով վհաց-  
ւեց ժողովուրդը, ձեր ցաւը տանեմ: այն տեղն էլ հասայ որ իմ  
աչքով տեսայ թէ թաւաղի որդին վարձով սայլեր է մանածում:

—Յետոյ ի՞նչ հօրն ու մօր որդի, —վրայ բերեց Դարեջանը:

—Այդ առա՞ է՞, —ձայն ուեց Լուարսաբը:

—Ի՞նչ պէտք է մարդն այդուես կորցնի իւր պատիւը, —ասաց  
իւր կարդին Ելիսարէթը:

—Սրանից յետոյ էլ ի՞նչով պէտք է զիւղացին և թաւաղը  
միմեանցից զանազանւեն: Դիւղացին էլ է իւր սայլերն վարձի ու-  
զարկում, թաւաղի որդին էլ. նա էլ վարձով է ապրում, սա էլ:  
Ի՞նչով պէտք է զանազանւեն, —հարցրեց Լուարսաբը:

—Ոչե՞ով, ձեր արել, —հաւատացրեց հարսը:

—Ի հարկէ որ ոչչով, —հաստատեց կինն էլ:

—Առված որ մեռնելիս լինէի, սոված եմ ասում, և հարիւր

սայլ ունենացի կապած՝ գլուխս մեռնի թէ ես այբակիսի բան լայեղ  
անէի, իսկ դո՞ւ, իմ հարս:

—Վո՞յ, ինձ գետինը գնես թէ լայնդ անէի. իմ ձեռքովս գլուխս  
կը սպանէի ու լայնդ չէի անի:

—Իսկ դո՞ւ, Դարեջան, —հարցրեց թաւադը:

—Ոչ էլ ես, —ողառախանեց նա:

—Ուրեմն ո՛չ էլ ե՛ս, —ասաց Լուարսաբը այնպիսի մի ձանով  
որ կարծես թէ այդ երեքի կարծիքով երեք աշխարհի բազդ էր  
վճռում:

—Զէ՛, ժամանակը շատ է փոխւել, իմ հարս—երկարացրեց իւր  
խօսքը Լուարսաբը: Ժողովուրդը փշացւեցաւ, արիւնը պղտորւեցաւ:  
Ո՞վ կարող էր մեր ժամանակ մոռքովն անցկացնել թէ թաւադի որ-  
դին իւր գլուխը կը խայտառակի՝ սացլերը վարձով կը տայ: Զէի՞նք  
քարկոծի. զլիխն ողիս չէի՞նք ածի: Բայց ա՞յժմ. —Ասոււած անի-  
ծի՛—զինեվաճառութիւն են անում: Լուած բա՞ն է դա. թաւադի  
որդիքը զինեվաճառութիւն են անո՞ւմ... Ո՞հ, Ասոււած, ինչո՞ւ  
ջրէեղեղ չի գալիս: Հայ են դարձել, ճի՛շդ հայ են դարձել. հիմայ  
միայն այն է պակաս որ արշինը գնեն կռան տակին, գիւղէ գիւղ  
ընկնեն ու զաւ չի՛թ, լաւ չի՛թ» գոռան:

—Այդ էլ կանեն, ձեր արևը, —ասաց Ելիսաբէթը. երանի քանի  
որ ես կամ՝ Ասոււած ցոյց ըլ տայ ինձ այդ ժամանակը:

—Կա՞նեն, զլուխս ըլ մեռնի որ կ'անեն, —վրայ բերեց սրտի  
ցաւով Լուարսաբը. բարեկամ, որ էլ արիւն ըլ կա՞յ. փշացւեցաւ  
արիւնը, պղտորւեցաւ:

—Ճիշտ որ փշացւեցաւ, —վրայ բերեց Դարեջանը:

—Ահա՛ ձեզ մի օրինակ, զիտէ՛ք երէկ Զաքարիայի կինը ի՞նչ  
է արել: Ծառան նրա խօսքից դուրս է եկել... Զէ՞ որ Զաքարիայի  
կինը շատ չար է:

—Այն էլ ի՞նչպէս, —հասուատեց Դարեջանը, սարսափ յայտնելով:

—Ծառան նրան ընդիմադրել է, —սկսեց դարձեալ Ելիսաբէթը—  
նա լնիկը է յստելից, դուրս է պոկել իւր ոտից չը զիտեմ չուստին  
թէ քոշը—երեի քոշը—ու այնքան տւել է նրանով ծառային, որ  
մարմինն ուռեցրել է:

—Թէ Ասոււածդ կը սիրե՞ս, —հարցրեց զարմանքով Լուարսաբը:

—Զեր արել' ը:

—Այս ի՞նչ եմ լսում, ձեր հոգուն մեռնեմ. կարելի է փոքրիկ ծառայի՞ն է ծեծել:

—Ազդ է որ՝ չէ: Փոքրիկին որ ծեծի, այդ ոչինչ չի նշանակում. ես էլ եմ ծեծում, —ասաց Ելիսաբէթը:

—Ես էլ, ձեր արել, ասաց Դարեջանը: Փոքրիկ ծառայ և փոքրիկ աղախին՝ միևնոյն բանն է: Խնչպէս որ մի տանտիկնոջ ամենաբն չի կարելի պախարակն փոքրիկ աղախնուն ծեծելու համար — նոյնպէս և փոքրիկ ծառայի համար:

—Ի հարկէ, —ասաց Ելիսաբէթը. փոքր ծառաներին ծեծելու համար ո՞ւմը կարելի է յանդիմանել: Բայց նրա ծեծւածը մեծ աղամարդ է եղել. մի՞թէ կարելի է ընդունել որ մի կին այդպիսի հասկաւորի հետ այդպէս վարուի:

—Տէ՛ր ողորմած Աստուած, —ասաց երեսը խաչակնքելով Լուարսաբը: Այս ի՞նչ եմ լսում թէ Աստուած կը սիրէք. կինը պէտք է այնպէս իւր զլսից ձե՞ռք վերցնի որ տղամարդուն ծեծի՞: Ծեծը դեռ ոչինչ. ո՞վ կարող է դրա համար տիրոջը պախարակել. նրա տէրը շե՞մ՝ կ'ուզեմ կը ծեծեմ, կ'ուզեմ՝ չէ: Բայց մա՛րդը պէտք է մարդուն ծեծի, կնոջ մասին ո՞վ է այդպիսի բան լսած, ո՞վ է ասում: Աղախին էլ ունի, թո՞ղ ինչքան ուզի ծեծի, այդտեղ չը լայեղ անելու բան չը կայ, բայց տղամարդո՞ւն... Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛:

—Դեռ այդ ոչինչ... ուզում էր սկսել նորից Ելիսաբէթը իւր բամբասանքները, բայց այդ միջոցին չայ մօտ բերին:

—Խոսքներդ չը մուանաք, իմ հարս, ընդհատեց նրան Դարեջանը, բայց չայ համեցէ՛ք:

—Համեցէ՛ք, միևնոյն է, պատասխանեց Ելիսաբէթն ու ձեռք մեկնեց դէսլի գաւալթը:

(Կը շարունակւի)

## Թ Ա Զ Ն Ի Կ

ՊԼԵՇՉԵԲԻՑ

Թարդ. Կ. ԿՐԱՍԻՆԻԿԵԱՆ

Ինչու համար իմ հէդ թռչնիկ,  
Թռչնիկ սիրուն և կայտառ,  
Դու տլդպէս վաղ թռար մեզ մօտ,  
Հեռի օտար մեր աշխարհ:

Բոլոր երկինքն է ամպամած  
Թռւխալ է պատել տրեխն,  
Եւ եղեգնը չոր ու գեղնած  
Քամուց ժեքուում է գետին:

Ահա անձրել. մի նալիք տես—  
Հեղեղի ալես է թափւում,  
Տիրուր է, ցուրտ, և կարծես թէ  
Դեռ գարուն չէ մեղանում:

Ես չեմ եկել ոչ երկնքի,  
Ոչ արևի համար վառ,  
Չոր ու գեղնած եղեգնուտում  
Բոյն չեմ շինի ինձ համար:

Խեղճ տղքատի կը տուրի տուկ  
Ես իմ բոլնը կը շինեմ,

Բարձըրեալըն ինձ լըղել է  
Որ նրան բերկըանք ներշնչեմ:

Երբ որ դաշտից իւր խրճիթը  
Նա դառնալով վշտալի,  
Կը պառկի չոր խոտի վրայ,  
Ես երգս կերգեմ բերկըալի:

Այդ երգը նրան ես բերել եմ  
Ծով-ցամաքից հեռանոր,  
Որը երբէք ես չեմ երգել  
Մարդկանց համար բախտաւոր:

Ես շատ լուրեր կը հազորդեմ  
Մի այլ երկըից երջանիկ,  
Ուր ո՛չ խեղճեր, ո՛չ ունեոր  
Եւ ո՛չ վիշտ կալ, ո՛չ կտրիք:

Այդ երգը նրա կուրծքը լոգնած  
Հաշտութիւնով կը լեցնի,  
Եւ լի յօյսով դէպի Աստուած  
Խեղճ մշակը կը քնի:

## ԾԱՆՐ ՔԱՐԸ

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

### I

Գիւղացի Դաւիթը ծանր հոգաերի մէջ էր: Երեք տարի շաբունակւող անյաջողութիւնները նորա ոյժը թուլացրել էին: Նա իւր բոլոր յոյսը զրել էր առաջիկայ տարւայ վերաց:

Եւ միան նա չէր ծանր դրութեան մէջ: Աբարանպոլի բոլոր գիւղական ժողովուրդը ախ ու վախի մէջ էր:

Ահա երեք տարի էր, որ հունձը չէր հասնում:

Հացը առհասարակ միշտ վնասւում էր մրսելուց, բայց ոչ այնպէս սաստիկ, ինչպէս աց տարիները, իսկ վերջին անգամ կարկուտն էլ վերայ հասաւ ու մնացածը փացրեց:

Գիւղացիները կերել էին հին պաշտրները, ծախել էին անսառների մի մասը և ընկել էին պարաքերի տակ:

— Եւարւել եմ, չը գիտեմ ի՞նչ անեմ, ասաց Դաւիթը իւր հարեանին, որի հետ միասին նստած էին մի երեկոյ իրանց տան առաջ մեծ քարերի վերայ:

— Ի՞նչ կարող ենք անել, Դաւիթ, պէտք է համբերենք, յոյաներս չը կտրենք: Աերեւից ինսամք կը լինի:

— Ախր հողը մշակեմ, վարեմ, ցանեմ, քրտինք թափեմ, մէջքս կոտրեմ ու էլի քաղցած մնամ: Ախր ծոց չեմ, գործից փախչող չեմ, ձրի ուսող չեմ:

— Է՛հ, ացդպէս որ մնածենք, պէտք է գիւղացութիւն չանենք: Զահիլ ես, Դաւիթ, ջահիլ, ես քեզնից մի տասնհինգ տարով մեծ եմ, ամեն տեսակ օրեր եմ տեսել: Աւրախութեան հետ ախրութիւն էլ կայ:

Զահիլ անւանւած Դաւիթը երեսուն և վեց տարեկան մարդ էր։ Նա նոր նոր մարդահաշիւ էր ընկնում; գիւղամիջի անուն էր ախում մ ստանալ; Նա ոչ մի կերպ չէր կարողանում հանգստանալ իւր փորձառու հարեւանի խօսքերից։ Նա ինքն իրան տանջում էր, ինքն իրան ուտում էր։ Եարունակւող անյաջողութիւնը նորան վհատեցնում էր։

—Եղալը, առաջ այսպէս չէր լինում։ Խօսեց զգացմունքով Դաւիթը։ Մէկ մէկ, որ անյաջողութիւն էլ պատահում էր։ այսպէս տնաքանդութիւնով չէր վերջանում։ Ո՞վ էր տեսել հիմիկայ նեղութիւնը, հիմիկայ պարտքերը։

—Ճշմարիտ է, Դաւիթ, առաջ թեթև էլնք պրծնում։ Բայց առաջ հողներս ընդարձակ էր, ուժը վերան, խամացած։ Ամեն տան բաւականաշափ հաց էլ, խոտ էլ էր գալիս։ Եթէ արտից օգուտը պակաս էր լինում, տունը կառավարւում էր տաւարի եկամուտով։ Իսկ այժմ՝ ժողովուրդը շատացել է, ամեն տան վերայ այնքան հող է գալիս, որ միջակ առատութեան ժամանակ կարող է միայն մեզ ապահովացնել։

—Ուրեմն ի՞նչ պէտք է անենք։

—Աստուած ողորմած է, տես ինչպէս հացը լաւ կանանել է ու բարձրացել։ Մի երկու շաբաթ է մնացել մինչև հունձը։ Ասունով բաններս յաջող կը գնայ։

Դաւիթը ուզեց կասկած յայտնել, բայց ինքն իրանից վախեցաւ ու կամացուկ ասաց։

—Մեռնեմ նորա զօրութիւնին։ Նորա ձեռքին է ամեն բան։ Խօսակիցները լոեցին։

Յուլիսի գւարթարար օդը ուրախութիւն էր սփռել բնութեան մէջ։ Գիւղում տիրում էր մի խուլ աղմուկ։ Արօս ուղարկած կենդանիները դարձել էին զիւղ և խումբ խումբ իրանց տէրերի աներն էին քաշում։ Երեխանները ուրախ ուրախ վազգում էին։ Կանացք պատրաստում էին կթելու կովերին և մատակներին։

Դաւիթի սիրու չը բացւեց։ Նա վաս բան էր գուշակում։ Ապագան նորա համար թունաւորւած էր երեւում։ Նա նայեց իւր երեխաններին, ոսից մինչեւ զլուխ նորանց շափեց, նայեց իւր տանը և կարծես ինքն իրան մրմնջաց։

— Ուրեմն զլուիներս ծռե՞նք էլի, մշակութեան գնա՞նք։ Դուրս  
է զալիս, որ, մենք արժանի չենք տան տէր, ինքնազլուխ տղամարդ  
լինելու։ Ուրեմն, այս փոքրիկներին ևս ծառաներ պէ՞տք է մէծաց-  
նե՞մ։ Մեր գիւղերը ծառաների հանքատեղեր պէտք է դառնան  
Աչքներս լո՞յս։

— Տօ, Դաւիթ, ի՞նչ ես այդքան մտածում։ Ես հօ քեզնից հա-  
րուստ չեմ, ես էլ քո օրումն եմ էլի։ Կանանիք հօ չենք։ Աշխարհք  
է, դարդ է, պէտք է հանգարտ տանենք։

— Զէ, զրացի, ինչպէս երեսում է, սա առաջւայ դարդերիցը չէ-  
սորան էլ վերջ չը կաց, սա կազելու է մեր ջանից ու էլ պուկ չէ  
գալու։ Գյուկսդ ծոփ՛ր, խոնարհւիր, սովորի՛ր ամեն բան տանելու,  
ցիշոյներ լսելու, տնիցդ հեռու մեռնելու։

— Ասատւծով, հունձներս լաւ կը լինի։ Խսկ յետովւան համար  
յետոյ կը հոգանք։ Խս գնամ տուն, դարդ մի անիլի։ Մենք չենք։  
Բոլոր Աբարանպով մեր օրումն է։ Խելք խելքի կը տանք, երեխ մի  
բան կը հնարենք։

— Ոչինչ չենք հնարիլ, կոպիտ արտասանեց Դաւիթը։

Դրացու հեռանալուց յետոյ՝ Դաւիթը փոքր ինչ հանգարտուեց։  
Դրացու հանգստացնող խօսակցութիւնը կարծես նորան աւելի վրդո-  
վում էր և կատաղեցնում։

Դաւիթը առողդ մարմնով և ամրակազմ մի տղամարդ էր, ու-  
նէր մի տեսուկ կին և վեց առողջ զաւակներ նա։ Հինգ տարի էր,  
որ հօրից բաժանւել էր և իւր համար աւանձին տուն էր զրել։  
Տունը զբառուած կը լինէր, եթէ վերջին երեք տարիները նորա հոգին  
հանած չը լինէին։ Դաւիթը սոխալւած ծախել էր իւր լծկաններից  
մի զոյգը։ Եթէ անյաջողութիւնը շարունակւէր, նորա տունը պէտք է  
քանդւէր։

Դաւիթի կինը Դշխունը նկատում էր իւր մարդու մտասանջու-  
թիւնը և շատ տիրում էր. աշխատում էր նորան միսիթարել. բայց  
չէր կարողանում։

— Ինչպէս հոգս չանեմ, Դշխուն։ Տունս ձեռքիցս դուրս է զա-  
լիս, լծկանները ծախել եմ, խոտը ծախել եմ, անցեալ տարի գտոիիս  
վերաց եղած-չեղած հինգ արծաթի խաղն էլ ծախեցի... Սորա ծայրը  
ո՞րտեղ է լինելու։

— Ի՞նչ անենք, Դաւիթ, պէտք է հունձին սպասենք, անմեռել  
առգ անելը նսու է: Տեսնենք՝ Աստուած ի՞նչ է յաջողեցնում: Թէ այս  
տարին էլ վատ գնաց—ծախի՛ր իմ ոսկեշարն էլ...

— Քեզ ասել եմ, որ այդ չասես, խօսքը կտրեց նեղացած Դաւիթը:

Դշխունի ոսկեշարը ժառանգական էր, պապերից մնացած, Օս-  
մանլուի հողից բերած: Ոսկեշարը յարգանքով պահում էր:

Դաւիթը ինքն էլ մտածել էր նորա ծախելու մասին. բայց միշտ  
յետաձգել էր:

## II

Անցել էր այդ երեկոյից մօտ մի շաբաթ:

Մի օր առաւօտը մեծ գղրդոց ընկաւ գիւղը: Այն, ինչից որ  
երկիւղ էին կրում ամենքը, կատարւել էր: Դիւղացիներից մեկը լուր  
բերաւ, թէ արտերը ցուրտ է տարել: Մի քանիսը չը հաւասացին,  
որովհետեւ գիւղում գիշերը առանձին ցուրտ չէր արած եղել: Բայց  
պատմողի անկեղծ ցուսահատութիւնը կասկածի տեղ չէր թողնում:

Դաւիթը, որ կարծես օր օրի վերայ հէնց այդ լուրին էր սպառ  
սում, սարսափեց, գունասուեց և իսկոյն ցուրս թռաւ տնից: Նա  
հազիւ լսեց առուի մօտ վարած արտի անունը և վազեց այնտեղ:

Նա խելազարի նման էր առաջ ընթանում: ոչ մի արգելք չէր  
նկատում իւր ոտքերի տակ, ոչ մի վայրկեան չէր մտածում, որ նա  
ուժասպառ կարող է լինել այգափիսի վազելուց:

Ահա հասաւ նա արտին:

Եւ իսկապէս ցուրտը տարել էր: Աւրեմն ուղիղ էր լուրը:

Դաւիթը կամնգ առաւ և մնաց ապշած:

Արեգակը նոր ցուրտ էր եկել և սկսել էր այրել ցրտատար հաս-  
կերը: Երեկուայ առողջ բոյսերը այսօր փոխել էին: Արեգակի տաքից  
ոչչանում էին եղեամի հետքերը: Հասկերը արդէն սկսում էին ծռել  
և կախ լնփնել:

Դաւիթը նայում էր անշարժ, ինչպէս մի քարի արձան: Նա  
կարծես մոռացել էր՝ թէ ինչու համար էր եկել այստեղ: Նորա երեւա-  
կայութիւնը տարան հեռուները:

Այս տիտուր րոպէում յանկարծ նա մոռաբերեց իւր նշանաւած տա-  
րին: Ահա՝ Դշխունը, ապագայ նորա կինը, ինչ ուրախ և զւարթ

աղջիկ է: Դաւիթը հիանում է նորա հրաշալի հասակից, նորա գեղեցիկ մեծ ծամերից... Խնչպէս անմեղ նայում է Դշտունը իւր շուրջը:

—Ահա նա այստեղ էր կանգնած այս առուի մօտ և շէր կասկածում՝ թէ այդ բովելին ես նորան սիրեցի և վճռեցի իմս դարձնելու:

Դաւիթի երեակայութեան առաջ փոխում էին պատկերները: Բովոր նորա կեանքը նկարւեց նորա առաջին անջնջելի գծերով: Ահա և նորա նոր տունը, որի վերայ այնքան նեղութիւն է քաշել. բայց նա շինուել է, արդէն հաստատել և... Այդուղ երեակայութիւնը կանգ առաւ և Դաւիթի աչքերը, որ բովոր ժամանակը դարձրած էին դէալի արտը, սկսեցին նորից անողել հասկերը:

Կորած էր բովորը, նայել ի՞նչ հարկաւոր էր:

Դաւիթը տարաւ ձեռքը մի քանի անգամ երեսով: Կարծես նա ցանկանում էր ձեռքով հեռացնել իրանից նորա առաջ զրւած տեսարանը:

—Օօհ... դուրս թռաւ նորա ձնշւած կրծքից:

Նա ուշը եկաւ, շարժւեց տեղիցը, մօտիկացաւ բոյսերին և կորեց նոցանից մի քանիսը նայելու:

Յուրաը խիստ էր կպել, հասկը փչացել էր:

—Կատարւելուն կատարւեց, ասաց նա բարձրածայն և ինքը իւր ձայնից սարսեց:

Այժմ նա մտաբերեց ոսկեշարը, որի ծափելու մասին նա չէր էլ ուզում առաջ մտածել: Այժմ հերթը նորան էր հասել: Դաւիթը աշխատեց ոսկեշարը մոռանալ, ուրիշ բանի վերայ մտածել:

Նա նայեց շուրջը:

Հեռւից մօտենում էին երեք ճանապարհորդներ, մրգավաճառներ, որոնք զնում էին ոտքով, իրանց յետեից քաշելով մրգերով բեռնւած ձիերին: Դոքա Աշապարակի, Էջմիածնի կողմերից անցնում էին Ալեքսանդրապոլ: Գոյսանից մէկը զւարթ երգում էր:

Դաւիթին սպանում էր մրգավաճառի երգելը. Նա պատրաստ էր նորան ծեծել: Երգը շարունակւում էր և մէծ ոգևորութեամբ: Ահա երգիչն մօտեցել է և շուտով պէտք է անցնի Դաւիթի մօտից:

—Հէր օրհնած, զսպելով իրան՝ ասաց Դաւիթը, խզմտանք ունեցի՛ր, մէկ լոիր է:

—Քեզ ինչ՝ թէ նա երգում է, ասաց ճանապարհորդներից մէկը.

— Զէք տեսնում, որ տունս քանդւել է, որ ցուրտը մեր հացը տարել է, մրմնջաց Դաւիթթը:

— Սուրբ հոգւով միմիթարւես, կատակաբար սկսեց ճանապարհորդը. բայց ինքն իւր ասածի վերայ զղջաց և մօտենալով Դաւիթին՝ ասաց.

— Կը բաշխես իմ խօսքի համար: Տերանիցս դուրս թուաւ:

Դաւիթը ցոյց տեց փչացած արտը: Ճանապարհորդները նայեցին և ախուր հեռացան:

Դաւիթը ինքն իրան չէր կարողանում հաշիւ տալ՝ թէ ի՞նչ է անում: Ի՞նչու է այստեղ կանգնած, ինչո՞ւ չէ գնում տուն: Նա տեսնում էր, որ իրանից դուրս զօրութիւններ կան, որ իրան կաշկանդել են և չէր իմանում՝ ինչ անի, որ յետ գայ, արթնանայ և մի դրական բան անի:

— Անցեալ երեք տարին ես հանգիստ էի, մոտածում էր նաև ձշմարիտ է այն ժամանակներն էլ տիրեցի. բայց այսպէս սաստիկ չէի յուզւել: Ի՞նչ անեմ: Պէտք է գնամ, պէտք է տուն դառնամ: Պէտք է խոնարհւեմ, զլուխ ծռացնեմ...

— Դաւիթ, Դաւիթ, կանչեց նորան մի ձայն:

Դաւիթը նայեց կանչողին: Դա նորա դրացին էր:

— Ի՞նչ կայ, հարցրեց Դաւիթը:

— Փառք Աստծու, պատասխանեց դրացին:

Դաւիթը չը լսեց դրացու խօսքերը:

— Տուններս քանդւեց էլի, հառաշեց Դաւիթը: Ո՞րո՞ղից ես գալիս:

— Գայլաթաղի արտերից:

Դաւիթը կարծես մթափւեց: Նա սաստիկ զբաղւած լինելով առուի մօտ եղած արտից, մօռացել էր Գայլաթաղը, ուրտեղ գտընելում էր նոցա արտերի մեծ մասը:

— Հա, Գայլաթաղում ի՞նչպէս է, հարցրեց նաև շոասպով:

— Փառք Աստծու, ողջ և առողջ է: Ցուրտը մի խազով է անցկացել և շատ վնաս չէ տվել:

— Ճշմարիտ, յուզւած բացականչեց Դաւիթը:

— Ճշմարիտ, հաւատացրեց դրացին:

Հազիւ լսեց վերջին խօսքը, Դաւիթը թողեց իւր դրացուն,

որ զարմացած նայում՝ էր նորա վերայ, և խելագարի նման վազեց դէպի Գայլաթաղը:

## III

Գայլաթաղի արտերից վերտարձող գիւղացիներ շատ կային: Դաւիթը նոցա ուրախ դէմքերից արդէն հասկացաւ, որ իւր դրացու ասածը ուղիղ է: Բայց մաքումը դրեց, որ այլ ես ոչ ոքի :ը հարցնի և խեկալան տեղումը իւր աչքերով համոզւի:

Արտերը ամենեին չէին վնասուել: Հասկերը հպարտ բարձրացել էին լայնատարած գաշտում և թեթև քամիից ծածանում էին: Արեգակը խաղում էր հասկերի վերայ և նորանց տաքացնում: Կեանք էր բուրում, կեանք էր զգացւում շուրջը:

Դաւիթը մոտաւ արտերի մէջը, գդակը հանեց, երեսը խաչակնքեց և յատոյ միայն ժպտաց: Նա ականջ էր զնում այն բարակ շշունչին, որ տիրում էր արտերում: Հարծեսնա ուղում էր ունկնդիր լինել արտի շնչառութեան, նորան աճելուն: Նա հոտոսում էր արտից բարձրացող բարակ շոգին:

Նա մօտենում էր այս ու այն աչքի լնկնող հասկին և նրանց համբուրում: Յանկարծ նա մի ինչ որ բան մտաքերեց և սկսեց լնդ հակառակին սպոտել ամենափոքր և ամենաթոյց բոյսերը և խոնարհւելով դէպի նոցա հասկերը՝ նորանց համբուրել:

Հանդարաւած սրտով, հանգիստ հոգւով նա սկսեց տուն գատնալ: Ճանապարհին պատահեց նա մրգավաճառների մի ուրիշ խմբի, որ գնում էր լուս իւր ճանապարհը: Դաւիթը լիշեց փոքր ին առաջ տեսած խումբը, մտաքերեց երգը և այժմ ցաւեց, որ նորանց նա սահպել էր լսելու:

Այժմ նա կը ցանկանար, որ ամենքը երգէին:  
—Բարով ձեղ, բարի յաջողում, ասաց նա մրգավաճառներին:  
—Աստծու բարին, պատասխանեցին նոքաւ  
—Ինչո՞ւ էք լուս, ինչո՞ւ չէք մի երգ երգում, հարցրեց նա ուրախ-ուրախ:  
—Երգել չինք իմանում, տսաց նոցանից մէկը հեղնութեամբ:  
—Ինչպէ՞ս թէ չէք իմանում:  
—Երգելներս ։ի դալիս, դարդ շատ ունենք:

Դաւիթը չու զեց իմանալ չ'երգելու պատճառը և ծռեց դէպի զիս զլը: Նա կարօտել էր իւր կնոջ և երեխաներին: Կարծես մի քանի շաբաթ էր անցել, որ նա նորանց չէր տեսել:

Կինը արդէն իմացել էր գործի եղելութիւնը:

Դաւիթը ժպիտը երեսին տուն մտաւ, համբուրեց իւր երեխաներին, կնոջը մի քանի քաղցր և փաղաքշական խօսքեր ասաց և ինպից մի բան ուտելու:

Կինը վաղուց է չէր տեսել իւր մարդու ժպիտը: Նա ուրախացաւ և մարդուն ասաց:

—Դարդ անել հարկաւոր չէ. այ մարդ: Աստուած ողորմած է: Խնապէս ուրիշները, այնպէս էլ մենք կ'ապրենք:

—Ես գարդ չեմ անում. ես իմ վճռեցի պրծայ: Պէտք է պատրաստենք գլուխ ծռելու: Առաջ այդ մտքից սարսափում էի: Այսօր նորան մարսեցի և այժմ հանգիստ եմ: Ինչ որ թաղելու էր, այսօր թաղեցի:

Կինը չը հասկացաւ մարդու ասոծը: Դաւիթն էլ չու զեց կրկնել:

Այնպէս եղաւ, որ յետագայ տարիները միջակ յաջողութիւնով անցան: Գիւղացիները գրասեցին «Դաւիթը մեծացրեց իւր վարուցանքու և աւելացրեց տաւարի թիւը: Բայց նա սկսեց աւելի աղքատ ապրել. գարու հացով մասամբ կերտկրել և իրան սովորեցնել կամաց կամաց աղքատ կեանքի»:

Դաւիթը ըստ երեսոյթին ուրախ էր, հանգիստ. բայց կարծես փոքրացել էր, սղմեւել և ման էր գալիս՝ գլուխը ծռած ու խոնարհած:

Աւելի ջահիների հետ վիճերուց՝ նա նորանց խրատ էր տալիս՝ իւր օրինակին հետևելու:

—Մեր հողը այդ է պահանջում: Աբարանապոլում իշխաններ ծնուել չեն կարող: Սա մըջիմների երկիր է:

Զահիները չեն համաձայնուում, գովում էին իրանց գիւղի օդն ու ջուրը, կաթն ու իւղը, իրանց առողջ կաղմածքը և գեղեցիկ գէմքը:

Դաւիթը այդ բոլորը գիտեր և գարձեալ իւր ասածն էր ողնում:

# ՀԵՂԻՆԵ

Վ. Է. Պ.

Տ. Բ. Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շաբուհակութեան<sup>1)</sup>)

### VIII

Հեղինէի հիւանդութեան հետեւալ օրերն էլ Սահառունին նոյն տաժանելի զրութեան մէջն էր. բան ու գործից բոլորովին աւարա էր դարձել. օրը մի քանի անգամ գնում՝ էր Ամիրանովնց տունը կամ Ասունու մօս. մի խօսքով նորա սիրան ու միտքը զբաղւած էր միայն մի բանով—սպասում էր Հեղինէի հիւանդութեան ճգնաժամին, որի վրայ էին հիմնւած նորա բոլոր յօյսերը և որի այս կամ այն ելքից կախւած էր նորա երջանկութիւնը կամ թշւառութիւնը։ Այդ օրերը Սահառունին մի անգամ նստած Ամիրանովի առանձնասենեակում Ասունու հետ խօսում էր Հեղինէի մասին։

Գէորգ, երէկ Հեղինէն ինձ կանչեց իւր մօտ, ինդրում աղաւ չում էր որ զու բոլէով գոնէ գնաս մօտը. ինչ որ կարեւոր բան ունի քեզ ասելու։

1) Տե՛ս «Մուլք»՝ 1891 № 2։

Այդ րոպէին մէկը կամաց թիվթխկացրեց դուռը:

Թամարն էր, զուռը բաց արեց ու ներս մտաւ առանձնասենեակը:

— Գէօրգի Ալեքսանդրովիչ, գնացէք Հեղինէի մօտ, ուզում է ձեզ տեսնել:

Սահառունին սիրո չէր անում գնալ, վախենում էր թէ հիւանդին կ'անհանգստացնի. բացց Թամարը համոզեց ասելով որ հարսը երեք օր կը լինի ինչ խնդրում է նորան կանչել, ուզում է տեսնել նորան ու մի ինչ որ կարեւոր բան ասել մարդուն հաղորդելու համար:

— Գնա, շատ է խնդրում, չի կարելի նորա կամքին հակառակել, իւր կողմից աւելցրեց Ասունին:

Սահառունին էլ չը կարողացաւ հակառակել ու հետեց Թամարին: Հեղինէն սիրով և քնքշութեամբ նայեց նորան և ակնարկեց տալերին որ հեռանան սենեակից ու նրանց մենակ թողնեն: Յետոց առանց խօսելու ձեռքով նշան արեց Սահառունուն, որ նստի մահմակալի կողքին զրած աթոռի վրայ ու թողլ ձայնով արտասանեց.

— Քիչ էր մնում մեռնէի առանց ձեզ վերջին հրաժեշտ տալու... այժմ ոչինչ, աւելի լաւ եմ զգում ինձ, բայց ով զիտէ... վաղը ինչ է գալու իմ զլիսին:

— Սիրելի տիկին Հեղինէ, հանդիսան եղէք, մի վրդովւէք, ձեզ ոչինչ չի պատահիլ, շուտով կը լաւանաք, չափաղանց գորովանքով արտասանեց Սահառունին նայելով նորա սիրուն դէմքին, որ այդպիսի կարճ ժամանակում սասարիկ փոփոխութիւն էր կրել հիւանդութիւնից:

Մի քանի րոպէ նրանք լուռ նստած էին:

Սահառունու սրտում յոյս ծագեց, որ Հեղինէն շուտով կը լաւանայ. նա այնպիսի հայեացք զցեց Հեղինէի վրայ, կարծես ուզում էր ասել՝ զու իմս ես ընդ միշտ, մահը քեզ չի խլիլ ինձանից:

Հիւանդը մի քիչ ոյժի հկաւ ու նորից խօսեց.

— Գուցէ այլ ես չը տեսնենք... օգուելով մեր բարեկամութիւնից... ես ձեզ կանչեցի, սիրելի Գէօրգի Ալեքսանդրովիչ, որպէս զի յայտնեմ ձեզ, մի խնդրք, որով միայն ձեզ կարող էի դիմել... եթէ ես մեռնեմ, ինսամք տարեք իմ երեխացիս, դաստիարակեցէք նրան այնպէս ինչպէս դուք էք դաստիարակւել, այդ է իմ միակ բաղձանք:

Դժւար է խօսքով որոշել թէ ի՞նչ էր զգում՝ Սահառունին այդ լսելիս: Կակծահար սրտով նա ջերմ համբոցներ էր դրօշմում Հեղինէի ձեռքերին՝ աշխատելով հանգստացնել նրան, թէև ինքը այնքան յուզւած էր, որ հազիւ էր կարողանում պահել արծասուքը:

Հեղինէն մի քանի անգամ փորձ արեց խօսելու, բայց լոեց. երևում էր, որ մի բան ունէր ասելու, բայց սիրո չէր անում որ ասի: Վերջապէս նա յաղթեց իրան, նայեց մտերմաբար Սահառունուն ու յուզւած, դողդոջուն ձանով ասաց... .

— Դիտեմ, կ'ասէք՝ հայր ունի, բայց... թող գաղտնիքս ինձ հետ գերեզման չը մտնի... ես չեմ ուզում որ նա... հօրը նման լինի: Մի ժամանակ...

Հիւանդը էլ չը կարողացաւ շարունակել. նորա մաշւած երեսի վրայ երևեց սասաիկ տանջանքի արտացայտութիւն և արտասուքի մի քանի խոշոր կաթիլներ իրար ետևից զլորւեցին նորա գունատ այսերի վրայ:

— Տիկին Հեղինէ, ինչու էք նեղացնում ձեր սիրով զուր կասկածներով. քանի որ բժիշկները հաստատ ասում են որ ձեզ ոչ մի վտանգ չի կարող պատահել: Աստուած ձեզ որդի պարզեց, նա ձեզ ոց էլ կը տայ դաստիարակելու նրան, ոչ ոք չի կարող այնպէս դաստիարակել նրան ինչպէս զուք: Հանգստացէք, խնդրեմ, սիրելի բարեկամ:

— Եատ ուրախ եմ, որ ձեզ տեսայ... այժմ կարող եմ հանգիստ սրտով մեռնել, հազիւ լսելի ձանով արտասանեց Հեղինէն ու նւազեց:

Սահառունին սասաիկ վախեցաւ ու սկսեց դողդոջուն ձեռքով քայցախ քսել Հեղինէի ձակատին ու երեսին:

Մի հինգ րոպէ անցած հիւանդը սկսեց ուշքի գալ: Նա աշքերը բարձրացրեց դէպի Սահառունին, երախտագէտ հայեցքով նայեց նրան ու թուլացած ձեռքով սեղմեց նորա ձեռքը:

— Որքան ուրախ եմ, որ զուք այսուղ էք. այժմ աւելի լաւ եմ:

— Մի խօսէք, Աստծու սիրուն, տիկին Հեղինէ, թէ չէ էլի կը թուլանաք, աղաճելով յորդորում էր նրան Սահառունին որի գոյնը դցել, սովորնել էր:

— Լաւ, չեմ խօսիլ, ինձ համար զւարձութիւն է ձեզ հնապանդելը:

Երկուսն էլ լուռ իրար էին նացում:

Յանկարծ գուռաց ճռում և խսկոյն Սահառունու ականջին գիպառ Եփեմիայի ճրզղան ձայնը:

— Դուրս գնացէք, Գէօրգի Ալեքսանդրովի՛, բժիշկներն եկան... լաւ չի լինի, որ նրանք ձեզ այստեղ տեսնեն:

Նա մի թշնամական հայեացք զցեց Սահառունու վրայ ու մօտեցաւ հիւանդին:

— Սահառունին, ննջարանից դուրս գալիս, դռան մօտ յանկարծ պատահեց Ամիրանովին, որ հէնց ացդ րոպէին էր եկել: Ամիրանովը գարմացած նայեց ընկերոջ վրայ ու վագից դէպի կնոջ մահճակալու:

Ամիրանովի վերադարձից յետոյ Սահառունին ոտը չը կարեց նրանց տանից. էլի շուտ-շուտ գնում՝ էր այցելութեան. բայց երբ որ նկատեց, որ Ամիրանովը օրէցօր աւելի սառն է ընդունում իրան, աւելի լաւ համարեց վերջ տալ իւր այցելութիւններին: Ճիշտ է՝ նրա համար շատ դժւար էր ացդ, բայց Հեղինէի հանգառութիւնը ամեն բանից վեր դասելով՝ նա աւելի լաւ համարեց զրկեել Հեղինէին տեսնելու զւարձութիւնից, քան իւր այցելութիւններով տեղիք տալ Ամիրանովին կասկածանքով վերաբերել կնոջը:

Երեք օրից յետոյ՝ բժիշկների ասելով՝ սէտք է լինէր հիւանդութեան ճգնաժամը: Ացդ երեք օրը մինչև միջնացրեց Սահառունին՝ հոգին զոր լու եկաւ. — վերջապէս չորորդ օրը, երբ որ սէտք է որոշւեր նորա սիրելի Հեղինէի ճակառագիրը, նա առաւառը զիշերհանաց գուրս եկաւ տանից ու սկսեց թափառել Ամիրանովինց տան շրջակացում:

— Աննա Արտեմիեւնա, համարեա վագելով մօտեցաւ նա օրիորդ Գուրզէնեանին, ասէք, ի սէր Աստծու, ինչու է տիկին Հեղինէն. գուը երեխ նրանց տանիցն էք գալիս:

Ացդ ասելիս Սահառունին այնպէս պինդ սեղմեց օրիորդի ձեռքը և այնպէս տարօրինակ կերպով էր նացում նրան, որ նա շփոթւեց ու մի քանի րոպէ չը կարողացաւ ոչինչ պատասխանել:

— Նս ամեն օր լինում եմ նրանց տանը, բայց բժիշկները ոչ ոքի չեն թողնում հիւանդի մօտ գնալ: Ալս, խեղճը շատ վատ է,

սաստիկ տիրութեամբ արտասանեց Աննան ու, նայելով Սահառունուն,  
վախիցը յետ-յետ քաշւեց:

Խնչ է եղել ձեզ, Գէօրգի Ալեքսանդրովին, ինչու էք այսպէս  
գունաթափւել:

—Ոչինչ, իմ մասին չարժի խօսել, անհամբերութեամբ թափ  
ուեց ձեռքը Սահառունին:

Այդ բոպէին յանկարծ նրա աշքն լնկաւ Ամիրանովինց տանից  
դուրս եկող բժիշկների երեսին, —նրանք ժպտում էին...

Սահառունին ամեն բան մոռացաւ. թուաւ զէպի Ամիրանովինց  
տունը ու մուաւ ներս: Սրահում նա պատահեց Ասունուն և, երբ  
որ նրա դէմքի վրայ կարդաց «իրկւած է», էլ իրան բոլորովին կորց-  
րեց ուրախութիւնից գրկեց լնկերոջը ու սկսեց համբուրել:

Այդ բոլորը մի անթարթում կատարւեց: Պուրգէնեանը մենակ  
մնալով փողոցում՝ սկզբում ապշած կանգնած էր ու չէր կարողանում  
հասկանալ թէ ինչու Սահառունին խօսակցութիւնը կիսատ թողեց  
ու գժի նման վազեց զէպի Ամիրանովինց տունը: Նա միայն այն  
ժամանակը զլիսի լնկաւ թէ բանը ինչու մն է, երբ որ ծանօթ բժիշկ-  
ներից մէկը մօտեցաւ նրան և յայտնեց որ ճգնաժամը լաւ անցաւ,  
այնպէս որ Հեղինէն կը լաւանայ: Օրիորդը սաստիկ ուրախացաւ  
լսելով այդ լուրը և էլ չը սպասելով Սահառունուն՝ շարունակեց  
ճանապարհը:

—Հըմ, խորհրդառը և մասամբ խորամանկ կերպով արտասանեց  
նա, այժմ հասկացայ: Խնչակ մի ակնթարթում ամենասարսափելի  
յուսահառութիւնը փոխւեց ծայրացեղ ուրախութեան:

Ճիշտն ասած՝ այդ ինձ գուր է զալիս ժպտալով շարունակեց  
օրիորդը: Սահառունու մէջ կեանք կայ. նրա զէմքը միշտ արտացաց-  
առում է այն, ինչ որ նրա սրտումն է: Խոկ Թումակը բոլորովին ուրիշ  
տեսակ մարդ է. նա այն աստիճան անթափանցելի դէմք ունի, այն աս-  
տիճան անտարբեր ու հանգիստ կերպարանք ունի, որ նրա ամենա-  
ժամանակ բարեկամներն անգամ չեն կարող հասուատ ասել՝ արդեօք  
ուրախ է նա թէ տխուր, մինչդեռ նա զիտէ, որ այդ ինձ շատ է  
հետաքրքրում: Այ, հէնց թէկուզ վերջին անգամը, երբ որ եկել էր  
մնաս բարեւ անելու, —գոնէ ակնարկութեամբ էլ է չը հասկացրեց  
ինձ, որ նրան ցաւ է պատճառում ինձնից անջատւելը, իսկ ես

հաստատ զիտեմ... երբեմն մինչև անդամ՝ մարդու ջիպը է զալիս նրան նայելիս, կարծես ապրելն էլ նրան ծանրութիւն է տալիս: Ախ, եթէ այդ խելքի, այդ կրթութեան, մ ծահողութեան ու ազնուութեան հետ Դաւիթը աւելի եռանդ ունենար, այդքան վլեկմատիկ չը լինէր և աւելի աշխատով ու զեղեցիկ լինէր, այն ժամանակ նրա հասոր չէր լինիլ ամբողջ աշխարհում: Իսց արդեօք այն ժամանակ ես նրան աւելի կը սիրէի քան այժմ:

Այդ հարցը երկմոռութիւն արտայացող ժպիս բերեց Աննացի երեսին:

Մինչդեռ օրինորդը պաշտամած այլպիսի մոտածմունքներով առաջ էր գնում; Սահառունին վերադառնում էր տուն: Նա իրան այնպէս էր զգում; կարծես կրծքի վրացից մի ահազին սար գլորւել վայր էր ընկել: Անենեակը մտնելով Սահառունին տեսաւ սեղանի վրայ մի նամակ,—Վլազիկաւկազից էր. քոյրը դրում էր որ մարդու մահից յետոց շատ նեղ զրութեան մէջ է, մարդու թողած անորոշ կտակի պատճառով գործերը այնպէս խառնել են, որ ինքը չի կարող կարգի բերել առանց եղբօր օգնութեան և այդ պատճառով իննդրում էր, որ նա գնայ Վլազիկաւկազ ու յետոց Պետական գորսկ, ապացուցանելով որ այդ անհրաժեշտ է:

Սահառունին առանց տատանւելու վճռեց գնալ քրոջ մօտ: Նրան միայն մի բան էր պահում—Հեղինէի տկարութիւնը: Նա սպասեց մինչեւ որ Հեղինէն բոլորովին լաւացաւ: Այդ մի շաբաթ քաշեց:

Ճանապարհ ընկնելու նախընթաց օրը Սահառունին ուզում էր գնալ մնաս բարե անել Հեղինէին: Նա մի քանի անգամ վճռում էր գնալ նորա մօտ, բայց ամեն անգամ կարծես մի ներքին ձայն նրան ասում էր, որ նա սկսոք է յաղթէ իրան ու հեռանայ առանց տեսնելու Հեղինէի հետ:

Ճիշտ է այդ երկուսիս համար էլ լու կը լինի, վճռեց նա նրանց տան դռան առաջ՝ երբ որ վերջին անգամ կանգնած տատանւում էր՝ չիմանալով ուր գնայ—յետ՝ դէպի տուն թէ առաջ՝ դէպի Ամիրանովենց տան սանդուխքները, և սաստիկ յուզւած անհաստատ քայլերով վերադարձաւ տուն: Նա այնքան թուլացել էր վշտից ու յուզմունքից, որ հազիւ կարողացաւ բարձրանալ սանդուխքներով ու իրան զցել իւր սենեակը:

Հեղինէն որ լսեց թէ Սահառունին հեռացել է Թոսից, շատ էր մտածում, բայց չէր կարողանում հասկանալ թէ ինչպէս է Սահառունին վճռել հեռանալ առանց իրան հետ մնաս բարեւ անելու։ Այդ հանգամանքը աւելի էր սաստկացնում նորա մտառանջութիւնը, որի պատճառը շատ բնական էր։ Քանի նորա առողջութիւնը կազդուր էր, այնքան աւելի յաճախ էր նա զբաղւում իւր զբութիւնով, աշխատելով մի ելք գտնել այդ անտանելի վիճակից։ Երբ որ առաջին անգամը նորա գլխում ծագեց մարդուց բաժանւելու միտքը, նա սարսափեց այդ յանդուգն մտադրութիւնից։ Նա գիտէր որ ըոլոր ազգականներն ու ծանօթները անէծք ու նովաստինք կը թափեն նորա զլիմն։ Նա գիտէր, որ ոչ ոք չի ցանկանալ իմանալ բաժանւելու խիստան պատճառները, ոչ ոք չի մեղադրի մարդուն, բոլորը իրան կը մեղադրէն։ Բայց մարդկանց կարծիքից Հեղինէն այնքան չէր սարսափում որքան մեղքից։

Բաժանւել մարդուց կը նշանակէր քանդել ամուսնութեան սուրբ կապը, որ նա Աստծու տաճարում երդւել էր յաւիտեանս սուսհաննել։ Ալսակը նրա աչքում մի վսեմ և բարոյսկան խորհուրդ էր, որը լուծելը նրան յանցանք էր թւում։ Սակայն օրէցօր նրա ատելութիւնը դէպի իւր մարդը սաստկանում էր և վերջապէս հաստ այն աստիճանի, որ ել անհնար էր միասին ապրել Տառանւում էր, վախենում էր Հեղինէն, բայց մինչեւ մահը ատելի մարդու հետ ապրելը նրան անտանելի էր թւում և նա հաստատ վճռեց ել այգակը չը շարունակել։ Պէտք է մի ելք գտնել։

— Երեխալիս կը վերցնեմ ու կը զնամ մի փոքրիկ քաղաք ուր ոչ ոք ինձ չի ճանաչիլ. մի աշխատանք կը գտնեմ ինձ համար ու հանդիսա սրտով կապրեմ, մտածում էր ինքն իրան Հեղինէն։

— Բայց մարդու կը թողնի՞ որ այգակը անեմ, աւելի լաւ չի լինի որ այդ նրանից ծածկեմ, յանկարծ թողնեմ ու չեռանամ։ Ֆ... այդ նրան կը զայրացնի, նա կընկնի յետելիցս, կը գտնի, երեխալիս կը խլի ձեռքիցս ու գուցէ ընդ միշտ բաժանի ինձ սիրելի երեխալիցս։

Այդ միտքը այն աստիճան սարսափեցրեց Հեղինէն, որ նա օձի կծածի պէս բացականչեց։

— Ոչ, ոչ, այգակը չեմ— անիլ... վորձեմ՝ տեսնեմ, գուցէ կա-

րելի լինի նորա հետ անկեղծ խօսել, հասկացնել, որ մենք էլ իրար հետ ապրել չենք կարող, դու ցէ համաձայնի...

Թէև՝ իսկապէս ասած՝ Հեղինէն շատ էլ յայս շունէր, որ մարդուն կարող է համոզել, բայց սրահանջ էր զգում անկեղծօրէն խօսել նորա հետ բաժանելուց առաջ:

Մի օր, երբ Հեղինէն սասարիկ զբաղւած էր այդ մասածմանք-ներով, յանկարծ զգաց որ մէկը ձեռքով շօշափում է իւր երեսը. նա ցնցւեց:

—Ինչու վախեցար, հոդիս, ինչու ես այսօր ացգապէս դոյնդ զցել:

—Ի՞նչ, բացականչեց նա թափ տալով մազերը:

—Եկաց քեզ ասելու, որ շուտով մենք պէտք է հեռանանք Թ-սից:

—Ուր և ինչո՞ւ, հարցրեց Հեղինէն կարծես սթափւելով խոր քնից:

—Էժիշիները թէև քեզ բոլորովին առողջ են համարում, բայց ասում են որ բոլորովին բժշկւելու համար քեզ անհրաժեշտ է զնալ ջրերը:

—Ի՞նչ ջրեր, Պետական բակ:

—Լաւ գուար: Վերջապէս կը տեսնես Կովկաս սարերը, Վլագի-կավկազի գեղեցիկ ճանապարհը:

Հեղինէն մաքի հետ լնկաւ:

—Դուք է՞լ էք դալու ինձ հետ:

—Ի հարկէ: Բայց այդ ինչ դուք է մէք մէջ: Ինչպէս տեսնում եմ, Հեղինէ, դու գեռ չես մոռացել, նեղացած ես ինձանից:

Ամիբանովն ուղում էր զրկել կնոջը, բայց նա խիստ կերպով մերժեց նորա զգւանքը:

—Ասա, Ասուծու սիրուն, ինչ է պատահել քեզ, կամ թէ ես այլ ես քո ամենամատերիմ բարեկամը չե՞մ համարում:

Ամօւսինների մէջ ամիբեց երկարանե լուսթիւն. վերջապէս Հե-ղինէն՝ զժւարութեամբ շունչ քաշելով ակնեց խօսել.

—Մի ժամանակ ես ամեն հնարք գործ էի զնում, որ մենք ամենամատերիմ բարեկամ լինենք, բայց երեխ լիշում ես որ զու միշտ մերժում էիր իմ բարեկամութիւնը:

—Ասա ինոդիմ; ինչ ես հասկանում զու բարեկամութիւն և ոչը ասելիս:

— Եաւ տարօրինակ հարց է, ա'յն ինչ որ ամենքը:

— Միթէ, Հեղինէ, զու իսկապէս չես ուզում որ ես քեզ հետ գամ:

Կինը զլխով դրական նշան արեց:

— Այս, հառաջանք արձակեց նա կուրծքը բոնելով, եթէ հնար

լինէր...

Հեղինէի ձայնը սաստիկ ցուզմունքից կորեց:

— Այս, մի քիչ յետոց շարունակեց նա կմկմալով, ես կուզէի...  
ընդ միշտ... բաժանւել ձեղնից:

Ամիրանովը ապշած և լուս նայում էր կնոջ վերաց: Նա իւր  
ականջներին չէր հաւատում և չէր իմանում թէ ինչ պատասխանի  
կնոջ ասածին:

Այն տոնը որով Հեղինէն արտասանեց ացդ խօսքերը և այն  
հայեցքը, որով նա նայում էր մարդուն, պարզ ցոյց էին տալիս,  
որ նա կատակ էր անում, այլ լուրջ պահանջ է յացնում:

Մի քանի րոպէից յետոց վերջապէս Ամիրանովը ապշութիւնից  
սժափուեց և սկսեց մտածել թէ ինչ ասի կնոջը:

— Հեղինէ, հոգիս, կարելի էր միթէ սպասել որ դու ացդքան  
անսիրա կը լինես գէսփի ինձ: Չէ, անկարելի է, զու չէիր կարող ացդ  
ասել, զու կատակ էիր անում: Այնպէս չէ: Ասա որ կատակ էիր անում:

Կինը բացասական կերպով թափ տւեց գլուխը: Ացդ րոպէին  
նորա գէմքը արտացայտում էր արհամարհանք գէսփի Ամիրանովը:

— Բայց միթէ դու հաստատ ուզում ես բաժանւել ինձանից,  
զողոջուն ձայնով շարունակեց Ամիրանովը: Կարող ես արդեօք մե-  
զազրել ինձ որ ես գոնէ մի անգամ դաւաճանած լինեմ քեզ: Այն  
օրից որ պատկել եմ՝ մինչև անգամ աշք չեմ ունեցել նայելու  
ըիշ կնոջ վրաց: Իսկ՝ ինչ ես կարծում՝ շատ կը գտնես ալպսիսի  
հաւատարմութիւն: ահա թէ ինչպէս ես վարձատրում:

— Հըմ... աւելի լաւ կանէք մոտաքերէք թէ դուք ինչպէս էք  
վարձատրել իմ անահման սէրս և վատահութիւնս գէսփի ձեղ, պա-  
տասխանից Հեղինէն սաստիկ յուզւելով... Աիրաս զայրոցթիցս ուզում  
է տրաքւել, ահօթիցս կրակ եմ կտրում, հէնց որ յիշում հմ... որ  
ես այնպիսի մարդու կին եմ և պէտք է մնամ... Յիշում էք ձեր  
խօսակցութիւնը կոմսի հետ... Այնպիսի մարդոց... կարելի է ամեն  
բան սպասել. նա ընդունակ է ամեն տեսակ յանցանք դործելու...

Արտասուրը խեղգեց Հեղինէին։ Նա չը կարողացաւ խօսքը շարունակել։

Ամիրանովը լսում էր ինո՞չ խօսքերը սաս ՚իկ զայրացած։ Եթէ նա անկեղծ խօսէր, պէտք է հայշոյէր կնոջը, բայց մտածելով որ այդ ձեռնուու չի իրան, զայգեց զայրոյթը ու հանդարու կերպով պատասխեց։

— Ասածներիդ մէջ ոչ մի միտք չը կայ. այդ բոլորը քո բորբոքած երևակացութեան զառացմունքն է։ Խնլքդ գլուխդ հաւաքիր, սիրելիս, ու առաջւայ պէս բարի և քաղցր կին եղիր ինձ համար։ Թոկ ես այն աստիճանի սիրում եմ՝ քեզ ու մեր քաղցր երեխային, որ ձեր խաթեր կ'աշխատեմ լինել այնպիսի մարդ, ինչպէս քո ցանկութիւնդ է որ ես լինեմ։ Ես քեզ թէ այժմ և թէ միշտ անշափ սիրում և սիրել եմ. իսկ սէրը, հոգիս, հրաշքներ է զործում։

— Սիրո՞ւմ ես։ Շատ շնորհակալ եմ այդ տեսակ սէրից։

Հեղինէի ձայնը սաստիկ դառնութիւն ու զայրոյթ էր արտայայտում։

— Զդացմունքները չի կարելի այդ տեսակ տառն դասողութեամբ տոռուգել, արւետական ողերութեամբ արտասանեց Ամիրանովը։

Այդ բողէին ծառան ներս մտաւ և յացնեց, որ ինչոր մի աստիճանաւոր ցանկանում է նրան տեսնել մի շատ կարեւոր զործի համար։ Ամիրանովը գնաց։

Հեղինէն զլու խը քաշ քցած ընկառ տիսուր մտածմունքների մէջ։

Նա ինքն իրան մեղադրում էր, որ շատ խիստ կերպով վարւեց մարդու հետ, և հետեւալ առաւօտը աւելի մեղմ կերպով սկսեց խօսել նրա հետ նոյն հարցի մասին, բայց Ամիրանովը աշխատում էր քաղցրութեամբ համոզել կնոջը, որ թողնի այդ մտադրութիւնը։ Նա չը զիտէր որ իւր քաղցր խօսքերն ու փաղաքշանքները ընդհակառակն են ներգործում կնոջ վրայ։

— Լաւ, առենք թէ ես չեմ համապատասխանում ազնւութեան մասին քո ոնեցած իդէալական գաղափարին. բայց ասա իննդրեմ, ինչով է մեղաւոր խեղճ երեխան, որ զու այնպէս անսիրու կերպով վճռում ես բաժանել նրանից, ասաց նա կնոջը երր որ նա վերջապէս վճռական կերպով առաջարկեց որ բաժանեն իրարից։

— Բաժանեւէլ երեխայիցու։ Միթէ կարող էի ես այդպիսի սար-

սակելի բան մինչև անգամ մտքովս անց կացնել: Ես պէտք է ձեզ խնդրէի որ, իբրև ողորմութիւն, թող տայիք պահել ինձ մօռ երեխացիս, արտասանեց նա արտասուքը հազիւ պահելով: Ի հարկէ անմտութիւն կը լինէր իմ կողմից կարծել որ դուք ընդ միշտ կը հրաժարւէք ձեր որդու վրայ ունեցած իրաւոնքներից, բայց թողէք մինչև մեծանալը ինձ մօռ մնայ, ինձ հետ անց կացնի իւր մանկութեան տարիները, յետոյ վերցրէք ինչ ուզում էք արէք: Իսկ մինչև այդ ժամանակ, երգւում եմ նրա քաղցր արևով, որ ես ամեն հնարք գործ կը դնեմ և թող չեմ տալ որ նա ձեր մասին վատ կարծիք կազմի:

— Հեղինէ, ես այգալիսի անմիտ և անսիրտ պահանջի չեմ կարող համաձայնել: Ճիշտն ասա, հօ ուրիշի վրայ չե՞ս սիրահարւել:

Ամիրանովի կասկածները կանգ առան Սահասունու վրայ:

— Դուք շատ լաւ զիտէք, որ ես ոչ ոքի չեմ սիրում այն տեսակ ինչպէս դուք էք հասկանում սիրելը. իմ խիզճը ձեր տուաջբորովին մաքուր է:

Դարձեալ խնդրում աղաւում եմ ձեզ, կատարեցէք իմ խնդիրքը, բացականչեց Հեղինէն սասափիկ յուղած ձաջնով:

Նրա երեսը յուզմունքից կարմրել, կրակ էր կորել:

— Աղաւանքդ զուր է. ես երբէք չեմ համաձայնիլ բաժանել որդուց:

Ամիրանովի այնպիսի վճռական կերպով արտասանեց այդ խօսքերը, որ Հեղինէն յոյսը կորեց երբ և իցէ նրան համոզելու կատարել իւր խնդիրքը:

Ճար չը կայ, պէտք է հաշուեմ ու բախտիս հետ. հօ չեմ կարող երեխացիս թողնել ու հեռանալ, մտածեց նա ու սկսեց կամաց կամաց պատրաստութիւն տեսնել ճանապարհ ընկնելու դեպի Պետախիգօրսկի:

Ամիրանովի ուրախանում էր տեսնելով այդ պատրաստութիւնները: Նա յոյս ունէր, որ ճանապարհորդութիւնը կը բժշկէ կնոջ տիրութիւնը:

Զարժէ մէծ նշանակութիւն տալ նրա խօսքերին, մխիթարում էր նա ինքն իրան, այդ մի քամի է որ կը դայ ու կ'անցնի, երկար տևել չի կարող. մայրական զգացմունքներն ու սպարտականութիւնները անկառած նրան կը հաշտեցնեն ինձ հետ:

Այդպէս էր մտածում՝ Ամիրանովը և աշխատում՝ էր որքան կարելի է քաղցր վարւել կնոջ հետ:

Թից դուրս գալու նախընթաց օրը Հեղինէն գնաց մնաս բարև անելու Աննա Գուրգէնեանի և ուրիշ մօտ ծանօթների հետ: Այցելութիւնները վերջացնելով նա տուն վերապարձաւ: Ներս որ մտաւ՝ Ամիրանովը ու մեծ քոյրը շատ խորհրդաւոր կերպով իրար հետ խօսում էին: Նա մէկ-երկու բոլոր նատեց նրանց մօտ: բայց նկատելով որ խանգարում է նրանց խօսակցութիւնը, իսկոյն տանից դուրս եկաւ որ նրանք մենակ մնան: Նրա գնալուց յետոյ Ամիրանովը ազատ շունչ քաշեց ու նորից սկսեց խօսակցութիւնը:

— Այդպէս, Եփեմիա, Ուբարովի առօրինի աղջիկը պէտք է ստանայ նրա ահազին կարողութիւնը:

— Բայց դու չէիր ասում, Միքայէլ, որ կտակը առանց նօտարի ու վկաների ստորագրութեան օրէնքի առաջ նշանակութիւն չունի:

— Ճիշտ է: Բայց կարո՞ղ ես երաշխաւորել, որ վաղը կամ միւս օր կտակին օրինաւոր ձև չեն տալ:

— Քանի որ նա շարժւել չի կարողանում ու լեզուն բռնւած է՝ աց չի լինիլ... Մի վախենար, ինչ որ էլ լինի, կտակը մեր ձեռիցը չի ազատուիլ:

— Հանաք մասխարութիւն չէ, հարիւր յիսուն հազար մանէթը փողոցումը չենք կարող գտնել, ինչ էլ լինի պէտք է ձեռներից բաց չը թողնենք: Խնձնից մօտ ազգական չունի նա: Այդ նպատակին համելու համար երկու միջոց կայ, ասում էր ինքն իրան Ամիրանովը գանդաղ քայլելով սենեակում:

Լսիր, Եփեմիա, յանկարծ կանգ առաւ նա սենեակի մէջ տեղում, գու ամեն միջոց պէտք է գործ գնես որ չը կարողանան...

Նա խօսքը կիսատ թողեց, մօտեցաւ դուանը, բաց արեց, նայեց տեսնի հօ ոչ ոք չկայ միւս սենեակում, յետոյ նորից փակեց դուռը ու խորհրդաւոր կերպով շարունակեց, որ չը կարողանան օրինաւոր ձև տալ կտակին: Իսկ եթէ այդ չը յաջողեց, այն ժամանակ պէտք է...

— Գիտեմ, գիտեմ, խօսքը կորեց քոյրը: Եթէ սրանից յետոյ էլ նա հիմիկւայ պէս ողորմելի զրութեան մէջ կը լինի, ես ու Թամարը շատ բան կարող ենք անել, չարախնդաց ժալիտով աւելցրեց նա:

Քոյր ու եղաօր աշքերը փայլեցին յոյսի լուսով։

Ամիրանովը նստեց քրոջ կողքին։ Նրկար ժամանակ նրանք դեռ քչիւում էին։

—Տես, զգոյշ եղիր, ասաց եղբայրը մնաս բարեւ անելիս։

Յոյս ունեմ որ իմ բացակայութիւնը չի վնասիլ գործին։

—Զէ, չէ, ընդհակառակը։ Իսկ եթէ բան է հարկաւորութիւն լինի, ես խսկոյն հեռագիր կը տամ։

## IX

Ամիրանովը ճանապարհ ընկան գէպի Պետակիդորսկի։ Հեղինէն, որ մինչև այդ ժամանակ բացի Թասի մօտակայ ամարանոցներից ոչ մի տեղ չէր եղել, երեխալական յափշտակութեամբ էր վերաբերում ճանապարհորդական նոր տպառորութիւններին։ Նրան գրաւում էին ճանապարհի երկու կողմով ձգւող անվերջ լեռնաշղթաները, սարերից հոսող հարիւրաւոր առուռակներն ու աղբիւրները, կանաչ մարգագետինները, բնութեան բազմատեսակ գեղեցիկ տեսարանները։

Ամիրանովը կնոջոնին էր զբաղւած։ Նա տաք վախթաթում էր նրան, որ չը մրսի, ուրախանում էր տեսնելով նորա հրճւանքը և յաճախ կրկնում էր՝ այ սպասիր, սրանից յետոյ ճանապարհը աւելի հետաքրքրական կը լինի։

Եւ խսկապէս՝ քանի մօտենում էին Սլեթի գարիգուսին՝ բնութիւնը կենդանափոխուում էր. գողտրիկ տեսարաններին, սիրուն զիւղերին ու ճոխ մարգագետիններին հետզհետէ յաջորդում էին թէւ աւելի մասց, բայց և աւելի վեհ տեսարաններ։ Զարմանքով և մի տեսակ երկիւղածութեամբ էր դիտում Հեղինէն դագաթներով երկինքը շօշափող լեռները, ճանապարհի վրայ կախ ընկած հսկաչական ժայռերը, անդնդախոր ձորերը. յափշտակութեամբ ականջ էր դնում արեւի առաջ հազար ու մէկ գոյներով ճաճանչին տւող բիւրեղի պէս յստակ ջրվէժների ու փրփրագէղ զետերի զուում գոշումին։ Որքան աւելի էին բարձրանում նրանք, այնքան աւելի վայրի կերպարանք էր ընդունում բնութիւնը, և եթէ Օսետինների ու Կիստինների գիւղը չը լինէին, որոնք բարձրավանդակների վրացից նայում են ճա-

նապարհին, կենդամնութեան ոչ մի նշոյլ չէր երեալ այդ խուլ անդունդներում ու ապառաժոս սարերում:

Բնութիւնը խորը տպաւորութիւն էր գործում Հեղինէի վրայ: Նորա հոգուն պատել էր այն անզիտակցական զգացմանքը, որ ներշնչում է մարդուս ամեն մի վեհ երեոյթ: Զմայլած նայում էր նա չորս կողմը, ուր ամեն ինչ կրում էր վեհութեան կնիք, ուր ամեն ինչ կարծես ուզում էր ապացուցանել մարդուս ոչնչութիւնը բնութեան ոյժերի առաջ:

Ամբողջ ճանապարհին Հեղինէն լուռ էր, թէև սանտիկ պահանջ էր զգում խօսելու: Նորա սիրող կածում էր, որ մօար չը կայ այնպիսի մի մարդ, որին կարողանար նա հաղորդել իւր տպաւորութիւնները: Մարդու ներկայութիւնը նորա համար անտանելի ծանրութիւն էր:

—Եթէ ամենաաննշան չափով յոյս ունենայի որ կարող եմ ապահարզան ստանալ որդուս մօտս պահելու իրաւունքով, ես ոչ մի բոպէ չէի տատանւիլ ու կը բաժանեէի մարդուց, կազատւէի այս անտանելի թշւառական շղթաներից, մտածում էր նա գորովանքով նայելով փոքրիկ երեխային:

Ամիրանովը ուրիշ մտածմունքներով էր զբաղւած: Նորա գլխից գուրս չէր գալիս Ուբարովի ժառանգութիւնը:

Ահա վերջապէս նրանք հասան Վլադիկասկադ: Վլադիկասկազում նրանք իջան Ամիրանովի հօր մօրաքրոջ մօտ, որ՝ ուրիշ աւելի մօտ ազգականներ չունենալով՝ շատ էր սիրում Միքայէլին ու քոյրերին և շուտ-շուտ նամակ էր գրում, կանչում իւր մօտ:

Ճանապարհից մի քիչ հանգստանալուց յետոց, Հեղինէն տանից գուրս եկաւ քաղաքը տեսնելու: Մարդը հետեւեց նրան: Բայց զարմանալի է ոչինչ չէր հետաքրքրում Հեղինէին. նա չէր պատասխանում մարդու հարցերին ու նկատողութիւններին և շարունակ նայում էր չորս կողմը, կարծես մէկին փնտռելիս լինէր: Յանկարծ նորա հայեացքը կանգ առաւ Սահաւունու վրայ: Նա ճանաչեց Սահաւունուն նորա քայլածքից ու արագացքից իւր քայլերը:

—Մի քիչ կամաց, սիրելիս, չեմ կարողանում յետեիցդ հասնել, ահամութեասմբ ասաց Ամիրանովը, աս անց նկատելու Սահաւունուն:

Ամիրանովը յօնքերը կիտեց և ինչ որ փնթփնթացրեց քթի տակին:

Իսկ Սահառունին հետուից տեսնելով Ամիրանովներին՝ ճանապարհը ծռեց ու մոռաւ մի խուլ փողոց:

Հետեւեալ օրը պատահելիս նա նոյնը արեց:

Հեղինէն մնացել էր շւարած և վճռեց անպատճառ տեսնել նորա հետ ու խօսել երես առ երես: Յարմար բոսէ գտնելով նա մենակ դուրս եկաւ փողոցը: Մի ժամի չափ զուր թափառելուց յետոց նա վերջապէս պատահմամբ գտաւ Սահառունու բնակարանը: Սահառունին կանգնած էր բաց պատուհանի առաջ սաստիկ մտահոգ գէմքով:

— Դէօրգի Ալեքսանդրովի՛, ձայն ոււեց նա: Սահառունին ցնցւեց և ամօթից կարմրած դուրս եկաւ փողոց:

— Զէ՞ք զալ մի քի՞չ զրօննենք այլում, մասամբ քնքշութեամբ, մասամբ ցանդիմանօրէն ասաց Հեղինէն ձեւք տալով նրան:

Մի քանի քայլ նրանք արեցին առանց խօսելու:

— Զը նատե՞՞նք այս ծառի մօտ, այսուղ քամին այնքան չի նեղացնիլ մեզ, առաջարկից Սահառունին:

Հեղինէն, որ սաստիկ յօգնել էր ման գալուց, ուրախութեամբ համաձայնեց նստել:

— Դուք երեխ գնում էք ջրերը ձեր առողջութիւնը կազդուրելու համար, հարցրեց Սահառունին տխուր զիտելով նրա գունաթափ ու մաշւած դէմքը:

Հեղինէն զլիսով արեց:

— Ինչ է պատահել ձեզ, Դէօրգի Ալեքսանդրովի՛, ինչու էք դուք այլպէս աշկարայ փախչում ինձանից, կամ դուցէ դուք ուզում էք բոլորովին մոռանալ մեզ, դառնութեամբ ասաց նա:

— Տիկի՞ն Հեղինէ, ի՞նչ էք ասում: մոռանա՞լ ձեզ. միթէ ես կարող եմ մոռանալ ձեզ:

Ինչպէս էք սիրտ անում ինձ այլպիսի բան ասել, ասաց նա տաքացած, բայց տխուր ձայնով և ուղիղ նայեց նրա աչքերին:

Սահառունին չը կարողացաւ զիմանալ նրա յանդիմանութեամբ լի հայեցքին և ակամայ ասաց.

— Աս կ'ուզեի, որ զուք անարդար չը լինէիք դէպի ինձ:

Հեղինէն ուշադրութեամբ նայեց Սահառունու երեսին և նրա մտքումը՝ ինչոր մի կասկած ծագեց. բայց նա իսկոյն դէն զցեց այդ կասկածը ու, վեր թռչելով տեղիցը, առաջարկեց Սահառունուն առաջ գնալ զբօննելով։ Սահառունին շփոթւած վեր կացաւ ու գնաց նրա հետ։

Երբ որ մօտեցաւ տանը՝ Հեղինէն խնդրեց որ ներս մտնի մի բաժակ թէյ խմելու։

—Թէւ մենք մեր տանը չենք, հիւրենք, բայց մեր տանսիկինը շատ հիւրասէր է, ուրախութեամբ կ'ընդունի ձեզ։

Սահառունին ներողութիւն խնդրեց ասելով որ չի կարող կատարել նրա խնդրբը։

—Ես կարծում էի թէ ինձ մի քիչ աւելի էք յարգում. մենք վաղը աւաւօս գիշերով ճանապարհ ենք ընկնելու. դուք չէ՞ք ուղում ինձ հետ անց կացնել վերջին երեկոն։

—Տիկին Հեղինէ, ազաւում եմ, այդքան խիստ մի եղեք դէպի ինձ։ Եշխատեցէք մի կերպ արգարացնել իմ կարծեցեալ անուշադրութիւնը դէպի ձեզ... դուք մի ժամանակ դուք կ'իմանաք աւելի քան այժմ կարող էք հասկանալ իմ խօսքերից... բայց այժմ, ի սկը Աստուծոց, ինձնից մի պահանջէք այն, որ ինձ համար անշնար է։ Ինձ համար չափազանց ծանր են ձեր յանդիմանութիւնները, նրանք ինձ... աւելի կ'անբախտացնեն։

Հեղինէի երեսը կրակի նման վառւեց և աչքերը փայլառակեցին։ Երկում էր, որ նա սկսեց հասկանալ Սահառունու բերնից ակամաց դուրս թռչող կցկոտուր խօսքերի խորհրդաւոր իմաստը։ Այդ աւելի սասակացրեց նրա սէրը դէպի Սահառունին։

—Եսկ ինչքան վերստ է մնամ մեզ մինչև Պետականուակ, մեքենայաբար հարցըց Հեղինէն ցանկանալով ընդհանել լուռ թիւնը։

—Երկու հարիւր յիտուն կամ երեք հարիւր։

—Աւելին համարեա նոյնքան որքան Պ-օից այստեղ, ասաց Հեղինէն աշխատելով չը նայել Սահառունու երեսին։

Սահառունին նոյնպէս խուսափում էր նրա հացեացըից։

—Մնաք բարեւ, տիկին Հեղինէ, յուզւած արտասանեց նա, ես շուտով արտասանամ կ'երթամ և դուցի երկար ժամանակ չը տեսնենք իրար հետ։

Սահառունու ձայնը զողաց, բայց նա շուտով՝ զսպեց իրան և աւելի հանդիսա ձայնով շարունակեց.

— Խօսք աւէք, որ գոնէ երբեմն — երբեմն տեղեկութիւն կը հազորդէք ինձ ձեր առողջութեան մասին։ Տայ Աստուած, որ ջրերում բոլորովին առողջանաք։

Թէև Հեղինէն գիտէր որ Սահառունին գնալու է արտասահման, բայց այնուամենայնիւ նրա խօսքերը ճնշող տպաւորութիւն գործեցին նրա վրայ և նա ախտեր-ախտուր ասաց.

— Գնո՞ւմ էք... այզպէս շուտ... բայց չէ՛, լաւ էք անում, գնացէք, ես հաւատացած եմ, որ այսուհետեւ ձեր բաները աւելի յաջող կերթան քան մինչև այժմ։

Հեղինէն այդ խօսքերը այնպէս զգացւած արտասանեց, որ Սահառունին հազիւ կարողացաւ իրան զսպել ու սիրով բաց չանել նորա առաջ։

Յոյս ունեմ, որ կը դաք մեզ հետ մնաս բարեւ անելու, փոքր ինչ լոռութիւնից յետոց շարունակեց Հեղինէն։ մանաւանդ որ ձեր քրոջ գործերով ձեզ կարծեմ պէտք կը լինի գնալ Պեատիդօրսկ՝ ինչպէս ինձ ասաց Ասունին։

Սահառունին շփոթւեց. նա ուղում էր ծածկել Հեղինէից, որ ինքը գնալու է Պեատիդօրսկ, բայց դուրս եկաւ որ նրան արդէն յայտնի էր այդ։ Նկոթութիւնից նա չէր իմանում ինչ պտտասխանին Հեղինէն ընդհատեց լոռութիւնը.

— Ուրեմն, Դէօրդի Ալեքսանդրովին, ես ձեզ հետ մնաս բարեւ չէմ՝ անում, ցտեսութիւն, չէ՞։

Սահառունին պինդ սեղմեց նրա ձեռքը և, վերջին անգամը աղերսող հայեացք քցելով նրա վրայ, տենդացին արադութեամբ ցած իջաւ սանդրուղբներովը ու գնաց տուն։

Երկար ժամանակ ման էր զալիս նա իւր սենեակներում, վերջապէս ժամի տասնմեկին նորից զուրս եկաւ փողոցը։ Ոտները մեքենայաբար տանում էին նրան այնտեղ ուր ձգուում էր նա իւր հոգու բոլոր ոյժերով։ Բաւական ժամանակ մտայոց կանգնած էր նա Հեղինէի պատուհանների առաջ։ Վերջապէս երբ որ տեսաւ նա Հեղինէի սուերը սպիտակ նուրբ վարագոյրի վրայ, երև ակացութեամբ վերջին մնաս բարեւ ուղարկեց նրան ու մտածեց.

—Խեղճ անմեղ երեխայ, նա չի իմանում թէ ինչ կարող է ծագել զրանից. նա չը գիտէ, թէ ինչ հրդեհող կրակ կայ այդ զգացմունքի մէջ, և ի՞նչ, յանկարծ ես, ե'ս լինեմ նրա անբախտութեան պատճառը...

Այդ միաքը էլեքտրական հոսանքի նման ցնցեց Սահառունուն և նա թուլացած ընկաւ նստարանի վրայ:

Նատ ուշ էր, երբ որ վերջապէս գիշերացին սաստիկ խոնաւութիւնը մինչև ոսկրները թափանցելով՝ սախզեց նրան վեր կենալ ու գնալ տուն:

(Կը շարունակուի)

# ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՄԻ ԲԱԴ

ՄԱՐԿ ՏՈՒԷՆԻ

Վերջին տասնեւակ տարիներում դատաստանական աշխարհը երեան հանեց խելագարութեան շատ զարմանալի գէպքեր, որոնց մասին առաջ յիշատակւում էր միայն պատմութեան մէջ<sup>1)</sup>:

## I

Մի այլպիսի գէպք տեղի ունեցաւ, զորօրինակ, սորանից քսան և երկու տարի առաջ յանցաւոր Բոլգուինի գործում:

Բոլգուինը երեխացութիւնից սկսած յայտնի էր, իբրև չարասիրտ, քինապահ և կռւարար մի անձ: Մի անգամ նա մի տղայի աչքը հանեց և այնպէս մարսեց այդ բանը, որ ոչ ոք չէր կասկածիլ անգամ՝ թէ նա երբ և իցէ զղջալու հակում ունեցած լինի: Եւ քանի քանի այդ տեսակ անդռւթ գործեր էր նա կատարել:

Բայց վերջապէս մի անգամ նա իրան թոյլ տւեց մի արտաքոյ կարգի վարժունք: Մի օր երեկոյեան, խկոյն մութն ընկնելուց յետոյ, նա կանգ է առնում մի տան առաջ, զանգահարում է և երբ տան աէրը երեսում է դրնամէջ, Յոլգուինը արձակում է նորա վերայ առլրճանակը, նորան վայր գձում և պատրաստում է փախչելու. բայց խկոյն բռնուում է:

<sup>1)</sup> Տուէնը աւատեղ ծալլում է ան զատերը, երբ յանցաւորներին արդարացնում են խելագարութեան պատրակով կամ երբ խկական խելագարութիւնները պատժի են և թարգակում:

Դեռ երկու օր այդ գէպքից առաջ, նա իւր զւարձութեան համար վիրաւորած է եղել մի անգամալոյցի անսպատիծ կերպով:

Այս տեսակ անձ էր նօլդուինը: Նորա գործը շարունակում էր երկայն ժամանակ և մեծ աղմուկ էր հանում: Բոլոր համայնքը սաստիկ զարցացած էր նօլդուինի վերայ: Նատերը ասում էին, որ բաւական է, որչափ այդ խօսասիրո և անողոք չարագործը վիշտ է պատճառել իւր կեանքի ընթացքում, այժմ նա պէտք է օրէնքի առաջ պատասխանի և պատճենի:

Բայց այդ ասողները սխալւել էին:

Դուրս եկաւ, որ նօլդուինը իւր յանցանքը գործելու ժամանակը խելագար դրութեան մէջ է եղել: Արդարացնելու հնարը գտնւած էր:

Պաշտպանը աշխատում էր ապացուցանել, որ նօլդուինը սպանութեան օրւայ առաւտօնեան ինն և կէս ժամին խելագարւել էր և այդ դրութեան մէջ մնացել ճիշդ տասն և մէկ ժամ ու կէս:

Այս հանգամանքը մեզմացրեց գործած յանցանքը և հերոսը հրատարակւեց արդարացրած:

Ուրեմն, եթէ դատաստանը, զիցուք, ուշադիր եղած լինէր գրդուած տգէտ համայնքի ձայնին, նա պէտք է մխալմամբ սոսկալի պատօժի ենթարկած լինէր մի խեղճ մարդու, որ միայն կարձատել խելագարութիւն է տուացած եղել:

Նօլդուինը դուրս եկաւ դատաստանից մաքուր, ինչպէս աղաւնի: Եւ թէւ ազգականները և ծանօթները ըստ պարտականութեան բարկացել էին համայնքի վերայ, սորա կասկածների և կարծիքների պատճառով, այնու ամենայնիւ բանը քնացրին, իրանց բարկութիւնը տեղ չը հասցրին և համայնքը չը հալածեցին:

Նօլդուինների ազգը շատ ունեոր և հարուստ էր:

Այս գէպքից յետոյ երկու անգամ էլ կրկնեց նօլդուինի խելագարութիւնը և երկու անգամումն էլ նա սպանեց այնպիսի մարդկանց, որոնց հետ քէն էր ունեցել: Եւրաքանչիւր գէպքում սպանութեան կից պարագաները այնպէս ծանրացնում էին մեղը և եղեռնազործութիւնը կատարւել էր աջնպիսի անդութ և նենդ կերպով, որ եթէ նօլդուինի խելագարութիւն ան անունը չը լինէր, նորան կախած պէտք է լինէին առանց այլւայլութեան:

Այն էլ սակայն ասենք, որ այդ արդարանալը շատ էլ հեշտ գլուխ չ'եկաւ։ Առաջին յանցանքից ազատուելու համար հարկաւոր եկաւ նորա հասարակական և տոհմական դիրքի ազդեցութիւնը, իսկ երկրորդի համար—պահանջւեց նաև ո՛չ սկակաս, քան տասն հազար դոլլար փող։

Ասում են, որ սպանւածներից մէկին Բօլդուինը դեռ տասներկու տարի սորանից առաջ սպառնացած է եղել մեռյնելու։ Տեսէ՞ք հիմի բանը։ Այնպէս է պատահում, որ այն խեղճը անցնում է եղել խուլ փողոցով հենց այն րոպէին, երբ Բօլդուինի խելագարութիւնը բռնած է եղել և թշւառը ստանում է գնդակի հարւած մէջքի կողմից և ընկնում։

## II

Ցիշենք նոցնպէս Հակետի գործը։

Հակետը երկու անգամ հրապարակապէս յարձակւել էր գաւազանով գերմանացի մսագործի վերայ և երկու անգամ էլ լաւ ծեծ էր կերել մսագործից։

Հակետը փառասէր, հարուստ և լիբր մի մարդ էր, որ շափազանց պարծենում էր իւր ծագումով և տոհմով և երևակացրում էր թէ շրջապատողները պէտք է նորա հարստութեան առաջ գլուխ խոնարհեն։

Նա ամբողջ երկու շաբաթ հնարներ էր որոնում մսագործից իւր վրէժը հանելու և ահա մի օր, յանկարծակի խելագարուելով, զինում է ոսքից մինչև գլուխ, գնում է քաղաք և սպասում է փողոցներում մի քանի ժամ մինչև պատահում է մսագործին, որ հանգիստ ու հանդարտ անցնելիս է լինում իւր կնոջ հետ թեւ թեւ տւած։ Այն ժամանակ Հակետը թագ է կենում մի դռան ետև և երբ զոգը մօտենում է, նա դանակը խրում է մսագործի կոկորդը և իսկոյն սպանում։ Կինը բռնում է ընկնող մարմինը և գետին դնում։

Հակետը նայում է այրիացած թշւառ կնոջը և կատակի ձեռվ ասում, որ ինքը այնքան ճարպիկ և վարպետ կերպով է հարւածուել, որ այրին կարող է, եթէ ուզենաց, երկրորդ ամուսնութեան մասին ազատ հոգալ։

Այս եղելութիւնից յետոց Հակետը իւր մի բարեկամին պատա-

Հելուց ասել է, թէ իւր հասարակական դիրքը՝ համեմատած ան-նշան մասգործինի հետ՝ կարող էր մի այդ տեսակ անսպասելի վար-մունք առաջ բերել: Վերջին երկու հանգամանքը, այսինքն մաս-գործի կնոջը ասածը և այդ բարեկամին հաղորդածը, ընդունւել էին դատաստանի ժամանակ իրեւ խելագարութեան ապացոյցներ և Հա-կետը այդախով աղատւել էր պատժից: Առաջ երգւեալները չեն ուզում եղել այս ապացոյցները բաւականաչափ համոզիչ համարելու, որովհետեւ յանցաւորը սպանելուց առաջ խելագար չէ եղել երբէք և սպանութիւնից յետոյ էլ իսկոյն խելքը զլիսին է եղել, ինչպէս միշտ: Բայց երբ փաստաբանը յայտնում է, որ Հակետի հօրեղբօր որ-դին խելագար է եղել և որ ինչ զարմանալին է, ունեցել է Հակետի քժին շատ նման մի քիթ, պարզում է, որ Հակետին խելագա-րութիւնը բնականաբար կարող էր այցելել: Եւ նորան արդարաց-նում են:

Դեռ բանը որտեղ է հասնում, որ Հակետի կնոջ բարեկամները իրանց զիրաւորւած են զգում այս դէպքից:

Անկարելի է, սական, հաղորդել խելագարութեան այն զարմա-նալի դէպքերը, որ վերջին երեսուն քառասուն տարիներում զբաղեց-րել է հասարակութեան ուշադրութիւնը:

### III

Այժմ պատմենք մի քանի ուրիշ տեսակ դէպքեր էր:

Երեք տարի առաջ, զօրօրինակ, քննուում էր Զիւրջինի գործը, որ կայացած էր հետեւեալում: Զիւրջին անունով մի աղախին մի խուլ և մութ գիշեր մտնում է իւր տիկնոջ ննջարանը և դանակով մաս մաս է անում խեղճ կնոջը: Յետոյ մարմինը քաշ է տալիս սենեակի մէջ տեղը, ոսով կոխուառում, աթոռներով ծեծում և ամեն կերպ ջարգում: Յետոյ շարագործը պատում է մի փափուկ բարձ, միջի փետուրը դուրս թափում սենեակի մէջը, վերան ածում նաւթ և վառում, որպէս զի իւր յանցանքի հեաքը ծածկի:

Յետոյ վեր է առնում սպանւած տիկնոջ փոքր երեխացին իւր արիւնաթաթախ ձեռքերը և, դուրս դալով անից, վազում է ոտարո-բիկ ձիւնի վերայով մի հեռու ծանօթի տուն և այնուղ հնարաւմ է մի անհաւատալի, անմիտ պատմութիւն, իբր թէ օտար մարդիկ

եկել են նորա տիկնոջ տունը և կրակ տւել։ Յետոյ սկսում է աղեկտուր լաց լինել և չը մոտածելով, որ նորա ձեռքերի և շորերի վերաց եղած արխանը կարող է կատած յարուցանել, անզգուշաբար ակնարկներ է անում, որ նա երկիւղ է կրում, թէ մի գուցէ այն մարդիկը սպանած լինեն նորա տիկնոջը։

Նատ հարց ու փորձերից, աղախնի սեփական ցուցութիւններից և վկաների տւած տեղեկութիւններից բոլորովին պարզ կերպով հաստատում է, որ տիկինը միշտ բարի է եղել դեպի իւր աղախինը և որ սպանութեան դորժում ոչ մի վրէժի նշոյլ անգամ չէ եղել. նոյնպէս պարզում է, որ աղախինը ոչ մի բան չէ վեր առել կրակ տւած անից, մինչև անգամ ինքը առանց կոշիկի է դուրս պրծել, այնպէս որ կողոպտելու էլ մոտադրութիւն չէ ունեցել։

Ընթերցողը այժմ երեխ մոտածում է թէ այսուեղ արդէն անկասկած խելագարութեան դեպք է։ Բայց հենց այս անգամ նա կը խարւի։

Յանցաւոր աղախնի պաշտպանութեան համար ոչ ոք ծպտուն չը հանեց, խելագարութեան անունը չը ցիշեց։ Դատաստանը որոշեց խիստ պատիժ։ Չը գոնւեց մէկը, որ նահանգապետին դիմէր՝ պատիժը թեթևացնելու համար և յանցաւորը կախւեց իսկրյն։

## IV

Մի քանի տարի սորանից առաջ հրատարակւած էր լրագիր ներում մի պատանու բերանից քաղած հետաքրքրաշարժ մի խոստովանութիւն։ Ակզբից մինչև վերջը այդ խոստովանութիւնը մի անկապ, խառնինթոր ցնորաբանութիւն էր, ինչպէս և նորա այն երկայն ճառը, որ արտասանել էր կանափնատեղում կախւելուց առաջ։

Այդ պատանին բոլորովին անբացատրելի պատճառով որոնում է եղել այնպիսի մի հնար, որ տգեղացնի մի ջահիլ աղջկաց երես, որ ոչ ոք չը ցանկանաց նորա հետ պսակւել։ Ինքը սիրում չէ եղել աղջկան և մոտադիր չէ եղել հետը պսակւելու. բայց և չէ ցանկացել թոյլ տալու, որ մի ուրիշը պսակւի։

Նա չի համաձայնում եղել աղջկաց հետ մի որ և է տեղ գնալ

զբօսնելու, բայց և ոչ ոքի էլ թող չի տալիս եղել օրիորդին ուղեկցելու:

Սի անգամ պատահին հրաժարւում է այդ աղջկայ հետ հարսանիք գնալուց. բայց երբ տեսնում է, որ աղջիկը մի ուրիշ երիտասարդի հետ գնացել է, ինքն էլ գնում է և ճանապարհին սպասում է, որ պատահի լոցա կառքին և կամ աղջկան սովորի յետ դառնալ կամ թէ նորա ուղեկցին սպանի տեղն ու տեղը:

Աղջկայ երեսը տգեղացնելու միտքը ամբողջ տարի նորան հալածում է եղել: Եւ վերջապէս նա սկսում է իրագործել և յաջողեցնում է իւր մասդրութիւնը:

Սի անգամ, երբ աղջիկը նստած է լինում ընթրիքի իւր ծնողների, եղբայրների և քոյրերի հետ, չարագործը մտադրւում է այնպէս խփել ատրճանակը, որ չը վնասելով առողջութեան՝ խազխզի փոքր ին: Թուշը և տգեղացնի դէմքը. բայց գժբաղդաբար գնդակը մի քիչ թեքւում է և աղջկան սպանում:

Սպանողը մինչև իւր կեանքի վերջին վայրկեանը մեղադրում էր ճակատագրական այն բերմունքը, որ սովիսկել էր աղջկան շուռ տալ իւր երեսը հենց ուղիղ հարւածի ժամանակը: Եւ մինչև վերջն էլ նա համոզւած էր, որ աղջկայ մահւան պատճառը ինքը աղջիկն է եղել:

Այս անկասկածելի խելազուրկը կախւեց:

Բայց խելազարութեան խնդիր չը յարուցւեց:

#### V

Ինչպէս երեսում է՝ խելազարութիւնը աշխարհումն բազմանում է, իսկ յանցանքը անհետանում: Այժմ՝ էլ սպանողների անուն չենք լսում:

Առաջւայ ժամանակները, եթէ դուք մի մարդ էիք սպանած լինում, կարող էր պատահել, որ ձեր խելքը զլիներիդ չէ եղել. իսկ այժմ, եթէ դուք լաւ տոհմի զաւակ էք և հարուստ, ձեր վարմունքը հենց ինքը—կը համարւի ապացոյց ձեր խելազար լինելուն:

Նոյնպէս էլ՝ եթէ մի լաւ տոհմի անգամ, որ բարձր հասարակական զիրք ունի, եթէ մի բան գողանայ, նորան պաշտպանող վաստա-

բանը վերադրում է այդ վարմունքը մոլութեան, առանձին հիւանդուս սովորութեան կամ ուրիշ խօսքով՝ մի տեսակ խելագարութեան:

Եթէ բարձր դիրք ունեցողին մէկը վատնում է իւր կարողութիւնը անբարցական վարքով և վերջացնում է իւր կեանքը թոյնով կամ գնդակով, նորա մասին ասում են, որ նա ենթարկւած է եղել մտաւոր ընդունակութիւնների ժամանակաւոր շեղումին:

Արգե՞՞օք խելագարութեան վերագրելը չափազանցութեան չէ հասել: Արգե՞՞օք նա զէնք չէ զարձել անբարեխիղճների ձեռքին:

Վերջին ժամանակներս ամենայն մի սպանող այնպէս է գուրս բերւում, որ եղեսնազործութիւնը կատարւելուց առաջ՝ իբր թէ նա եղել է խելագարութեան ենթակայ:

Բաւական է, որ յանցաւորը խօսք բաց անի աստղների մասին, իսկոյն վճռում են, որ նա խելագար է: Եթէ նա լաց եղաւ իւր վիճակի վերայ, բարեկամները զլուխները թափ են տալիս մի տեսակ երկիւղով, որով ուզում են ասել, թէ «բանը վատ է, խելքը կարծես տեղումը չէ»: Եթէ յանցաւորը սպանութիւնից յետոյ շփոթւած է լինում; կասկածու և անհանգիստ, նա առանց այլ և այլութեան դասում՝ է խելագարների շարքում:

---

Իսկն ասած՝ մեզ հարկաւոր են օրէնքներ ոչ թէ յանցանքների գէմ; այլ մի յատուկ օրէնք խելագարութան գէմ: Ահա ուր է իսկական չարիքը:

## ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳ

### Յ. ԹՈՒՄԱՆԵԱՅԻ

Սըմ՝ գութան, վարի՝ գութան,  
Օրն եկել է, ճաշ գառել,  
Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,  
«Օրհնեալ է Աստուած», հօրօվէլ:

Քաշիր եզը, ուսիդ մատաղ,  
Քաշիր քաշենք, վար անենք,  
Ճիպտին արա, քշիր հօտաղ,  
Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատէրը գտնգատ գնաց—  
Քեօխվէն կը գայ՝ կը ծեծի.  
Տէրտէրն օրհնեց, անվարձ մնաց—  
Կը բարկանայ կանիծի:

Գէհ քաշեցէք, դէհ քշեցէք,  
Է՛լ մեր գառը քրտինքը.  
Զարչարւեցէք, աշխատեցէք—  
Ողորմած է երկինքը:

Սըմ՝ գութան, վարի՝ գութան,  
Օրն եկել է, ճաշ գառել,  
Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,  
«Օրհնեալ է Աստուած», հօրօվէլ:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԻՒՂՈՒՄ

ՄՈԳԱԿԱՆ ԼԱՊՏԵՐՈՎ,

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ: Փողովրդական ընթերցանութեան գործը մեզ  
մօտ միայն փորձերի շրջանի մէջն է և շատ նոր է: Մի քանի տեղերում  
միայն ծխական ուսումնարանների ուսուցիչները, ըմբռնած լինելով գոր-  
ծի օգտակարութիւնը, այս վերջին երկու տարիներում փորձ են փորձել  
ժողովրդական դասախոսութիւններ կարդալ հասարակութեան առաջ  
շատ թէ թիշ սիստեմական կերպով, բայց ոչ կանոնաւորապէս ամեն-  
տարի: Կարծիք կազմելու համար մեզ մօտ մինչ այժմ կարդացւած  
ժողովրդական դասախոսութիւնների բովանդակութեան մասին, պէտք  
է առնւազը ձեռքի տակ ունենալ այդ դասախոսութիւնները: Մեր  
ձեռքը հասած են այդպիսի դասախոսութիւններից միայն մի երեք  
հատ, որոնց առիթով մենք կ'աշխատենք մի քանի խօսք ասել մի-  
այլ անդամ: Այժմ մենք ուզում ենք լիշեցնել միայն, որ այդ փոր-  
ձերի մասին մենք առիթ ենք ունեցել մի անգամ արդէն լիշատա-  
կելու (այս «Մուրճ» 1890 թ. № 5, Ամսւայ քրոնիկ), յայտնելով  
միաժամանակ թէ ինչ փորձեր են արւել Ռուսիայում այդ գործի  
նկատմամբ: «Երուսիայում, ասում էինք մենք, եկել են ան եզրա-  
կացութեան որ ժողովրդին, մանաւանդ անզրագէտ ժողովրդին,  
աւելի հասկանալի լինելու համար, աւելի օգտակար են ժողով-  
րդական ընթերցումներ՝ ստեղծերի տեսարաններով» (պահանջնայ թենի ը տպանակարտինամ, նոյն յօդւած, երես 755): Ստեղծերի տեսարանները առաջւում են մի գործիքի մի-  
ջոցով որ մոգական լապտեր է կոչւում: Ի նկատի առնելով  
գործի նորութիւնը և այն յօցերը որ կապում ենք մենք ժողովրդա-  
կան ընթերցանութեան գործի զարգացման հետ, ուրախութեամբ

աեղ ենք տալիս ոռւսաց «Նեղյէլիա» շաբաթաթերթի ներկայ յօդ-  
ւածին <sup>1)</sup>), որի թարգմանութիւնը պատկանում է «Մուրճ»-ի աշ-  
խառակից Յ. ին:

Ա. Ա.

Խուլ աշուն է, Երկինքը մոխրագոն է և տժգոն, Սկսւում է մթնա-  
նալ, Փոքրիկ և աղքատիկ գիւղի ծարին մարդիկ ևն հաւաքւած, Կրտնց  
մեծ մասը մանուկներ ու գեռահաս երխառասարդներ ևն, Ծուած ցանկա-  
պատի մօտ մի ինչ որ բանի մասին վիճում է զիւղացիների մի խումբ։  
Թումբի վրայ նսուած են գոյնզգոյն հագուստներով կանաչք (օրը տօն էր).  
տան առաջ, սանդուխբների վրայ տեղաւորւել են երկու ծերուկի, կանաչք  
երգում են, ճչող ձաներ հանելով. մանուկները խաղում են, Հեռու, ճա-  
նապարհին, այնտեղ, ուր նա ծուռում է դէպի անտափն, երևում է տղալոց  
մի խումբ, որոնք ազնացել են լապտերը հանդիպելու։ Եթէ դուք հարց-  
նէք, ազդ ինչ «լապտեր» է; Ճեզ կը պատասխանեն, թէ «կայ մի աճնպիսի  
հրաշալի լապտեր, որը իրանից մեծ լոս է տալիս և կտաւի վրայ փոքրիկ՝  
պատկերից մեծն է հանում. զարմանալու մի բան է»։

Լապտեր գալը գիւղի համար մի նշանաւոր անցքէ, Դաշտավին պա-  
րապմունքները վաղուց աւարտւել են, շաապելու զործ չկաչ, զիւղացիները  
բաւականի, աղատ ժամանակ ունեն, լինում են տաղտկալի ժամեր։  
Աշնանալին և ձմերալին այս ժամանակը զրբի սիրահարների թիւը բազ-  
մանում է, Մեր գաւառում այս միջոցին սակաւ կարելի է գիւղ հանդի-  
պել, ուր այս կամ այն խրճիթում ընթերցումներ չը լինեն սարքւում. հա-  
ւաքւում են զրագէտները, հաւաքւում են անզրագէտները, ձրապին մօտե-  
նում է զրագէտներից մէկը, լաճախ մի որենից փոքրիկ աշակերտ։ Վարժ-  
չէ կարդում ընթերցողը, բայց ինչ հետաքրքրութեամբ են նրան լսում.  
իսկ եթէ զիւրքն էլ հետաքրքիր է, լսել ցանկացողներից անկարելի է աղատ-  
ւել, և զիւրքը անցնում է խրճիթից խրճիթ։

Այս ընթերցումները առաջ են գալիս նունպէս լնքնաբերաբար, ինչ-  
պէս և զրագիտառթեան ուսումնարանները։ Պահանջ է առաջ եկել—և ժո-  
ղովուրդը նրան բաւականութիւն է տալիս, որքան կարող է, թէև նւազւ  
բայց իւր միջոցներով։ Զը վախենալով չափաղանցութիւնից, մեծք կարող  
ենք ասել, որ ինչտեղ կան զրագէտներ, աճնտեղ կազմւում են ալդպիսին  
զրակականան երեկոյթներ, ընթերցումներ և նոյն խոկ զրականական շրջան-

ներ: Այս, դրանք գրականական շրջաններ են իրանց մշտական կարդացողներով և մշտական լսողներով: Նոյն իսկ ընթերցանութեան բնաւորութիւնը տարբեր է զանազան շրջաններում: մի տեղ գերիշխում են կրօնական բովանդակութեամբ զրքեր, մի ուրիշ տեղ գեղարւեստական և ալին: Յապտնի են նոյնպէս դէպքեր, երբ զիւղացիները մասնաւորապէս ընթերցումների համար վարձում են առանձին խրճիթ: Ալգափիսի ընթերցանութիւնների պահանջը վաղուց է հասել և զիւղացիները կազմելով ազգափիսի շրջաններ, ուրախութեամբ ընդունում են ան մարդկանց, որոնք լապտերով ընթերցումներ են սարքում:

Այն բոլոր զիւղերից, ուր երեացել է մոզական լապտերը, լսում են ձախներ, որոնք վկացում են ստուերաւոր պատկերներով ժողովրդական ընթերցանութիւնների ահապին աջողութիւնը և նրանց անկասկածելի օգուտը: «Ընթերցանութիւնները սկսելուց դեռ մի ամիս առաջ—զրում է Պետերգոփ զաւառի վարժուհիներից մէկը—զալիս էին ինձ մօտ հասակաւորները ու երիտասարդները հարցնելու՝ արդեօք չի եկել լապտերը: Լապտեր ստանալու օրը բոլորեցեանք հաւաքւած են եղել դաստառն և կէսօրւայ երեք ժամից սկսած սովասել են մինչև երեկուեան ուժ ժամը: Թէն ալդ օրը ընթերցում չէր նշանակւած, բայց՝ լապտեր սպասողներին բաւականութիւն տալու համար՝ ես ստիպւած էի նրանց մի քանի պատկերներ ցոյց տալու: Հէնց որ ստացւում է լապտերը, վարժուհուն պաշարում են հարցերով, երբ և ինչ պիտի կարդացւի: Կարդալու օրւակ մասին գիտեն արգին բոլորը: Բաւական է, որ ուսուցչուհին առէ ալդ աշակերտներից մէկին, որ իմանակ ամբողջ զիւղը: Եթէ անկարմար օր է նշանակւած, զիւղացիները իրանք խնդրում են մի ուրիշ օր ընտրել: «Ընթերցումներին զալիս են և 3—5 վերատ հեռաւորութեան վրաց կտնուող զիւղերից: Վարժուհիներից մէկը իւր տեղեկադրի մէջ պատմում է, որ իւր ընթերցումների մի ջոցին սլատահել է զիւղացիների, որոնք ապրում են եղել ուսումնարանից 15 վերատ հեռաւորութեան վրաց:»

Նշանակւած ժամին ուսումնարանը լքցւում է հիւրերով, բոլոր աշակերտները անպատճառ ներկայ են լինում, նոյն իսկ փոքրիկ պատրաստականը. թուզ են տրում և հին աշակերտները, զալիս են և աշակերտների ձնողները և ազգականները, նոյն իսկ ծծկեր երեխաններով կանաչք: «Դրան ինչու ես բերել», — պիտի տանը ում խնամքի պիտի թողնէի, բոլորը աւստել են: «Երբիմն ալճքան մարդ էր հաւաքւում—զրում է վարժուհիներից մէկը—որ զասարանում տեղ չէր լինում, նախասենեակը տանող դռները բացւում էին և ալնտեղ մարդիկ էին կանգնում: շատերն էլ նոյն իսկ փողոցումն էին կանգնում, լուսամուտներից նալում ու լուսանցքներից լսում: «Ընթերցանութիւնը լսելու համար թողւած էին տան գործերը, վկանում է մի ուրիշը, տեղական դինետնում ալդ օրը մարդ չկարու: Գործը երբեմն կատակերգութեան է հասնում: Օրինակ, մի ալսպիսի դէպք: մարդը տաճն է

թողնում կնոջը ծծկեր երեխակով, իսկ ինքը իւր փոքրիկ որդու հետ զալիս է ուսումնաբան։ Դեռ հազիւ սկսւել է ընթերցանութիւնը, մտնում է կինը։ Մարդը պահանջում է, որ նա տուն վերադառնաչ կինը չի համաձայնում, ասմալով՝ «ինչ պիտի անեմ տանը, ինքդ զնա, եթէ ուզում եսու։ Զի՞ որ բոլորը բաց է և խրճիթում մարդ չը կայ։—ի՞նչպէս թէ մարդ չը կայ։ Գրիշնաւկան տանն է, նա կը նաէ» (խոկ Գրիշնաւկան միայն չորս տմուկան է) Բանը վերջանում է նրանով, որ ծնողները տուն են ուզարկում ուսումնաբանում սովորող որդուն՝ տանը ու երիխալին նայելու, իսկ իրանք մնում են։ Տղան արաւառուքը աչքերին հեռանում է ուսումնաբանից։

Ընթերցանութիւնների ձգողական զօրութեան մասին վկացում են և թւերը։ Ակապէս Աջատոկի ուսումնաբանում առաջի ընթերցանութեան ներկային եղել 100 մանուկ և 80 հասակաւոր, երկրորդի ժամանակ արդին եկել են 170 մանուկ և 130 հասակաւոր, երրորդին—180 մանուկ և 170 հասակաւոր։ Դրանից լինող սկսեցին չը թուլ տալ փոքր պատրաստականցիններին և այնուամենապես հաւաքիցին 375 հոգի, մեծ մանուկներից 100 հոգի և հասակաւորներից 275, հինգերորդին—385 հ., վեցերորդին—400։ Պետքերզոֆի գաւառում ամեն մի ընթերցանութեան ներկայ են լինում 100—200 հոգի։

Դրազկնները ներկայ եղողներին աւելի հասկանալի դարձնելու համար, ուսուցիչը կամ վարժուհին լամախ ստիպւած են լինում բացատրել, բովանդակութիւնը իրանց խօսքերավ պատմել և նուն իսկ լրացուցիչ տեղեծութիւններ տալ Հարկ չը կայ ասելու, որ այս լրացումները ու բացատրութիւնները ոչ միայն վեասակար չեն, այլ և չափազանց օգտակար։ Դրանք կարձացնում են երկարաբանութիւնները, կենդանացնում ընթերցանութիւնը, առաջ են բերում լսողների կողմից նկատողութիւններ, հարցեր։ Այս բանի չնորհիւ ընթերցանութիւնը կորցնում է իւր այն հանդիսաւոր պաշտօնական բնաւորութիւնը, որ աչքի է ընկնում քաղաքներում կատարող ընթերցանութիւնների ժամանակ։ այս վերջիններում բարձր, սարի վրայ նստած կարգացողը և ցածր, գետնի վրայ գտնւող ընթերցողը շատ հեռու են թւեռում իրարից։ Ակապէս չի լինում գիւղերում, որտեղ ընթերցանութիւնների ժամանակ երբեմն տաք խօսակցութիւն ու վիճաբանութիւն է սկսում ընթերցողի ու լսողների մէջ։ Այս բանը շատ նպաստում է ուսուցիչների կառ վարժուհինների և հասակաւոր գիւղացինների մօտիկանալուն և աւգախառվ առաջ է գալիս առաջինների աղղեցութիւնը վերջինների վրայ ոչ միայն գիտութիւններ տարածելու, այլ և ուրիշ տեսակէտներից։

Ուսումնաբաններից շատերում սուերաւոր պատկերներով ընթերցանութիւնների ժամանակ, լինում է և երգեցողութիւն։ Երգում են և աշակերանները և աւարտածները, ով միայն ձախ ունի, «Գիւղացիններին երդը պատկերներից տեսի է դուք դալիս»—գրում են մեզ նարուշաւոր նահան-

գից, «Արգեցազութիւնը մեծ նշանակաթիւն ունի, ասում է վարժուհիներից մէկը, նա սրտաշարժ տպաւորութիւն է թողնում ներկայ հղողների վրան, որոնք նոյն խակ բարձրածախ խոսափանում են այդ բանը»:

Հետաքրքիր է տեսնել ինչպէս են վերաբերում գէպի ընթերցանութիւնը անգրագէտները: Մեղ գրում են, «Գիւղի համարեա բոլոր անգրագէտները, ով միան կարող է հետանալ խրճիթից, ուսումնարան էին հաւաքւում»: Ընթերցանութիւններ լաճախող անգրագէտների տակոր ցոյց տալու համար, առաջ բերենք մի քանի հետաքրքիր թւանշաններ մի վարժուուու տաղանդաւոր կազմած հաշվից: Եօթ ընթերցանութիւններին ներկայ են եղել՝ միջին և բարձր բաժանմունքի աշակերտներից 93 հոգի, նույն բաժանմունքի աշակերտուհիներից—58, հին աշակերտներից—162, հին աշակերտուհիներից—128, զրագէտ տղամարդկանցից—143, զրագէտ կանանցից—108, անգրագէտ աղամարդկանցից—82, անգրագէտ կանանցից—127: Այսպէս ուրիմն զրագէտ հասակաւորների թիւը (251) վերաբերում է անգրագէտ հասակաւորների (209) թւին զրիթէ ինչպէս 1<sub>2</sub>:1: Այս թւերը պարզ ապացուցանում են լուսաւորւելու ձգառումը անգրագէտների մէջ: Ոչ սակաւ հնասաքրքրելի դիսողութիւն է հաղորդում ուսուցիչներից մէկը: «Ընթերցանութիւններից էստու զրքեր էին վերցնում ոչ միայն գրագէտները, աչ և անգրագէտները, որովհետեւ նրանց որդիքը լաճախել էին կամ լաճախում էին ուսումնարանը», Գրագէտ, կամ կիսագրագէտ փաքրիկները մատչելի էին զարձնում զրքերը իրանց անգրագէտ ծնողներին, որոնք այս կամ այն պատճառով զրագիտութիւնից զուրկ էին մնացել: Դիւղի անգրագէտների վրայ ունեցած աղղեցութեան մէջ չի կարելի չը տեսնել ժողովրդական ընթերցանութիւնների ամենաօգտառէտ կողմերից մէկը:

Մողական լապտերը չի կարելի ցանկանալի հիւր չը համարել գիւղի համար: Տարաբաղաբար, նա զեռ ևս զիւղում մի հաղագիւա բան է, մի հրաշք է: Տիտին մի քանի զեմատուներ են գիւղերում հիմնած ժողագրգական ընթերցանութիւններ: Ազագէտ նրանք գոլութիւն ունեն Մոսկվակի, Պիտերգոֆի, Ելիսաւենցորդի, Ալեքսանդրիսկի և կարծեմ Ստարօսկօլսկի (Կուրսկ նահանգի) գաւառներում: Նունպէս Սմօլենսկ, Խարօնաւ նահանգների ու Մարտառվսկ և Օխանսկ գաւառների մի քանի ուսումնարաններում: Պետերգոֆի գաւառում ընթերցանութիւնները ահա հինգ տարի է գոլութիւն ունեն: Գաւառական զեմատուն տարեկան տալիս է 300 րապատկերներ լրացնելու և ընթերցանութիւններ վարտղների վարձատրութեան համար: Գործը ալապէս է զրւած: գաւառի բոլոր ուսումնարանները բաժանւած են ութ կարգի, նաև լուղ ուսումնարանների զիրքին և նրանց մէջ զոլութիւն ունեցող հաղորդակցութեան միջոցներին: ամեն մի կարգ ուսումնարանների համար զեմատուն ձեռք է բերել նոյնպէս պատկերների առանձին պաշար: Ամեն տարի պատկերները բաժանւում են կարգերի

մէջ սիստեմատիկաբար այնպէս, որ միենան պատկերները չարմար մի քանի ընթերցանութիւնների և զանագան դրագիների հետ (օրին. Պետրոս Մհծի մասին—Ֆիլոնովի, Պետրուչևսկու, Շալֆէնի դրագիները). ամեն մի կարգ ուսումնարանների մէջ թէ լապտերը և թէ պատկերները չըջում են ուսումնարանից ուսումնարան։

Ընթերցանութիւնները սկսում են հենց որ գիւղում երեսում է լապտերը և հետեւմ են մէկը միւսին շատ կարճ միջոցներից լետու. շատ անգամ լինում են ամեն օր. Լապտերի ամեն մի դալուն ընկնում է 4—13 ընթերցանութիւն, ամեն մի ընթերցանութիւնը տևում է երկու, երեք, չորս ժամ. Երբ ընթերցանութիւնների ու պատկերների պաշարը սպառում է, վերջնական ընթերցանութիւն է լինում, որտեղ ցոյց են տալիս ըստ ուր պատկերները և կարճ կերպով կրկնում են բոլոր ընթերցանութիւնները (հարցերով, կենդանի խօսակցութիւններով պատկերների առաջ), Յետու լապտերը պատկերների հետ միասին անցնում է հարեան ուսումնարանը և վերադառնում է միան միւս տարին, բայց արդէն ուրիշ պատկերներով. 1886—1887 ուսումնական տարւան միջոցին դաւառում կատարւել է 124 ընթերցանութիւն, 1887—1888—173, 1889—1890—297։

Որտեղ խառն ազգաբնակութիւն է (չուխօններ և ուռւներ), այնտեղ ընթերցանութիւնները առանձին կերպով են լինում. Փին ուսուցիչը նախապէս Փիններէն պատմում է բոլանդակութիւնը, լետու կարդում է ուսուերէն. Խերան նահանգի, Ալեքսաղրիկով գաւառում ընթերցանութիւնները գոյութիւն ունեն 1888 թ.-ից 39 ուսումնարաններում. Այդ տարին զեմստուօի վարչութիւնը այդ առարկալի համար նշանակից 1000 ր. և այդ փողով ձեռք բերին և լապտեր և 300 պատկեր 1889 թ. լուսւարին բոլոր ուսուցիչներին և ուսուցչունիներին հրաւիրեցին զեմստուօի վարչութեան յուներ, որտեղ նրանց ծանօթացրին լապտերի գործածութեան հետո Յետու ընթերցանութեան գործը կազմակերպեց այնպէս, ինչպէս Պետերզովի գաւառում. 1888—1889 թ. 39 ուսումնարաններում եղել է 134 ընթերցանութիւն, որին ներկայ են եղել 24,677 հոգի, աւսինքն ամեն մէկին 184 հ.։ Յանկապի գաւառում ընթերցանութիւնները սկսուած են 1888 թ. զեմստուօի 54 (լիտու 61) և գործարանների 5 ուսումնարաններում. Այստեղ—«Статистический ежегодникъ Московской губерніи» ասելով—դրանք իրանց տեսակի տօներ էին, ուր մեծ սիրով էին հաւաքւում թէ անդացիները և թէ շրջակա գիւղերից այնպէս, որ սովորաբար բոլորի համար տեղ չէր դանւում. Մոսկվաի նահանգի 43 գիւղերում 1888 թ. եղել է 124 ընթերցանութիւն, որոնց ներկայ են եղել 22,434 հոգի։

Այսպէս ուրիմ ստւերաւոր պատկերներով ընթերցումների օգուտը և աջողութիւնը գիւղում անկատածելի են. Այսոս միան, որ մինչև այժմ մի անհասկանալի նախապաշարմունք կատ լապտերի և նրա հետ կապ-

ւած ընթերցումների դէմ, ինչպէս լակտնի է, 1876 թ. հրատարակած «ժողովրդական ընթերցանութիւնների համար կանօնները» թուլ հն տալիս ընթերցումներ միմիայն նահանգական քաղաքներում և աչքի առաջ չունեն ոչ միայն գիւղերը, ազ նոյն խոկ գաւառական քաղաքները, ուր լապտերը պաշտօնապէս թուլ է տրւած 1889 թ.: Մինչև ակժմ չկայ կանօնագրութիւն, որը թուլ տար ընթերցանութիւններ հասակաւոր գիւղացիների համար, որոնք, ինչպէս տեսանք ստիպւած են բաւականանալ ուսումնական ան ան ական ընթերցանութիւններով, Միայն երկու տարի սրանից առաջ թեմական խորհուրդների մասին հրատարակած կանօնագրութեան մէջ ցուցունք կատ, որ մոգական լապտերը շուտով կը մտնէ և զիւղը: Չորրորդ ջողւածը ասում է՝ թեմական գաւառական խորհուրդների (որոնց մէջ մտնում են և ժողովրդական ուսումնարանների տեսուչները) պարտականութիւններից մէկն է Նորաստել ժողովրդական ընթերցանութիւններ կազմելուն: Մեզ լայտնի են գէպքեր, երբ քահանաների և տեղական ինտելիգենցիալի չնորհիւ, թեմական խորհրդի նպաստմամբ ընթերցանութիւններ են սարքւել, զիսաւորապէս կրոնական—բարուական բովանդակութեամբ և ժողովրդական գիտնական բաժանմունքավ: Ընթերցանութիւնը վարում է տեղական քահանան:

Սխալ է կարծել, որ ախպիսի ընթերցումներ սարքելը թանգ է նստում: նա աւելի շատ հոգս է պահանջում, քան ծախու: Ազդ զործը զլուխ բերելու համար մօտաւորապէս ահա, ինչ գումար է պահանջւում: Ամենալաւ լապտերը երեք պատրուզով և մի կրեմալիկրով (քրեմալիերկա) <sup>1)</sup> արժէ 50 ր., էկրանը <sup>2)</sup> իւր նեցուկով—10—15 ր. սակայն այս վերջինները աջնողութեամբ փոխարինուում են սաւանով ու սեղանով: Ամենաթանգ նստողը—պատկերներն են, որ կարելի է տառանալ 80 կոպէկից սկսած (և ոչ 2 ր. ինչպէս զրւած է ցուցակներում):

Պատկերները անպիսի ահազին նշանակութիւն ունեն, որ ամեն մի սկսող պէտք է իրան այդ կողմից լաւ ապահովացնի: Կատարեալ ուշագրութեան արժանի են ախպէս անւանւած է ժանագին պատկերները: Նրանք պատրաստում են մի անպիսի ձեռվ, որը անկասկած ապագայ ունի: Ազդ պատկերները ուրիշ բան չեն, եթէ ոչ գեկալկ օմաններ, կամ փոխադրութեամբ պատկերներ, որոնք առանձնապէս պատրաստում են (Դերմանիալում) մոգական լապտերի համար: Պատրաստում են թափանցիկ ներկերով անսոսինձ թղթի վրա: ցանկացող չետու ինքը կարող է փոխադրել ապակու վրա: <sup>3)</sup> Մեզ

<sup>1)</sup> Կրեմալիկը մի երկարթ է որը կէռ ծայր ունի:

<sup>2)</sup> Մի շրջանակի մէջ քաշած սաւան, որի վերայ ստացւում է պատկերը:

<sup>3)</sup> Դեկայլիսմաններ կարելի է ձեռք բերել Պետօ-ի խանութում (Ծո՛, Կար-

պատահել է այդ կերպ պատրաստած և ասլակու վրայ փոխագրած գեղեցիկ պատկերներ տեսնելու. Փիզիքական աշխարհազրութեան, ժողովրդագրութեան, անասնաբանութեան, պատմութեան վերաբերեալ, պատկերներ «Ռոբինզոն Կրուզովից», «Արաբական», Հառովի հեքիաթներից և ալլումնեն մի ապակի չորս պատկերներով արժէ 15 կ. Խնչ վերաբերում է կոմիկական պատկերների ընտրութեան—չառ շատ մեծ է».

Մենք համոզւած ենք, որ մողական լապտերի համար փոխագրւող պատկերները փալլուն ասլագայ տնեն. հեռու չէ այն ժամանակը, երբ նրանք պատւաւոր տեղ պիտի բռնեն ուսումնական պարագաների շարքում. նրանց ընտրութիւնը կը լինի առելի մեծ և աւելի մանկավարժական, քան այդ անում է ալ. Պետօն կամ ուսումնական պարագանների արհեստանոցը<sup>1)</sup>.

Առ այժմ դժւար է գուշակել, ինչ նշանակութիւն կունենան սուսերաւոր պատկերներով ընթերցանութիւնները ոչ միան գիտութիւններ տարածելու և հարբեցողութեան դէմ կուելու գործում, ոչ միան իբրև լուսաւորութեան գործիք, որը մատչելի է զարձնում զրգերը թէ գրագէտ և թէ անդրագէտների համար, ալ և իբրև մի հոգ, որի վրայ կը կատարէի վարժապետի կամ վարժուհու մոտենալը գիւղի հասակաւորների հետ:

B.

վահայ): Միայն ափսոս, որ ալ, Պետօն պատկերների ընտրութիւնը շատ անփոյթ է կատարում. նա համարեա չունի այն ամենալաւ պատկերներէց, որոնք յայտնի են արտասահմանում. Բացի գըանից զնները շատ թանգ են նշանակւած. իսկ նենուին այդպիսի պատկերներ բռնըովին անյայտ են: Այդպիսի պատկերներ, միայն արդէն ապակու վրայ փախադան, կարելի է գտնել օւսումնական պարագաների արհեստանոցում (Օճ. Տրուցան յլ.) մի արկղեկը և ապակիներով, որոնցից եւրաքանչիւրը 3—4 պատկեր ունի, արժէ 2 ը., բայց և այսուեղ գըանց ընտրութիւնը այնքան մեծ չէ, ոչ էլ այնքան աջող: Կարելի է բերել առաջնապէս Ս. Մ. Կոմիլիովայի դրավաճառառանոցից (Օճ. Լիտեանայ ուր. № 60):

1) Մողական լապտեր կառավարելու համար շատ լաւ ձեռնարկ է ալ. Երժելուկու գերքը. գինն է 60 կ.:

## ԵՐԿՐՈՐԴԱՆԵՐԸ ՄԵՐ ԼԵԶԻՈՆ

(Պր. Ս. Մալիսասեանի քերակ. մերնարկի առիթով)

Վաղուց արդէն չափանի է, որ երկբարբառ ասւածը՝ քանի տառով կուղի հնչիւնադրով, բնութեամբ անբաժանելի է, իրրե ի մի ձուլւած մի բաղադրեալ հնչիւն, խակ եթէ ազպէս չէ, այլ բաժանելի, նա երկրարբառ չէ: Մխիթարեանք իրանց գերականութիւններում մեր առ, էս, ու բառամասերը համարել են երկրարբառ, և որովհետեւ երկրարբառն անբաժանելի է, այս պատճառով այս բնութեամբ իրարից բաժանելի հնչիւնները բռնութեամբ անբաժանելի են շինել և պատւիրել վանկելու ալսպէս—հիւսնդ, զիւական, թեւով, ձեւաւոր, հաւատաւու, հաւատար, ծով ալին, հոգեւոր: Ահա թէ ինչ կը նշանակէ բանը զլիսլվալը ըմբռնել: Նրջեցէք կրկին անգամ, և խակոն կերենի բնականը և ուղիղը: Կարողացէք աջից ձախ նրանց այդ երկրարբառները և կը ստանաք ուղիղ անբաժանելներն, ինչպէս՝ ւա, ւե, ւէ, ւը, ւի, ու կառ վո, ու կամ վու, ևօ: Ահա սրանք են, որ բնութեամբ անբաժանելի են, ինչպէս—հիւսնդ, զիւական, աւերակ, չաւետ, թիւն, չաւետեան, հոգեւոր, սովոր, աւառը, ժողովարդ, առաւատ:

Նկատեցէք ուշի ուշով, և կը տեսնէք, որ անբաժանելի բառամասերի մէջ բաղաձան հնչիւններն սկիզբն են ընկնում, խակ պարզ ձախնաւորները՝ միրջը: Եթէ հակառակը լինի՝ նա բաժանելի է: Այսպէս ով—բաժանելի է, խակ վո կամ առանբաժանելի:

Այս կանոնին հնթարկւում են և բռն երկրարբառները, որովհսիք են—ի, եա, եօ, եռ (որ հնումը գրում էր նա, խակ ալժմ իւ): Մրանցում էլ կիսաձախնաւորը կամ կիսաբաղաձանն սկիզբն է ընկնում, խակ պարզ ձախնաւորը՝ վերջը, հակաղարձ եղածը բաժանելի է, ինչպէս նա՝ անբաժանելի է, խակ առ—բաժանելի:

Բաժանելի և անբաժանելի լինելն իմանալու համար մեր լեզւի մէջ մի գեղեցիկ, պարզ և կարճ օրէնք կամ, և այդ օրէնքն այս է: Ա. մեն բաղաձան և կիսաբաղաձան իր չաջորդ ձախնաւորից տն բաժան ելի է:

Ուշադրութեան առէք ալս օրէնքի մէջ «ամեն բաղաձայն» ասւածը Ուրեմն անբաժանելի են ոչ միայն առ, առ, առ և ազն, ալլ նաև թա, թե, թի, նա, նե, նի, և առ հասարակ բոլոր բաղաձայնները անբաժանելի են իրանց չաջորդ ձայնաւորներից: Խոկ սրանից ինչ է դուրս գալիս,— այն, որ առ, իւ, և ալլ երկբարբառ չեն, որովհետև զրանց բաղադրական մասերը բաժանուում են, բաց առ՝ առ, և ալլ նույնույս երկբարբառ չեն, որովհետև թէպէտ ալդ ձայնները չեն բաժանուում, բայց ալդ հանգամանքը լեղւի ընդհանուր օրէնքիցն է բղխում, վերաբերում է բոլոր բաղաձայններին, և ոչ մասնաւոր հնչիւնների առանձին լատկութեանը: Ուրեմն մեր լեղւի մէջ՝ բնական տեսակէտից՝ չը կալ երկբարբառ հնչիւն, ալլ կառ միան մէկ՝ հաստ կիսաբաղաձայն կամ կիսաձայնուոր եը (ֆ), ինչպէտ եա=պա, եու=պու Ալս կիսաձայնաւոր եըն մեզանում երեք տառով են նշանագրում՝ ե, է և, տառերով, թէն հնչիւնը միւնունն է: Ի հարիէ, ոս մի գրական անկատարութիւն է միայն,

Պ. Մալխասեանի նոր հրատարակած ձեռնարկի 11-դ երեսում և 23-դ չողւածում տպւած է հետեւեալը.

«Վերջին բաց վանկ կազմող իւ (իվ) երկբարբառը չեշտը կորցնելիս դառնում է առ. օր. թիւ—թուն, թուել, անիւ—անուն, տիւ—տուի, տուէ, վազիւ—վազուեան և ալճու»:

Ալսովէս ահա պարոնն ընդունում է, որ բառերի վերջում իւը երեսում բարբառ է և բաց վանկ, ալսինքն ձայնաւոր, և սրա համար է, որ ալդ իւը հոլովականում դառնում է առ: Խոկ եթէ փակ վանկ լինէր ալդ իւը, ալսինքն՝ ոչ երկբարբառ և ձայնաւոր, ալլ բաղաձայն, արդիօք այն ժամանակ ել զա կը դառնար առ:—Ո՞չ! Այդ արդէն ինքը ցուց է տալիս 18-դ լոգւածում, որ է հետեւեալը.

«Ք և ու ձայնաւորները, որոնք գտնուում են բառի վերջի փակ վանկում, շեշտը կորցնելիս՝ փոխուում են և, որ շատ՝ անզամ սղուելով՝ բուլորովին անհետանում է, օր. զին—զընու—զնու. սիրտ—սըրտի—սրտի. Դաւիթ—Դաւ.թի, զաւիթ—զաւ.թի....».

Ուրեմն բառերի վերջերում:

†+ամեն բաղաձայն=0 (զէրո)+...

†+ւ կամ վ=ու+...

Ալս եզրակացութեանը համելու համար պարոնն ուղեցել է տրամաբանօրէն վարւել, մտածելով ալսովէս. Անթէ փակ վանկերում ի տառը սղուում է, տապա ուրեմն իւ (իվ) վերջաւորութեան մէջ ևս պէտք է սղով ալդ ին, բայց որպէս զի իւք ու դառնալը ուղիղ համարենք, ևկ առենք զա երկբարբառ է և բաց վանկու: Մենք տեսնում ենք զրւած թը—ւու, թըով և մինչեւ թվին, թվական, որ Մխիթարեանները համարում են ուսմկական, ըստ որում ինչ որ բնական է, այն զրանց համար ուսմկական է: Տեսնում ենք՝ քիւ—քըւու, և քըւի, ալլ և՝ քըւէ, քիւ (տես այս բառը

Հայկագեան բառարանում): Վերջապէս տեսնում ենք, որ ազդ կարգի բառերը մեր նախինիք գրել են ոչ միայն ըով և ուով, ոչ միայն սղելով, այլ և վով, և ւով: Յւ այս նրա համար որ ըստ և ռազ մօտաւոր ձախներ են, իսկ և և չ նոյնահնչիւն գրեր: Որքան սովորել են այդ գրերը ջոկ ջոկ հնչիւն համարել, որքան աշխատել են դրանցից մէկը ձախնաւոր շինել և միւսը բաղաձայն—չեն կարողացել իրանց նպատակին հասնել: Այսպիսի մի տանջանքի մէջ են այսօր և մեր աշխարհիկ լեզուով գրողներից շատերը, որոնց կարդն է ընկել և պ. Մալխասեանը:

Այս տարի Ներսիսեան դպրացում տիրապետում էր երեք տեսակ ուղղագրութիւն—Պուօշեանցը ոովորեցնում էր իր պոչաւոր ռառած և ռաճ, Ասիլեանը՝ և ու, իսկ Մալխասեանը իրեն նոր լեզուագէտ՝ Վ. Արդ Բնչակէս է եղել, որ իր ձեռնարկում հրապարակ է եկել փիւնի և ուի պոչից միատեղ բռնած: Զէր կարելի արդեօք մի կանոն էլ զրա համար թխել, օրինակ այսպիսի—«Ճուխտ ու-երից առաջինը դառնում է և, օր. ասում, ասուել, թւում, թուել, կատուի, կատում, բագուի, բագումը, լեզուի, լեզուամը, առել, առովիւն», և ապացուց էլ կը բերէր, որ ազգիս ին գրել մեր՝ 19-րդ դարի՝ նախնիքը...

Դ. Ա.

## ԳՐԱԽՈՍՏԻԹԻԿԱ

Ելիզէ Ռեկլին; Ռուսական Հայաստան կամ Արաքսի աւագանը,  
Ռւրմիա լիճ և Առաջաւոր Ասիա; Թարգմանեց Միաբան; Վաղարշա-  
պատ, ի տպարանի սրբոյ Կաթ. էջմիածնի, 1891 թ. փոքրագիր 166  
երես, տառ № 12, գինն է 30 կու.:

Ելիզէ—Ռեկլիւի աշխարհագրու-  
թիւնը իւր մեծ ժաւալով, իւր բազ-  
մակողմանի և մանրամասն տեղեկու-  
թիւններով, մի նշանաւոր գանձ է  
աշխարհագրական մտանազրութեան  
համար: Խօսելով մի երկրի մասին՝  
Ռեկլիւն նկարագրում է երկրի տե-  
ղագրութիւնը, նորա պատմական ան-  
ցեալը, նորա ժողովրդի կեցութիւնը,  
նորա պաշտած կրօնը, նորա քաղա-  
քական զիրքը, նորա զբականու-  
թիւնը, նորա տնտեսական լիճակը,  
պարագմունքները, մի խօսքով տա-  
լիս է մի երկրի մասին ձիչգ գաղա-  
փար կազմելու համար ըստ կարե-  
լովն մանրամասն նիւթ: Հումքոլզի,  
Ռիտառի, Ռեկլիւի նման աշխար-  
հագիրները իրանց աշխատութիւննե-  
րով շինում են աշխարհագրութիւնը մի  
շատ բովանդակալի և հետաքրքրա-  
կան առարկա, արժանի գիտնականի  
խոր ուշադրութեան և ուսանելի լուրջ  
ընթերցողի համար:

Ելիզէ Ռեկլիւի բազմահատոր

աշխարհագրութեան մէջ զետեղւած  
են հետաքրքրական գլուխներ և Ան-  
գըրկովկասի, Փոքր-Ասիաի ու Պարս-  
կաստանի մասին:

«Միաբանը» (Յածկանուն) մի լաւ  
միտք է զացել ծանօթացնելու մեր  
հասարակութիւնը Ռեկլիւի աշխար-  
հագրութեան ալս վերջին մասերի  
հետ և արդէն թարգմանել է հետեւալ  
գլուխները»

«Ռուսական Հայաստան կամ Ա-  
րաքսի աւագանը», «Ռւրմիա լիճ»,  
«Առաջաւոր Ասիա», «Վաղիստան,  
Հայաստան և Քիւրդիստան», կամ մի  
խօսքով՝ Տաճկա-Հայաստան», «Փոքր-  
Ասիաի, Ասորիքի, Պաղեստինի և  
Միջագէտքի բնակիչներն ու կրօն-  
ները»:

Միաբանը մտադիր է, և թէ հան-  
գամանքները թուլ տան, աւելացնել  
սորանց և «Կուրի աւաղանը», Հորոխի,  
Բիօնի և Խնդրուրի աւաղանները»,  
«Գաղպատան» և «Պարտկաստանի բնա-  
կիչներն ու կրօնները»:

Ներկաւ գրքոկում, ինչպէս տեսանում է մեր ընթերցողը, ամփոփւած են վերև վշած երեք գլուխները միան։ Մեզ համար ամենահնատաքը քրականն է, ի հարկի, առաջին վլուխը, որի վերաէ և կանդ կառնենք։

Միաբանը լւր կողմից դրել է մի քանի ծանօթ ու թիւնն եր ընագրի զանազան կէտերի վերաբերմամբ, որոնց մեծ մասը սական անուների բացարութեանն է նւիրած։

Ծանօթութիւնները կարգացւում են հետաքրքրութեամբ, բայց նոցաքանակաթիւնը քիչ է և թարգմանիչը կուրծս կամաւ խուսափել է նոցա շատութիւնից։ Մենք կարծում ենք, որ թերի կամ սիսալ կէտերի մասին, ծանօթութիւններ շատ հարկաւոր են, Միայն լւա կը լինէր նոցազետեզել լոգածների վերջում և ոչ տողերի տակ, որովհետեւ զբուղի դիրքը փոքր է, իսկ ծանօթութիւններից մի քանիսը կուրող են շատ մեծ լինել և մի քանի երես տեղ պահանջնել, որ մեծ անշարժարութիւն է ընթերցողի համար։

Առաջին գլուխը հեղինակը նկարագրում է Արաքսի աւազանը, նորահոսանքի վերին մասներից, ակներից, մինչև վերջը։ Այդ հոսանքի ընթացքում նա կանդ է առնում ան բոլոր տեղերի վերակ, որոնք մի որ և է պատճառով նշանաւոր են, Ազգակն և կողքի աղանանքը, Արաբատը, Արագածը, Արկուռուքանզելը, Սկանանակ լիճը, Երևանը, Էջմիածինը, Նախիջևանը, այդ անդերում ասրբած ժողովութները, Աւելորդ չենք համարում անել մի քանի քաղաքածքներ։

Կողը աղանանքը, Հինաւասանից զուրս, Մերիս ամենահին, բազմա-

թիւ գարեր շահագործւած բրածոն է, նա աշխարհիս ամենամեծ աղաքարի զանդւածներից մէկն է։ Ինքը աղաքեր լւառը կազմւած է բաղմնարանզ շերաերից։ Աղափին ամենաբարձր և ամենասսորին շերտերը գեռ չեն արդիւնագործւած։ Քարհատները բանում են միան միջին շերտում, որի հաստութիւնը 30—64 մետր (խանի գաղի չափ) է։ Միջին արդիւնաբերութիւնը 40 տարւակ ընթացքում, 1836-ից էտու, 4000-ից բարձրացել է 16,300 տակառաչափին։

Արարատ սարը, Հակաստանի բարձրաւանդակի պատճական աչք կենորոնը, լարոնի է և Մասիս անունով։ Առաջին անունը հաւանականաբար արամէական ծագումից է, իսկ վերջինը բուն հակական է։ Արարատի լեռնազին բուսականութիւնը նունն է, ինչ և ալպիանը բայց տեսակների թւով նա չէ հասնում ալպեանին։ Մասիսը չը նայած լւրձների ահազին քանակութեանը, որ ծանրանում են նորա զագաթին, գրեթէ բոլորովին անջուր է։ Հաւանական է, որ ձիւնի և անձրեի ջրերը կորչում են գետնի հեղքւածներում և ջանում ստորերկրեալ խոռոչներում։

Արագածից նոնպէս կորչում են ջրեր, որոնցից պաշար է ստանում սարից հարաւ զանուղ մի լիճ, Ազգը գեօլը, որը ծնունդ է տալիս Սև ջրի ակունքներին (որ թափւում է Արաքուը)։

Սիանակ լիճը երկու ու կէս անդամ աւելի մեծ է, քան Ժմենիվի լիճը։ Խորութիւնը միջին թւով հասնում է 45—75 մետրի (գաղի), և ճի ջարը քաղցր է։ Զիները բազմաստակ չեն։

բայց առաստ են քանակութեամբ։ Հճի հիւսիս-արևմտեան անկիւնում՝ մի կղզեակի վերակ շինւած է Սևանի վանքը, որ ինն գար չարունակ հըս-չակւած է Հաջաստանում։

Արագսի հայտում չափազանց ներդում են մարդուն եղանակի ծալրահեղութիւնները։ Մինչդեռ ձմեռը Երևանի մօուերքը ցուրտը հասնում է մինչեւ 30—35 աստիճանի զրովից ներքեւ (միջին թւով լուսւարին—15°), ամառը չողերը անցնում են +40 աստիճանից։ Բարեբազզաբար չողերի ժամանակ արտեղ փշում է երեկոները մի քամի, որ գալիս է սարերից։

Այս հավտում բնակւող դլխաւոր ազգը հայերն են։ Ամբողջ ազգը, որ սովորաբար երեք, իսկ մի քանի հնդինակներից չորս միլլիոն է համարւած, հաւանականորին պէտք է, որ երկու միլլիոնից աւելի չը լինի։

Բոլոր քերականները հայոց լեզուն դասում են արիական ընտանիքում։ Բառերի և քերականական ձեւերի հարատութեամբ հայ լեզուն հաւասար է լուսականին, ունինալով կազմութեան նուն ձկութիւնը և բարդ բառեր ստեղծելու անսահման կարողութիւն։

Վանի երկրում ժայռերը ծածկւած են հայկական բենապրերով։ Մինչև չորրորդ դարը հայկական փշատակարանները գրւում էին լոյն և պարսիկ գրերավ։ Սկսած Գ դարից, երբ 300 դպրոց էր բացւած հայ պատանիների համար և գրականութիւնը սկսել էր ծաղկել, հայերէնը ունեցաւ սեպական ալյուրէն, որ մինչեւ օրս էլ դործածութեան մէջ է։ Տասնեւորորդ դարում լանկթամուրի

արշաւաճքը լանկարծակի վերջ զրեց Հաջաստանի դասական գրականութեան։

Ներկապւմն հայերը չանք են գործ գնում իրանց որդիներին ուսման առաեւլութիւնները մաստակարարելուն չը կայ հասարակութիւն (?), որ զալրոց չ'ունենալ և չը պահե (?)։ Գիտական և գրական չարժուածը շարժուածը շատ զօրեղացել է հայերի մէջ։ Գրականութիւնը մկում է զարդացնել խրսլոր ճիւղերը և հարստանում է օտար նշանաւոր գրքերի թարգմանութեամբ։ Հայ լրագիրներ հրատարակում են Պոլսում, Թիֆլիսում և ուրիշ քաղաքներում։

Հայերը մեծ մասում ունին սե, խոշոր և տարփալի աչքեր, երեսուն միշտ քաղցրաբարպ, դրեթէ մելամալձուա։ Ի բնէ թիւն հանդարտ, բայց քաջութեամբ չետ են մղում իրանց վերակ չարձակւողներին, ինչպէս սպիտ ապացուցեցին 18-րորդ դարի սկզբում եօթնամեւակ պատերազմի ժամանակ։ անկախութեան համար, որ մղեցին նոքա ընդդիմ պարսիկների՝ Արաբաղի լեռներու մեջ անուհետեւ բազմաթիւ տեղական ապստամբութիւնների ժամանակ ընդդիմ թուրքերի։

Վրացի և թուրք զիւղերում ու քաղաքներում նոքա նոյնչափ հարկաւոր են, բայց և նոյնչափ առած ու արհամարհւած, որչոփ հրէաները արեւեան կերպարում։ Այսու ամենանիւ, առանց մեծ չափազանցութեան կարելի է հայ զիւղացուն վերագրել Տուրքների առածը։ «Հայերը աշխարհի ամենալաւ և ամենասպնիւ ժողովուրդն են»։

Թողնելով ընթերցողին կարգալու մանրամասնութիւնները և ծանօթանալու միւս զլուխների հետ, մենք մեր կողմից օգտառում ենք դէպքից նշանակելու ազատող մի քանի կէտերի վերաբերմամբ կարձ նկատողութիւններ։

Արագածի անւան մասին Ինկլիւն ասում է հետեւեալը.

«Ալլահն զեօղը (Աստուծոյ աչքը), կամ աւելի ճիշդ՝ Ալա-դեօղը, որ է «Խալտարդէտ լեռան»—եթէ սոկաղն այս բառը հայկական Արագածի թըրքական ձեւ չը լինի—Մատիսի դէմադիմն է»։

Թարգմանիչը համարում է ուղիղ վերջին մեկնութիւնը, որովհետև «քնիկներից կոչւում է ոչ թէ Ալադեօղ, այլ Ալա-դեաղ» Ալա թրքական բառը զործ է զբուժմ հայերէն ծաղկեաց ձագեաց ծաղկանց բառերի տեղում։

Ալադեօղ, կամ Ալլահն զեօղ անունը, որ մասել է աշխարհազրութիւնների մէջ և նշանակւած է քարտէկդներում բոլորպին սխալ է։ Բնիկները միրաւի անւանում են Ալադեաղ, որ հաւանական է թէ, ծաղած լինի Արագածի բառից, բայց ինքը Ալադեաղ, անունն էլ ունի իւր հշանակութիւնը, որ համապատասխանում է Արագածի ձերին և տեսքին։ Ինչպէս լավոնի է Արագածի գաղաթը միապաղաղ չէ, այլ բաժանուած է մի քանի մաս։ Այդ ձեղքւածը լավանի է հաչա անունով։ Գեա ազ բառը նոյնանիչ է հաշաբին։ Եւ որովհեաւ ձիւնը Արագածի զլիսին երեսում է հեռւից ոչ անընդհատ ծածկողմթով, այլ տեղ տեղ, պիտի սակաւոր, ուստի հասկոնալի է, որ Ալադեաղ կամ «իսպարդէտ ձեղք»

անունը կարող էր լարմարւել այդ սարքին։ Իրուն նոյնալիսի օրինակ՝ կարող ենք առաջ բերել, Տաթեսի մօտ եղած Գևազպել լեռառը, որ համապատասխան իւր անւոն՝ ունի ձեզքւած, որի միջով և կատարւում է հաղորդակցութիւններ։

Ոհկլիւն ջրի սակաւութեան կողմը համեմատում է Արագածը Արարատի հետ, ձիչդ է Արագածը մինչև տափարտիկը քիչ ջրեր է հասցնում, բայց նա շատ էլ աղքատ չէ ջրի կողմուց։ Նա տալիս է Դավիչաց, Ամբերդ, Կորանգու (Մանիթաշաձորում) և ուրիշ մանր զետակներ, որոնցից օգտառում են թէ լեռնցիները և թէ շրջապատող զիւղերի շինականները։

Աշխարհազիրները սխալ են գործածում Բամբակ անունը։ Նա մեր երկրում լայտնի Փամբակն է։ Թարգմանիչը նոյնական է Բամբակ անունիւնը (երես 20)։

Զանգեազուր անունի տեղ թարգմանիչը զործ է ածում Զանգազուր, որ խկապէս չի համապատասխանում բնիկների արտասանութեան և չէ ընդունած նաև խոկ պաշտօնապէս։ Զուր վերջաւորութիւններով աշխարհազպական անուններ շատ ունենք մեր երկրում։ Մենք կարծում ենք, որ զա ձոր բառի աղճատումն է։

Ոհկլիւն ասում է, որ վերջին 77—78 թւին՝ Արգահանի զատառը, Կուրի վերին հովտում և Կարսինը, Արաքսի աւաղանում, մեծ մասամբ զրկւեցին իրանց մահմեղական բնակիչներից և ի տրիտուր ստացան բաղմաթիւ հակեր, որոնք գալիս էին Նիդրատի վերին աւաղանից և նորովի ափերից։ Այս վերջին տեղեկութիւնը

ախալ է, որովհետեւ բաղմաթիւը  
հայ դադթականներ չեն բնակել այդ  
կողմերը:

Հաջոց նոր լեզվի մասին Ռեկ-  
լիւն ասում է, որ նա շատ բառեր,  
բացատրութիւններ առել է թուրք և  
վրացի լեզուներից: Ճիշդ է, թուրքե-  
րով և վրացիներով շրջապատած տե-  
ղերում հայերը իրանց լեզվին խառ-  
նել են այդ ազգերի լեզուներից և  
երբեմն շատ մեծ չափով, բայց նոր  
լեզուն ազգերի է զվասւորապէս  
թուրքերէնից և համարեա մնացել է  
ազատ վրացերէնից:

Կաթուղիկոսի ընտրութեան մա-  
սին ասում տեղեկութիւնները սիսալ  
են և անկատար, ինչպէս այդ նկա-  
տում է և թարգմանիչը:

Թալիշի մասին Ռեկլիւն ասում  
է, որ «թուրք է թէ նա եղած լինի  
հակական թագաւորութեան մալրա-  
քաղաք», թալիշի աւերակ եկեղեցու  
արձանագրութիւնից երեսում է, որ  
նա կոչում է եղել Արուճ, իսկ նո-  
րա պատմական նշանակութեան մա-  
սին, իբրև մալրաքաղաքի, վրաստա-  
կութիւններ չը կան: Աւերակը մնա-  
ցել է Բագրատունիների ժամանակից:  
Ով դիտէ, գուցէ նա ան հին պատմա-  
կան կէտակից մէկն է, որի մասին ակ-  
նարկներ կան Փաւասոս Քիւզանդում:

Գրքովկի մէջ շատ տեղ փոխա-  
նակ թուրք, կամ թիւրք բառի գործ  
է ածւած թաթար բառը: Ռուսաց  
տարանք բառը շատ սիսալ է մեր  
երկրի վերաբերմամբ: Ռուսները ծա-  
նօթացել էին նախ Պաղանի և Աստ-

հետև ասիացի մահմեդականներին  
սկսել են անւանել թաթար: Նոքա  
առատարին» անւանում են նոյն իսկ  
չաշաններին, չերքեղներից, լազգի-  
ներին: Մեր երկրում ապրողները  
թուրքեր են: Եթէ եղել են թաթար-  
ներ, նոքա հալել են և կորել, ուստի  
կրկնել ուրիշների սխալները—բոլո-  
րովին անտեղի է:

Ակաքանով բաւականանք առ  
այժմ:

Թարգմանչի լեզուն թէն ճոխ է  
բառերով, բայց ծանր է և տեղանոր  
անկանոն: Թարգմանիչը սիրում է  
գործ ածել զրաբառ ձեեր և խրթին  
բառեր: Ի՞նչ հարկաւորութիւն կար  
զրել «Մհեմ-Արարատը իւր երկնեղ  
գաղաթը վեր է համբարձրել և  
հիւսիս-արևմուտքում», երբ կարելի  
էր ասել՝ բարձրացրել: Աղի շեր-  
տերի հաստութեան մասին ինչ կա-  
րիք կատ զրաբառ «թանձրութիւն»  
բառը գործ ածելու: Եւ այլն:

Գրքովկին կցած է երկու ցանկ,  
մէկը այն յատուկ անունների, որ  
պատմանում են այդ զրքի մէջ ամ-  
փոփւած զլուխներում, միւսը—այն  
հեղինակների, որոնց աշխատութիւն-  
ները ազրիւր են ծառացել լողած-  
ները զրելու համար:

Գրքովկը թէն աղատ չէ տպագ-  
րական սխալներից և կէտազրական  
մի քանի անհարմարութիւններից,  
այնու ամենանիւ բաւարար տպաւո-  
րութիւնն է անում ընթերցողի վերակ:  
որ սովոր է մեր գոււառներում տպած  
զրքերի մէջ անթիւ սխալներ տէսնել:

Ք.

ՏՈԼՍՏՈՅ, կոմս Լ. — «Առաջ ուղարկեցից Խորինզոն»: (վոքբերի համար) թարգմանեց փիլիպպոս Վարդանեան: Թիֆլիս, տպարան Յովհաննէս Մարտիրոսեանի 1891 թ., գինն է 20 հ.:

Գլուխովի<sup>1)</sup> Ռոբիզոնը Առար Գրքից  
իեառ, կարելի է ամենատարածւած  
զիրքը համարել երկրագնդիս վերակ:  
Այդ նշանաւոր գործը թարգմանւած  
է բոլոր կուլտուրական աղքերի լե-  
զուներով: Այդ վերջններս օգուտ  
քաղելով Գրքովից մինչև ան-  
գամ ստեղծել են իրանց սեպհա-  
կան Ռոբիզոնները: Այդ աշխատու-  
թեան նշանակութիւնը շատ մեծ է:  
Դա իւր մէջ հակելու հաւատարմու-  
թեամբ ներկալացնում է կուլտուրա-  
կան պատմութեան պատկերը, ահա  
մենք տեսնում ենք, ինչպէս Ռո-  
բիզոնը քարեց իւր համար գործիք-  
ներ է շինում, թէ ինչպէս իւր հա-  
մար մորթուց շորեր է պատրաս-  
տում, ինչպէս նա հում մոռվ է  
կերակրում և ազն և ալին: Այդ բո-  
լորը մարդկութեան երեսական հա-  
սակի արդիւնքներն են: Դործիք-  
ները և թէ կեանքի եղանակն ու

1) Գանել Նիփօ (Diefold կամ de Foe), անգլիական գրող, ծնւեց 1661 (թւակ. 1.սնդունում, մասաւ 1791-ին): Գրական գործիչներիցն էր և ժամանակաւայ քաղա-  
քական կրթման մէջ խառն. յետոյ 1719 թ-ին ասպարէզ եկաւ այս գւածքով՝ «Իօբ-  
կեցի Ռոբիզոն» Արուզի կետնքը և ար-  
կածները, որ բոլոր եւբոստիկն իւզու-  
ներով թարգմանւեց (նաև՝ Հայերէն մի  
քանի անգամ): և դառաւ հայր բազմա-  
թիւ ռոբինզոնագների, որոնցից մէկն է  
նաև կոմս Տոլստոյի ներկայ գրքոյից:

Մահով, Խ. Տ.

ապրուստը ժամանակի տարածու-  
թեան մէջ սակաւ առ սակաւ կա-  
տարելագործում են և հասնում նորա-  
գոն ժամանակին: Մենք տեսնում  
ենք աղջ պատմութեան մէջ, որ մարդ  
ներքին կարկաներավ, աստիճան  
առ աստիճան առաջին կսպիտ բնա-  
կան գիրքից բարձրանում է դէպի  
կրթութիւնը և զարգացումն: Մի խօս-  
քավ Ռոբինզոնը իւր կեանքի մէջ  
անում է աղջ պարբերութիւնը, ինչ որ  
մարդկութիւնն ընդհանրապէս արել  
է: Վիլլմանն իւր «մարկավորժական  
զասախօսութիւնների» մէջ Ռոբին-  
զոնը անւանում է «պատմութեան փի-  
լիստիալութիւն»: Այս գեղեցիկ սանդ-  
ծագործութեան նշանակութիւնը փոք-  
րիկների համար արդէն շատ վա-  
զուց է հասկացւել և արտասանելու  
հաւաս Ռոբինզոնի պատմութիւնը  
համարում է կմիլի սիրելի գիրքն  
և վազուց է, որ արդէն ձեռ-  
նարկել են մանկական Ռոբին-  
զոնը, դուրս գցելով աղդ պատ-  
մութիւնից այն բարդ տարրերն, որոնք  
հակառակ են մանկական հասկացո-  
ղութեան, դարձնել մի հասա-  
րակ և պարզ պատմութիւն: Եւ  
իբրաւի մեծ մասամբ լաջողւել է աղդ:  
Բոգումիլ Գոլցը աղդ պատմական  
Ռոբինզոնի մատին հետեւալն է ասում  
իւր «Երեխակութեան գիրք» վերնա-  
գրով երկասիրութեան մէջ, «ինչպէս  
կարող էի ես երեխակութեան մասին

գրել, առանց Ուորինզոնին լինելու։ Ո՞չ, դու Ուորինզոն, զարմանալի մարդ, ո՞չ, դու Ուորինզոն, զրքերի զիրք, դու երեխաների սրտերի մէջ տպւած սուրբ գիրք, դու բոլոր ժամանակների երեխաների աւետարան։ Երանի թէ դու միշտ անպակաս լինէիր երեխավի օրացոյցից և նորա սրտում ժամանակ առ ժամանակ նորից լարութիւն առնէիր։

Իմ ձեռքին է ահա մի մանկական Ուորինզոն, որը Տոլսոտիք զօրծ է։

Հաշակաւոր ոռու հեղինակին, ձիչտ է, լաջողել է մի հասարակ, երեխաներին հասկալի պարզ պատմութիւն զրել, բայց նորա մէջ կան խոչը պակասութիւններ, որոնք աչքի են ընկնում, երբ մարդ ճանաշում է եւրագական լեզուներով զրած զանազան մանկական Ուորինզոններ։ Ալդ պակասութիւնները կալանում են զանազան կտորների չոր ու ցամաք լինելու մէջ, որոնք անկարող են երեխավի հոգու մէջ խոր արմատներ գցել։ Հենց զրքի սկիզբը մի կմախքի է նմանում, որն և ամենից շատ պէտք է երեխավի մէջ զգացումներ չառաջանէ։ Տոլսոտը շատ մակերես կերպով է անցնում ալդ նշանաւոր կտորը։ Նա մի քանի խօսքով է նկարագրում հօր և մօր ցաւակցութիւնն և Ուորինզոնի փախուստը։ Բնադրուչ են նաև պատմութեան այն կտորներն, ուր Ուորինզոնը փորձանքի մէջ Աստուծուն և իւր սիրելի ծնողներին ցուցում է։ բայց ալդ կտորները Տոլսոտիք զրքովի մէջ սառը տպաւորութիւն են անում։ Նա տեղ տեղ մինչեւ անգամ չի լիշում Աստուծուն անունը կամ բաւականանում է մի քանի խօս-

քով, մինչդեռ Վիֆօլի Ուորինզոնը փորձանքի ժամանակ չոքում է, ձեռքերը բաղկատարած և լի զգացումներով զիմում է Աստուծուն, խնդրում, աղաչում է նորանից աղատութիւն և ազն։ Նուն իսկ վերջին փոթորիկն և Ուորինզոնի կզզու վերակ ընկնելն մի երկու խօսքով է վերջացնում։

Ալդ աշխատութեան մէջ կան նաև ալ անաջող տեղեր, ինչպէս օրինակի համար Ուորինզոնի և Ուրբաթի լարաբերութիւնները։ Ո՞ւր է Ուրբաթի անսահման վախն զէպի Ուորինզոնը։ Հեղինակը մինչև անգամ ասում է, որ Ուրբաթը շուտով սովորեց Ուորինզոնի լեզուն, ոկտոց նորան հասկանալ. դա հակառակ է մինչև անգամ առողջ մտածողութեան։ Ուորինզոնն երկար ժամանակ զբաղւած էր նորանով միան, որ Ուրբաթը ճանաչէ Աստուծուն, հաւատալ նորա զօրութեան և ալդ խօսչելն ու մի քանի հասարակ աղօթքներ կարողանակ արտասանել։

Վերջապէս չը թւելով մի առ մի ալս զրքովի բոլոր պակասութիւնները, փշենք միան Ուորինզոնի և հօր տեսակցութիւնը հավունիք վերառնալուց լիսուր Ալդ սրաաշարժ տեսարանն անպէս է ոկտում և վերջանում։ «Հայրը ճանաչեց նորան և որդին ասաց. «Հապա մալրս որտեղ է»։ Հալին ասաց. «մեռել է, նա միշտ ուզում էր քեզ տեսնելու»։ Ուորինզոնը ասաց. «Յիմար էի, որ ճանապարհորդելու գնացի, փառք Աստուծու, որ ալժմ տանն եմու Ալս սրաաշարժ տեսարանը, որ կարող էր փոքրիկ ընթերցովի քնքուց սիրաը կատարեալ կերպարանափոխութեան

Ենթարկել և լաց պատճառել, այս  
երկառողովն և Ոտքինդանի մի անմիտ  
պատասխանովն է վերջանում։ Թող  
ընթերցողը ինքը դատէ, եթէ մէկը  
25 տարի Ոտքինդանի վիճակին են-  
թարկեր, և այնքան տարուց վետով  
հօրը տեսաթեան արժանանար, մի-  
թէ միայն ալս խօսքերը կ'արտասա-  
նէր, պատասխան էի, որ ճանապարհոր-  
դելու գնացի, փառք Աստուծոյ որ  
այժմ տանն եմ։ Ես կարծում եմ, որ  
արտասուրը կը խեղզէր նորան և ոչ մի  
խօսք չէր կարող արտասանել. նա  
կը փաթաթւեր նորա վղով, համ-  
բուներին վերջ չէր լինի, վերջը  
անթիւ հարցեր կ'առաջարկելին եր-  
կու կողմից էլ, որդին հօրից ներո-  
զութիւն կը խնդիր և ավեն։

Մի նկատողութիւն էլ Գուցէ նմա-  
նելու համար Աստուածաշունչի ան-  
դպանքն ոմին, Տոլստոյ արդէն չափա-  
զանց պարզ է դաւրս բերում ամեն  
մի խօսակցութիւն իւր դրբուկի մէջ։  
Այդ պատճառապէ է որ խօսակցու-  
թեան ժոմանակ այնքան «ասաց,  
ասաց» է գործ ածում, որ մարդ ա-  
կամակ վիշտում է ուսուների «ՐՈՒ-  
ՐՈՒ» կամ Թիֆլիսիների «Կօսէ  
Կօսէ» ները։

Օրինակի համար. Ոտքինդոնը  
ասաց նրան. «Իսկ զու ուր ես  
գնում», Նաւատէրն ասաց. «Հեռու  
տեղ եմ գնում—Աֆրիկա, այնտեղ

մի երկիր կաէ, անունն է Գւինէա և  
մէջը սև սև մարդիկ են բնակւում։  
Ոտքինդոնը ասաց. «այդ երկիրը հե-  
ռում է»։ Նաւատէրն ասաց. «Հեռու  
է, ուղում ես միասին գնանք»։ Ոտ-  
քինդոնը ասաց. «ես իմ գրպա-  
նից կը տամ քեզ. իսկ զու կացին-  
ներ, զանակներ, գոյն գոյն ապակի.  
Ներ կը գնես»։ Ոտքինդոնը ասաց.  
«ինչացու են ալդ բոլոր բաները,  
զրանք ինձ հարկաւոր չեն»։ Նաւա-  
տէրն ասաց. «զնիր, սև մարդիկն  
ալդ բաներից ոչինչ չեն հասկանում  
և զրանց փոխարէն շատ ոսկի և  
փղոսկր կը տան քեզ»։ Ոտքինդոնը  
ասաց. «փղոսկրն ինչիս է պէտք»։  
Նաւատէրն ասաց. «փղոսկրն սպի-  
տակ է և շատ փող կ'արժէ»։ Եւ Ոտ-  
քինդոնն ասաց. «Լաւ, գնանք»։ (տես  
երես 8)։ Այս փոքրիկ կտորի մէջ  
«ասաց» ների թիւը գիւմինից մէկով  
է պակաս։

Վերջացնելով իմ նկատողութիւն-  
ները, թով կը տամ ինձ լիշեցնւ, որ  
փոքրիկների համար փոխաղրած ա-  
մենականող և զեղեցիկ Ոտքինդոնն է,  
ըստ իս, ննակի մանկավարժական սե-  
մինարիակի տեսուչ և մանկավարժու-  
թեան պրոֆեսոր Ալիհելմ Ռախնինը, որ

շատ արժանի է թարգմանել հաւերէնի։

Բար.

ՏՈՒՍՏՈՅ կոմա Լ. — «Աշայա ուղարա»-ից. Կոլումբ (վիքրերի համար) թարգմանեց Փիլիպպոս Վարդանեան: Թիֆլիս, տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի, 1891 թ., 56 էրես, գինն է 15 կ.:

Հատուրը գիտեն, որ Ամերիկայի վտանգը կողումքն է, բայց այդ շատերից ոչ ամենքը ծանօթ են այս նշանաւոր մարզու կեանքի և դործունէութեան հետ: Ծանօթացնել դորա հետ փոքրիկներին, ահա վերև վշւած դրքի նպատակը, մի նպատակ, որը աւելի տեղին է մեղանում, երբ մեր ծխական զպացներում պատմութիւնը ալ ևս չէ դասաւանդուում: Հեղինակի, Լ. Ծոլսառի անունը, արդէն դրաւական է գրքի հետաքրքիր լինելուն և իրօք նա մեծ հետաքրքրութեամբ կը կարգացւի ոչ միայն փոքրերի, ալ նուն խոկ և չափահասների կողմից: Բայց, հետաքրութիւնից դուրս, գրքից պէտք է պահանջնել ճշութիւն, այս զէպքում պատմական իրողութիւնների ճշութիւն: Ամ կողմից Լ. Ծոլսառի գիրքը ներկապացնում է մի քանի թերութիւններ: Խճչի էր ճգտում կողումքը և ինչից առաջ եկաւ նորա այդ ճգտումը: Աս հարցերին, իբրև պատասխան, զրոյէը պատմում է հետեւաելը: «Կողումքը ճանապարհորդելու մեծ ոէր ունէր, մի կղզի որ հասան, աճնտեղի մարդիկը ասացին կողումքին, քամին շատ անգամ աճնալիս ծառեր է բերում գէպի մեր ափը, որոնց նմանը բնաւ չես տեսնիլ մեր երկրում: Մի օր էլ երկու մեռած մարդիկ բերւեցին այս կողմը. նրանց մորթի դունը մերինին նման չէր, ուրիշ երկրից կը լինին,

Կողումքը լսեց այդ բալորն ու մտածեց, — արդեօք այդ ինչ մարդիկ էին և ինչ տեսակ ծառեր էին. չը լինի թէ ծովի միւս կողմը մի ուրիշ երկիր գտնելի և այդ ծառերն ու մարդիկն այն տեղից գէսը բերած լինին: Ակ որտնեմ այդ երկիրը, գուցէ գտնեմ (Ար. 5): Մի քանի տարիներից լւսող, երբ նա արդէն գտնել էր նոր աշխարհը, Կողումքը ասում է թագաւորին, «Ճէր արքալ, եթէ չես կամենում որ հս զնամ նոր աշխարհը, գոնէ թուլ տուր որ մի ուրիշ ճանապարհ գտնեմ գէպի Վեստ-Ինդիան (արեմտեան Հնդկաստանը»):

Աչստեղ ինչ որ միսք կաէ կամ սխալ է, կամ թերի: Ամենից առաջ կողումքի ձգտութերի մէջ չէր մըտնում գտնել մի նոր, անկալտ աշխարհ: Ծոլսորը, ինչին նա ձգտում էր այն էր՝ գտնել Հնդկաստան տանող մի ուրիշ, աւելի կարծ ճանապարհ, որը փոխարինէր գուութիւն ունեցող սովորական ճանապարհը: Եւ նոյն խակ նոր երկիր գտնելուց լետու ևնա մեռաւ այն սխալ համոզմունքով, թէ նրան աջողութել է իրագործել իւր երազները, թէ արենելք տանող ճանապարհը գտնւած է, թէ կուբակալին Զինաստանի նահանգներից մէկն է և թէ կարախիրեան և Բէնդալիան ծոցերը, որոնց մէջ ընկած է մի ամբողջ մայր աշխարհ, բաժանւած են իրարից միայն մի:

փոքրիկ պարանոցով։ Այն մարդը, որ գտաւ Ամերիկան, մեռաւ, չը նախազգալով իւր գիւտը, — զուցէ, նախոր կերպով կ'ընկճէր հոգով, եթէ լաղթւած Ովկիանոսի ետևից լանկարծ կանգնէր նորա առաջ մի նոր մեծ աշխարհ՝, որը բոնէր նորա ճոնապարհը, ցրելով նորա սիրելի երազը — միայնել ծովալին ճանապարհով Արևմուտքը Արևելքի քաղաքակրթւած երկիրների հետ։ (Հրետակա եր. 129)։

Այնպիսի սխալ անելուց հետո, հեղինակը թող է տալիս իրան և մի ուրիշ թերութիւն։ Նա չէ բացատրում, ինչու Կոլումբը իւր զնացքը ուղղեց դէպի արեմուտք։ Ճիշտ է նա խմացաւ, որ մի կղզու բնակիչներ ովկիանոսի ափին գտել են անկատ ծառեր և ուրիշ մորթի ունեցող մարդկանց գիւտներ։ բայց չէ որ Կոլումբը զիտնական մարդ էր։ Նա գլանէր, որ ովկիանոսում կան զանազան հոսանքներ և աչք առարկաները կարող էին բերւած լինել թէ արեմուտքից և թէ հարաւից։ ասպա ինչու նա ուղերւեց միան դէպի արեմուտք։ Ալուպիսի մի հարց չէր կարող լինել եթէ հեղինակը բացատրէր Կոլումբի թէօրիան, որը, հակառակ ժամանակակից գլանամանութեան պնդում էր երկու միտք,

ճիշտ և միւսը սխալ։ թէ աշխարհն կոլոր ձեւ ունի և ուրեմն արևելքից գնալով կարելի է հասնել նորից արևելք, և թէ Եւրոպակի ու Աֆրիկակի արևմտեան ափերը բաժանւած են Ասիաից ովկիանոսի իրք թէ մի վոքրիկ տարածութիւնով։ Այս բոլորը հարկաւոր էր և կարելի էր բացատրել նոյն խակ վոքրիկներին։

Տայսի վերի բերւածից, գիրքը ունի և ուրիշ թերութիւններ. օրին, այն հարցին, թէ Երբ էր ապրում Կոլումբը, պատասխանում է ալսապէս։ «Մեղնից երեք հարիւր տարի առաջ Խտալիալի Գէնուա քաղաքում ապրում էր Կոլումբ անունով մի մարդու» (եր. 1)։ Սրանից ընթերցողները իրաւունք ունին եզրակացնելու, որ Կոլումբը ապրում էր 1590-ական թւականներին, մինչդեռ նախ խոկ օրացոց կարգացողներին լաւանիէ, որ Կոլումբը ծնւել է 1436—1437 թ. և Ամիրիկակի գիւտը եղել է միան 1492 թ.։ Աւրեմն 100—150 տարին զոհ է գնացել հեղինակի բանաստեղծական ոգեսրութեանը։

Պ. Վարդանեանի նման թարգմանչից պէտք էր պահանջել, որ փոքրինչ կրտակիկաբար վերաբերւէր դէպի թարգմանութեան նիւթը։

B.

## ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

- 1) ԱՏԲՊԵՏԵԱՆ, Ա. — «ՇՈՒՇԱՆ», օպերա երեք արարւածով, Թուրքիակի հայոց կեանքից, Երաժշտութիւն Խ. Մ. Կարա-Մուրզալի, Պետերբուրգ, տպ. Ակարոսողովի, դիմն է 1 բուրլի:
- 2) ՆԱՄԱԼԵԱՆ, Ա. — «ՆԱՅՋԻԱԾ ԿԵԱՆՔԻ» (կեանքի գծեր), Արտատպւած «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս, տպարան Ռոտինեանցի, 1891 թ. դիմն է 3 կոպէկ:
- 3) ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, Ա. — «ԲՈՅՍԵՐԻ ՄԵՇԱՐԱՆՔԻ»: Արտատպւած «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս, 1891 թ., տպ. Ռոտինեանցի, դիմն է 15 կ.:
- 4) ՔՈԼՈՒԴԵԱՆՅ, Զ. — «ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ»: Հրատարակեց ա. Ելենէ Բալուղեան: Մոսկա, 1891 թ., տպար. Մ. Բարխուդարեանցի, դիմն է 50 կոպէկ:
- 5) ԿԱՐԱՄՁՋԻՆ, ? — «ԹՇԻԱՌ ԼԻԶԱ», Թարգմանութիւն Միքայէլ Բէգլարեանցի, Թիֆլիս, տպ. Տ. Նազարեանցի, 1891 թ., Նէր «Աղբիւրի» և «Տարագուրանուրդներին:
- 6) ԿԱՐԱՄՁՋԻՆ, Ն. Մ. — «ԹՇԻԱՌ ԵՂԻՍԱԲԵՅԻ», վէպիկ, թարգմանութիւն Դաւիթ Տէր-Դաւիթեանց, Թիֆլիս, 1891 թ., տպարան Մովսէս Վարդանեանցի, դիմն է 10 կոպէկ:
- 7) ՀԱՅԶԵ, ՊԱՌԻ. — «ՆՈՐՅԱՅԻ ԲԵՐՄԻԼ», վէպիկ: Գերմաներէնից թարգմանեց Փլլիսպոս Վարդանեան: Արտատպւած 1876 թ. «Փորձ» ամսագրից: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1891 թ., դիմն է 30 կոպ.:
- 8) ԾՈ.ՏՈՒՐԵԱՆ, Ա. ԵՐԵՄԱՆԴՐԻ. — «ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ»: Հրատարակեց Աթանաս Ճամհարեան: Մոսկա, տպ. Մ. Բարխուդարեանցի, 1891 թ., դիմն է 50 կոպ.:
- 9) ՏԵՐ-ԱՍՏՐԴԱՍԵԱՆՅ, ՄԻՐԶԱ. — «ԱՅՐԻՆ», Շուշի, 1891 թ., դիմն է 10 կոպէկ:
- 10) ԳԻՒԿԵՆՅ, Զ. — «ԾՆՆԴԵՍՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻ», Շուշի, վուխաղըց Մ. Տ. Պ. Շուշի, 1891 թ., դիմն է 5 կոպ.:

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Թիֆլիսի քաղաքագլուխի ընտրութիւնը, — Ներսիսեան Գալրոցի հոդաբարձութեան  
ընտրութիւնները:

Թիֆլիսի քաղաքագլուխի ընտրութիւնը, որը կազացաւ ապրիլի 25-ին,  
ամենահետաքրքրական ընտրութիւնը կարելի է համարել սկսած 1879 թ.  
ընտրութիւնից դէս: Եւ այս տարւակ ընտրութիւնը խոստանում էր տեղի  
նոյնքան, որքան 1879-ինը: Ինչ պատահեց այդ 1879 թւականին: Քաղա-  
քագլուխ Կիպիանին հրաժարւեց իւր պաշտօնից: Գուման հաւաքւեց նոր  
քաղաքագլուխ ընտրելու: Չ'աջողւեց: Երկրորդ անգամ հաւաքւեցին՝ չա-  
ջողւեց: Զաների մեծամասնութիւնը ապահոված էր պ. Անդ. Պորզա-  
նեանին: Հրաժարւեց: Վերջնական ընտրութիւններում ձաների  
առաւելութիւնը ստացաւ կանդիտատներից մէկը, որը առաջարկւած էր  
միմիան մի ձանով: Պր. Ալեքսանդր Մատինեանցը, չաղթեց նա, ում  
մասին ամենից քիչն էին մտածել: Այդ վշատակութեան արժանի օրից  
դէս, 12 տարւակ ընթացքում երեք անգամ վելասին ընտրւեց իւր պաշ-  
տօնի համար, որ ասել է թէ չորս անգամ ընտրւեց քաղաքագլուխ, վեր-  
ջին անգամ ներկայ տարւակ լունւարի 13-ին:

Արդարի հրէական թիւ! պ. Մատինեանցը այս անգամ իւր գէմ զինւած  
տեսաւ մի ընդդիմագլիք կուսակցութիւն, որը չը պիտի թող տար նրան  
հանգիտա կենալու: Այդ ընդդիմագլիք կուսակցութիւնը, չէր պարզում ոչ մի  
ծրագիր, եթէ ծրագիր չը համարենք «վարչութեան անդամների փոփոխու-  
թիւնը»—օնուածութեան մի խօսք որ նշանաբան էր ծառացում ընդդիմագլու-  
թեան համար: Այդ խօսքը արդարն կունենար մի նշանակութիւն  
և իւր մէջ կ'ամփոփէր մի ծրագիր, եթէ միան պարզուոչ չափո-  
նի լինէին օպագոգիցիակի կանդիտատների անունները և եթէ այդ նոր  
անունների հետ կապւած լինէր մի անցած փառաւոր կամ զոնէ որոշ ուղ-  
ղութեամբ զործունելութիւն:

Այդ բոլորից ոչինչ չը կար: Օպագոգիան պէտք է վրէժինդիր լինէր  
իւր առաջւակ կանդիտատի—Զուրաւալիի—անտչողակութեան համար: Հրա-  
ժարւեց ընտրւած Մատինեանը՝ լինչ ուզի թող լինի—պէտք էր խանդա-

բել հան պ. Պօղոս իղմալեանի թեկնածութիւնը, թեկնածութիւնը այն մարդու, որը իւր ունեցած զիրքի համար զրեթէ բացառապէս պարտական է իւր անխոնջ աշխատութիւններին քաղաքի օգտին. Դեռ ևս իւր քարտուղար քաղաքավին գումարին—նա, որքան ինձ լաւանի է, չնորհիւ իւր մտաւոր և ողեկան գերազանցութեան, մասնակից էր վարչութեան գործավարութեանը. Դեռ ևս իւր գումարի քարտուղար—նա՝ վարչութեան ոգին էր. Բնական է թէ ինչու քարտուղարութիւնից հրաժարութով՝ նա ամենալին հեշտութեամբ ընտրեց վարչութեան անդամ և այն էլ վարչութեան առաջին անդամ, այսինքն քաղաքապետի օգնական։ Այդ ոչ միայն աւելի բարձր, այլ և իւր ընդունակութիւնների համար աւելի լարմար պաշտօնում նա ցուց տևեց զնահատելի և ոչ սովորական ձիրքեր։ Ես կ'ուզէի մի փոքր բնաորոշել այդ անձնաւորութիւնը և կամ, աւելի լաւն ասած, այդ մարդու տաղանդը։ Նորա մասին շատ խօսեց աս վերջին ամսում. ճիշդ գտղափար սական չեր կարելի ստանալ այդ բոլոր ասածներից։

Ահա թէ ինչ է պ. Իղմալեանը՝ մի պարլամենտական։ Այս խօսքով հասկանում են այն մարդուն, որը կարծես ստեղծած է ժողովներում գործելու համար, իւր գործոն անդամ կամ դեկանակար մի կուսակցութեան։ Ոչ միշտ իրանց բարձր ձգտումներով և մեծ կառավարչական խելքով են նոքա գերազանցում շատերից, այլ լաւանի ընդունակութիւններով՝ կուսակցութեան շահերը լաւ պաշտպանելու։ Դոքա բնաւորութեամբ ճկուն մարդիկ են, բայց այդ ճկունութիւնը չի տանում բուն պարլամենտականին դէպի սկզբունքների փոփոխութիւն, այլ միայն դէպի կոմսդոմիսներ՝ օգնութիւն ստանալու մոքով իւր սեպհական կուսակցութեան օգտի համար։ Դոքա անպայման չխառակներ չեն իրանց վարողութեան մէջ առհասարակ կուսակցութիւնների հետ. անզողողդ ժամուեր չեն, ընդունակ են անդամ սովորականութիւններ բանեցնելու. իրանց դատը փաստաբանելու ժամանակ, միայն թէ հակառակորդին չաղթեն չօգուտ սեպհական կուսակցութեան—ահա նոցա մշտական տակտիկան։

Ճարագիկութիւնը ադգայիտավ մնում է նոցա զլխաւոր ոչքը, բայց ոչք, որը անպատճառ միացած է լինում մի ուղղութեան հաւատարիմ մնալու հետ։ Նոքա մեծ մասամբ լաւ էլ ճառախօսներ են, բայց սակաւները միայն հասնում են հակառականութեան, որի համար պահանջում է վսեմ միավ, որից գուրել են շատ պերճախօսներ։

Ես լաւ զգում եմ որ համեմատութեան համար մեծ շրջաններ եմ ընտրել, մինչդեռ ոչ Ֆիֆլիս քաղաքը և ոչ քաղաքավին գործունէութիւնը և ոչ շատ ուրիշ պայմաններ թալ չեն տալիս որ ոչքերը այն զարգացումը և գործունէութիւնը այն ծաւալը ստանան, որ կարելի լինէր մեր մի գործիչն, մեր գումարի մէջ միշտ պտտողին հաւասարւել մեծ հոսանքների մէջ շրջողներին։ Բայց ինչ փոլթ, իմ նպատակն է մի անձնաւորութիւն հանաչել։ Ինձ հարկաւոր է գծերը որոշել, իսկ այդ համեմատութեան

մէջ, եթէ գծերը շատ են խոչոր երեւում, դորանով ճշղութիւնը չի մնառ-  
ուում. բաւական է եթէ պրոսորցիան նոյնափէս լադոնի լինի. խոկ դա լադո-  
նի է ամենքին. Տեսնենք ակժմ ինչով է պ. Խզմալեանը համակրելի

Լինելով կուսակցական անձնաւորութիւնն, պ. Խզմալեանը գլխա-  
ւորապէս համակրելի է իւր բնաւորութեան հիմնական գծերով. Ենա-  
ւորութիւնով մի դեմոկրատ է նաև լեզվի, գրչի և միաժամանակ զործի  
մարդ, բաւականաշափ լայն հալեացքներով, որպէս զի նորա հալկականու-  
թեան մէջ տեղ գտնէր կոսմոպոլիտեան ոգին, բայց և բաւականաշափ  
գրական մարդ, որպէս զի նորա ողու կոսմոպոլիտական ուղղութիւնը  
ըլ խեղդէր տեղական ժողավրդի շահերը ըմբռնելու կարողութիւնը:

Եւ տեղական շահերին նւիրաւած լինելը պ. Խզմալեանի մէջ անպաշ-  
ման էր. Դորանով էր նա թանկ ընդհանրութեան:

Պր. Խմալեանի ընտրութիւնը ցանկալի էր մի քանի տեսակէտներից.  
Նախ որ արժանի էր, իբր քաղաքի գործերին հմուտ և նւիրած մարդ:  
Երկրորդ՝ նորա ընտրութիւնը Կ'ունենար մի բարուսական խրախուսիչ  
ազգեցութիւն. զարանով ցոյց կը արւէր որ հասարակութիւնը զիտէ պա-  
տիւների արժանացնել նաև մշակ մարդուն. խոկ պ. Խզմալեանը մշակ էր,  
բառիս աղնիւ մտքով: Եւ մի ալղպիսի օրինակ նամանուանդ ցանկալի  
էր մի երկրում և մի քաղաքում, ուր ժողովուրդը շատ է սովոր ամեն  
որատիւ կապել մարդկանց անձնական կարողութեան և ախտղուների հետ:

Բայց Խզմալեանը ստացաւ միան ՅՕ ճան ընդդէմ ՅԶ. Ընդդիմա-  
գիր կուսակցութիւնը ալդ գործում տարաւ լազմութիւնը. բայց նա տա-  
րաւ լազմութիւն միան պ. Խզմալեանցի զէմ: Մեծ խնդիր է թէ դորա-  
նով նա տարաւ արդեօք իւր սեպհական դասը, որովհեաւ ևս հրաժարում  
եմ կարծելուց, թէ նորընտիր քաղաքագլուխ իշխան Արդութեան-Երկաչ-  
նաբաղուկ լինէր ալն անձը, որի համար կատարւած լինէր աս վերջին  
ամիսների աղմըկալի վիճաբանութիւնը: Ակներեն է որ իշխան Արդութեանը,  
ապրիլի 25.ի նիստում, ընտրւեց միմիան իբրեւ մէկը, որ կուսակցութիւն-  
ների հետ շփումն չունի, իբրեւ մէկը, որ անձնական թշնամութիւն չունի  
դումայի մեծամասնութեան հետ: Դորանից շատերը եղրակացրին թէ իշ-  
խանը, կազ չունենալով կուսակցութիւնների հետ, անկախ լինելով դոցա-  
նից, կը կանգնի նաև կուսակցութիւններից բարձր: Ագդ կախւած է սա-  
կան կուսակցութիւններից զուրս եղածի ոգեկան լատկութիւններից: Ան-  
կասկած է որ մի ալղպիսի անձն տրամադրի կը լինի բոլորովին անկախ  
մնալ. բայց բոլոր խնդիրը նորանումն է թէ որքան ալդ կը լաջողի նրան:

Ամեն բան, ընդհակառակը, խօսում է չօգուտ ան ենթա-  
գրաւթեան, որ իշխան Արդութեանը, որպէս քաղաքի գործերից մինչ ալժմ  
հետու կեցած մարդ, և որպէս մէկը, որ մինչ իւր 47 տարեկան հասակը  
ոչ մի հատարակական գործում չի եղած, պէտք է բաւականանալ զբեթէ  
միան նախառահելով դումովի ժողովները և առպարէզը թողնի զումակի

կուսակցութիւններին. Շատ և շատ կարելի է որ նա կուսակցական քառագրութիւնը չի դառնալ, բայց ոչ թէ նոցանից բարձր կանգնելու, այլ միան նոցանից մի կողմէ քաշւելու համար։ Տարբերութիւնը ահագին է, Մեծամասնութեան զեկավար չի լինելու նա, այլ միան մեծամասնութիւն։ Ներին հետեւող Մօտաւորապէս ձիշը է դատում այդ կողմից ցաշմեաչ օսողիցիալի օրդան «Նովոն Օրողինիե» թերթը, որը սական միան ինքը կարող է այդ հանգամանքի մէջ միտիթարութիւն և բարի նշան դանել խոկ լսու իս, քաղաքագլուխը ոչ թէ մի պարզամինտի նախագահ է, որը միան պէտք է ժողովում կարդ պահպանէ, այլ նա քաղաքի առաջին պաշտօնեան է։ Նա պաշտօնեալ է զործիչի մոքով, զործիչի, որի անձնական էատկութիւնները առաջնակարգ դեր պէտք է խաղան այն բարդ հասարակական գործի մէջ, որ էանձնւած է քաղաքալին խորհուրդին։

«Մուրճ»-ի № 1, «Խմբագրութեան կողմից» մի հարց էր առաջարկւած, թէ արդեօք երբ պէտք է վերջապէս կատարւեն հոգաբարձական ընտրութիւնները Ներսխսեան Դպրոցի համար։ Այդ հարցը զրւեց այն պատճառով, որ ներկա հոգաբարձութիւնը իւր չորս տարւակ իրաւասութիւնը լրացրել էր գեռ ևս անցեալ 1890 թւականին, խոկ նոր ընտրութիւնների համար կարգադրութեան մասին ինչ որ չէր լսում ոչինչ։ Բայց ահա վերջապէս այդ կարգադրութիւնը արւեց ապրիլ ամսի սկզբներին, որով Թիֆլիսի ծիսական ժողովուրդը հրաւիրեց ապրիլի 7-ին, կիւրակի օրը ծիսական պատղամատորներ ընտրելու հոգաբարձական ընտրութիւնների համար։

Որն է հիմնական կանոնադրութիւնը Ներսխուեան աղքալին հոգեսոր դպրոցի հոգաբարձութեան ընտրութեան համար? Մի երկու խօսքով որոշ լում է այդ սահմանադրութիւնը։ Թիֆլիսի ամեն մի եկեղեցու ժողովուրդ ընտրում է երեք-երեք պատղամատոր, ապա այդ բոլոր պատղամատորները, թեմական սուաջնորդի հրաւիրքով, որոշեալ օրը հաւաքւում են նիստի և, սուաջնորդի նախագահութեամբ ընտրում են չորս տարւակ համար 12 հոգաբարձու և չորս էլ թեկնածուներ, անձնափոխանորդներ կամ կանգիսատուններ, որոնք կոչւում են հոգաբարձական իրաւունք բանեցնելու ընտրւած հոգաբարձուների բացակալութեան կամ հրաժարելու դէպքում։ Վերջապէս՝ ընտրւածների ցուցակը առաջարկւում է Վեհափառ կաթողիկոսի կոսից հաստատելու համար։

Այն հիմնական կանոնադրութիւնից դուրս՝ կան շատ խնդիրներ, ներկաւ ընտրութիւններին վերաբերեալ, բայց նոքամ մի անգամ առ միշտ որոշում չեն և միշտ փոփոխել են զանազան առաջնորդների օրերով և, ի հարկէ, ըստ իս լաւ է որ բոլոր խնդիրները բարձրագուն հոգեսոր կառավարութիւնից ըստ որոշումն, ոբակէս զի դժւար չը լինի թեմական առաջնորդներ։

րին ընտրողական կանոնները ժամանակի պահանջների համեմատ փոփոխել: Իրաւ շատ բաներ կան, որոնց թերութիւնները այսպէս ասած չ աւ իտ են ականանում են միմիան այն պատճառավ, որ նոցա փոխելը երկար ու բարակ պաշտօնական գրադրութիւնների տեղիք է տալիս:

Ազագիսով ուրեմն, Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնների համար կան մի կարգ խնդիրներ, որոնց վճառելը թողնում է թեմական առաջնորդին:

Այդ խնդիրների մասին արած անօրէնութիւնները կազմում են նիւթառանձին հրահանգների: Հրահանգը մտնում է ընտրողական գործի մանրամասնութիւնների մէջ: Եւ ան իմ առջև դրած է մի թերթ այս վերնային «Հրահանգ լաղազս ընտրութեան պատգամաւորաց հոգաբարձական ընտրութեան Ներսիսեան նոգեոր (և ազգակին) դպրոցի 17. ապրիլի 1891 ամիացնեկ հրահանգի կէտերը մամուլի պարտաւորութիւնն է: Ես արգէն ասացի որ դոքա հիմնական օրէնքներ չեն, այլ մասնաւոր կարգադրութիւններ են, որոնք միշտ փոխում են և կարող են փոփոխել: Նոցա արժանաւորութիւնները և թերութիւնները կարող են առաջնուց էլ խմացւելքաւական էր եթէ «հրահանգը» կազմելու համար մի առանձին մասնագողով կազմէր՝ ընտրողական դործերին լաւ հմուտ մարդկանցից բաղկացած, և կամ վերջապէս հրահանգը անչքան ժամանակ առաջ հրատարակւած լինէր, որ մամուլը կարողանակ նորանով վազօրօք դրազւել և նկատած թերութիւնների վերաց հրաւիրէր իշխանութեան ուշադրութիւնը: Քայլ եղաւ հակառակը, հրահանգը հրատարակւեցից ընտրութիւններից միան մի երկու օր առաջ, և ես, մի ծխական ազդ հրահանգը կարդալու կարելիութիւն գուաչ միմիան ընտրութեան օրը և այն էլ հէնց ընտրելու ժամին:

Միթէ այդ ակտու պէտք է լինէր, և արժանի չ արդեօք որ լու քննադատութիւնը հէնց աչք բանից սկսեմ:

Ես այժմ այլ ես հարկաւորութիւն չունեմ ոչերս հաւաքել հրահանգի թերութիւնները ցաց աալու համար, որովհետեւ, իբր մի եկեղեցու ծխական, արդէն մասնակցեցի ընտրողութեան, և բաւական է միան թէ իմ եկեղեցում և թէ միւս եկեղեցիններում պատահած դէքքերից մի քանիսը ի նկատի առնեմ՝ և այն ժամանակ հրահանգը ինքն իրան գատած կը լինի:

Քայլ նախ աւսոններ, թէ որոնք են հրահանգի կէտերը: Ի հարկէ հարկ չը կալ որ անպատճառ գրաբաւը արտադրեմ, ուստի թող աշխարհաբառ թարգմանութիւնը առաջ բերեմ:

1. Կարող են ընտրութեանը մասնակցել և ընտրել միմիան ծխական երը, իսկ ոչ ծխականները կարող են պատգամաւոր ընտրել միան այն դէքքում, երբ ծխականների մէջ չը գտնեն նորն պաշտօնի համար չարմարաւոր անձեր:

2. Ներսիսեան Դպրանոցի ուսուցիչների, վերակացուների և կառա

լառուների և առհասարակ դպրոցների աշակերտների մասնակցութիւնը արգելված է:

3. Ընտրութիւնը պէտք է կանոնաւոր համարել, եթէ ժողովական ների թիւը աւելի է քան բոլոր ցուցակագրությունների մի հինգերորդը:

4. Խւրաքանչիւր եկեղեցի պարտաւոր է ընտրել երեք պատղամաւոր, գաղանի քւէարկութեամբ:

5. Ընտրութիւնը կատարւում է հսկողութեամբ նախազա՞ն քահանակի և ներկալութեամբ միաբան քահանաներին:

6. Ընտրութեան ժամին նախազա՞ն, վաւերացնելով թւահամար և աւ թիրթիկները եկեղեցական կնքով կամ իւր ստորագրութեամբ՝ բաժանում է ժողովականներին, և, անունները զրելուց լեռ՝ ժողովում է և համեմատում ընտրողների թիւ հետո:

7. Խւրաքանչիւր անցն միան մէկն է մասնակցում է ընտրութեանը:

Այս է հրահանգը, որ շատ թերի է: Աս մատնանիշ կը լինեմ միան մի երկուսի վերաբ:

Հրահանգում ոչինչ չի ասուած թէ ովքեր են համարւում ընտրւածներ՝ նորա, որոնք առհասարակ ամենից շատ ձայներն են ստացած, թէ նորք, որոնք ստացած են ժողովականների մեծամասնութեան քւէները: Ահա ձեզ 60 հոգուց քաղկացած մի ժողով, որը իւր քւէն տւել է՝ Կիրակոսին, Մաթոսին, Գևորոսին 25-ական ձայն, Թաթոսին, Պօղոսին, Կարուպեանին՝ 20—20 ձայն, ուրիշ երեք մարդկանց՝ 45-ական ձայն: Որպէս տեսնում էք՝ ոչ որ ալդ քւէ արկութեամբ չը ստացաւ մեծամասնութեան քւէները, քանի որ 60 հոգուց մեծամասնութիւնը գոնչ մէկով պէտք է կեսից աւելի լինի: Իսկ 60-ի կէսը 30 լինելով, մեծամասնութիւն կարող են կազմել միան 31 ձայն կամ աւելին, բայց ոչ դորանից պակասը:

Հրահանգի մէջ բացորոշ կերպով պէտք է ասել թէ որ տեսակ մեծամասնութեամբ են ընտրւում պատղամաւորները՝ բացարձակ մեծամասնութեամբ (կէսից աւելի ձայներով) թէ համեմատական մեծամասնութեամբ: Եթէ որոշ ասուած լինէր՝ զուր տեղը ժողովներում վիճաբանութիւններ տեղի չէին ունենալ, ինչպէս ալդ եղել է մի քանի եկեղեցիներում և զուր կուսակցական ինստինկտները չէին արտապալութ այնպիսի վարեհնութեամբ, ինչպէս ալդ տեղաւոր կատարել է:

Եւ վերջապէս ժողովներում մարդիկ գալիս են ընտրութիւններ կատարելու և ոչ թէ օրէնքներ սահմաններու: Եւ եթէ գոնչ մի ընդհանուր ժողով լինէր բոլոր եկեղեցիների ծխականների համար՝ զեռ կարելի կը լինէր ոչ պարզւած ինդիրները պարզել և վճռել այս կամ այն մտքով, բայց ինչպէս կարելի է թողլ տալ որ ամեն մի եկեղեցում նուն ինդիրների մասին առանձին վճիռներ կախացնեն: չէ թէ բոլոր ժողովներում միատեսակ կանոններով պէտք է զեկավարւեն:

Հրահանգը ոչինչ չի ասում նաև թէ ընտրութիւնը միանգամ ւա-

քւէովլ է կատարւում թէ երկու անդամով, Ահա թէ ինչու մի եկեղեցում ձխականները հէնց մի անդամ թերթիկների վերալ ընտրւելիների անունները գրելով են բաւականացել, իսկ միւս անդեպում պահանջւել է որ առաջ թերթիկներով առաջարկեն կանդիտատներ, որ իմացւեն ընտրելիների անունները, իսկ լետու նոցա համար, թէկուզ թերթիկներովլ, քւէարկութիւն կատարւի, Զարմանալի չէ ուրիշն, որ ուր միանդամւաչ քւէարկութիւն է եղել (իսկ աշդակս է եղել գրեթէ ամենուրեկք), պատգամաւորներ կան, որոնք ընտրած են ժողովականների թւի միան մի քառորդովլ

Ես կարող եի այս քննազատութիւնը դեռ ևս շարունակել: Այսքան էլ ուական բաւական է այս անդամւաչ համար: Էլ ես չեմ խօսում այն բանի մասին, թէ անկանոնութիւններ են տեղի ունեցել ընտրութիւնների ժամանակ նուն իսկ աշնագիսի կէտերում, ուր հրահանգը պարզորոշ է: Որինակ, հրահանդը պահանջում է ժողովի վաւերականութեան համար՝ ցուցակագրւած ծխականների առնւազը մի հինգերորդը: Տակ իսկապէս, և ինչպէս երեսում է բոլոր եկեղեցիներում, նաև են միան թէ արդեօք առ անձին առ մս ակն երով հրաւիրւածն երի մի հինգերորդը կադ թէ ոչ: Կարծես թէ մասնակցելու իրաւունքը ամեն ծխականին չի պատկանում այլ միան նրան, ում որ քահանաները բարեհաճել են առանձնապէս հրաւիրելու:

Ահա ինչպէս է պատահել որ մեծամասնաբար ընտրութիւնները կատարւել են առանց մասնակցութեան ծխականների գոնէ մի հինգերորդի, այլ ընտրութիւնները կատարւել են ծխականների թւի հինգերորդ մասից շատ աւելի քիչ ծխականների ձեռքով:

Եւ վերջ ի վերջու ինչ է զուրս եկել: Մի եկեղեցի ունի դիցուք 300 ծխական: Դոցանից քահանաները հրաւիրել են առանձին տոմսակներով միան մի 60 հոգու, իսկ այս 60 հոգուց էլ իրը թէ ընտրւել են պատգամաւորներ մէկը որ ստացել է զիցուք միան 20 ձան, միւսը 15, երրորդը՝ 10 ձան, ինքներդ դատեցել:

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ժերոմ Նապոլէօն:—Լուդվիգ Վինդհորստ

† ՊՐԻՆՑ ԺԵՐՈՄ ՆԱՊՈԼԷՕՆ

«Recht hat jeder eigene Charakter», «Խնքնուրոյն մարդուն ամեն ինչներւած է»: Ահա մի խօսք, որ Շիլերը Վալենշտայնի թերանն է դնում բայց որ այդ խօսքը միայն սահմանափակ նշանակութիւն ունի, ժամանակակիցներից քշերը կարող են դորան այնքան սպարզ օրինակ ծառայել, որքան նոր տոմարով մարտի 17-ին վախճանուած պրինց Ժերոմ Նապոլէօն, Նապոլէօնների երկրորդ սերտնողի այդ վերջին ներկայացուցիչը: Նա ըստ ամենացնի մի «ինքնուրոյն» բնաւորութիւն էր և միենոյն ժամանակ ոչ սովորական ընդունակութիւնների տէր մարդ, բայց և այնպէս ամենքի առջև նա միայն սպարտական մնաց: Եւր տոհմի անդամների համար նա միայն մի ծանրութիւն էր գառել, որպէս ծանրութիւն էր նա բօնապարտի զմի վերականգնուածն հեղինակներին 50-ական թւականներին: «Կարմիր պլինցը», որպէս կոչւում էր հանգուցեալը, գրեթէ առանց կարեկցութեան հեռացաւ աշխարհից, որի լոյսը նա տեսաւ 9-ին սեպտեմբերի 1822 թւականի Տրիեստում, որպէս նախկին Վեստֆալեան թագաւորի որդի:

Նա Վեստֆալեան թագաւոր Ժերոմ<sup>1)</sup> Բոնապարտի երկրորդ

<sup>1)</sup> Այդ Ժերոմ Բոնապարտը կանոր Նապոլէօն առաջնի եղբայրներից մէկն էր, որ մեծ Նապոլէօնի ձեռքով նշանակւեց թագաւոր նորաստեղծ Վեստֆալեան թագաւորութեան: Մեծ Նապոլէօնի եղբայրներն էին՝ Յովուշի (Խապանիակի թագաւոր), Լիւսին (իշխան կանինօի), Լուի (թագաւոր Հոլլանդիակի, որի որդին Լուի Նապոլէօն 1852—1870 թ. կանոր էր

որդին էր, կրթւեց Լուգւիզսրուրդի զինւորական ուսումնաբանում և հասարակաց ասպարէղ եկաւ կէս դար մեզնից առաջ իւր հետեւեալ մի քայլով։ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ պատերազմ լինելու մասին լուրեր տարածւած լինելով (այդ պատերազմը չեղաւ), նա, դեռ ևս բոլորովին երիտասարդ, 1840-ին իւր պապ՝ Վիւրտեմբերդի թագաւորին յետ տեղ լիցուեանութեան պատենտը «որ ստիպւած էլ լինի իւր հայրենիքի դէմ կուելու»։ Հինգ տարի յետոյ, 23 տարեկան հասակում նա առաջին անգամ ոտք դրեց իւր այդ հայրենիքը, թողտուուժեամբ<sup>1)</sup> Ֆրանսիացւոց թագաւոր Լուի-Ֆիլիպի։ Բայց Ժերոմ Նապոլէօն իրան այնպէս սրահեց որ թաղաւորը նորան զուրս արաւ երկրի սահմաններից։ Երկու տարուց յետ նրան կրկին թողտուուժիւն արւեց Ֆրանսիա գալ, իսկ 1848 թւականի յեղափոխութեան օրերին, երբ Լուի-Ֆիլիպին գահընկեց արին և երկրից աքսորեցին, նա քաղաքացին տան առջև. իւր ծառայութիւնն էր առաջարկում «ժամանակաւոր կառավարութեան» ասելով՝ «ամեն մի լաւ քաղաքացու պարտաւորութիւնն է; միանալ հանրապետութեան հետա»։

Ըստ ամենայնի Վեստֆալիայի նախկին թագաւորի որդին լրջօրէն էր ուզում յարել հանրապետութեան, որովհետև նա իւր տեսակ էր ըմբռնում հանրապետութիւնը, բոլորովին ոչ այնպէս, ինչպէս այդ իրականացրեց իւր հօրեղբօր որդի ապա կայսր նապոլէօն III. Ժերոմ Նապոլէօն ուզում էր մի գիմօկրատական հանրապետութիւն, որի գլուխ կանգնած կը լինի ժողովրդից ընտրւած մի կեսար։ Այդ այնպիսի մի պետսկան ձև է, որ գոյութիւն ունէր Հռովմում՝ հանրապետութեան վերջին օրերում և որի նմանը փորձւած էր նոյն իսկ Ֆրանսիայում։ Երբ Նապոլէօն I կայսրը դեռ ևս միայն կոնսուլ էր։ Այդ մոքով, իբր ներկայացուցիչ Կորսիկայի մի վի-

Ֆրանսիացւոց Նապոլէօն III անունով։ Ժերոմ (թագաւոր Վեստֆալիայի), որի որդին էր նորերումս հանգուցեալ պրինց Ժերոմ Նապոլէօն, կոչւած Պլոն-Պլոն, որ և զլուխն էր Բոնապարտեան տոհմի, 1870 ից դէս, ալտինքն այն ժաւանակից, երբ վախճանեց կայսր Նապոլէօն III-ի որդի պրինց Լուի Նապոլէօն, կոչւած Լուլու։ Մեծ Նապոլէօնի անկումով՝ ընկան նաև իւր եղբար թագաւորները, որոնց տեղը բունեցին այն երկիրների նախկին իշխանները։

<sup>1)</sup> Նապոլէօններին արդեւած էր մուտքը Ֆրանսիա։

ճակի, նա տեղ դրաւեց 1848 թւականի սահմանադրող ժողովում՝ ձախակողմեանների շարքում, որ իւր ձանը տայ յօգուտ այն բոլոր առաջարկների, որոնց նպատակն էր մի հաստատուն և չափաւոր հանրապետութիւն, ի միջի ազլոց յօգուտ երկ-ժողովեաց սիստեմի<sup>1)</sup>:

Բայց չը նայած դորան, չը նայած որ նա տեղիակ էր իւր հօրեղբօր որդու դիսաւորութիւններին, նա նպաստեց նորա՝ հանրապետութեան նախագահ ընտրելուն, իսկ 1852 թւականի սկզբներում նա թոյլ տւեց որ իրան նշանակեն ֆրանսիայի գեսպան Մադրիդում։ Բայց ճանապարհին՝ նորդոյում նա մի քաղաքական ճառ կարդաց, որի համար հրապարակաբար յանդիմանութիւն ստացաւ հանրապետութեան նախագահից։ Ֆերումբ պատասխանեց դորան իւր հրաժարականով և շարունակեց նստել ազգային ժողովի ճախակողմեանների շարքում։ Բայց և այնպէս նա իրան պահեց այնքան զգոյշ, որ նորից գրաւեց նապոլէօն երրորդի ողորմածութիւնը, և երբ սա կայսր դառաւ, նշանակւեց սենատի և պետական խորհրդի անդամ և ճանաչւեց որպէս տոհմական պրինց։

Այն դերը որ նա խաղաց նապոլէօն III-ի կայսերութեան ժամանակ, բաւականաշափ բնառոշւած է այն ծաղրական մականունով որ տւեցին նրան։ Նորան անւանում էին «կարմիր պրինց»։ Կայսերութեան սկզբնական տարիներում նա նկատված էր որպէս կայսերական գահաժառանդ։ Բայց և այնպէս, առանց ուղղակի տոհմական շահերի գէմ գործելու, նա շարունակեց մնալ ընդդիմազիր գեմոկրատական կուսակցութեան շարքերում, ներկայացուցիչ լինելով այդ կուսակցութեան մի առանձին տեսակին՝ կայսերական զիմոկրատական կուսակցութիւն անունով, միշտ շեշտելով, թէ կայսերութիւնը, եթէ ուզում է կայուն մնալ և ժամանակի պահանջներին համապատասխանել, պէտք է յեղափոխական ծագումին հաւատարիմ մնալ։

1) Սահմանադրական երկիրներում լինում է կամ մի ազգային ժողով և կամ բայցի դորանից՝ մի երկրորդ ժողով, որ կոչւմ է բարձր ժողով, սենատ կամ ազլատիոն վերջին զէպքում ամեն մի օրինադիմ դառնում է օրէնք միան այն ժամանակ, երբ նա ընդունում է նսխ առաջնում, լետու երկրորդում և ապա պետութեան զլուխ կանգնած թագաւորից կամ հանրապետութեան նախագահից։ Ծալրաչեղ դէմոկրատները միշտ պահանջել են մի-ժողովներ սիստեմ, չափաւորները՝ երկ ժողովներ սիստեմ։

Եւ չը նացած դորան՝ կայսրը շարունակում էր ցոյց տալ դէպի նա հաւատ և անձնական բարեհաճութիւն. այն աստիճանի, որ կարծիք կազմեց թէ կայսրը երկու ձեռքով խաղ է խաղաւմ, ուր աջ ձեռքը չը պիտի ձախի խաղը տեսնի և որ գեմոկրատական կայսերւթիւնը պահեստի մէջ պէտք է մնայ, որ երեւան դայ երբ ինքնահեծան (autoritaire) կայսերութիւն շարունակելը անհնարին կը դառնայ: Դա սխալ էր. բայց ընդհանուր կարծիքը պատկերացաւ Օֆֆենբախի օպերային վոդեւիլի մէջ՝ «Օրփիոսը զժողքում» (Orphée aux Enfers, Орфей в аду), Ոլիմպիական Խովիտերի յարաքերութեան մէջ դէպի ստորերկրեայ աստուած Պլուտոնը, որը հեռացած (յեղափոխական) շրջանի ոգիները իւր շուրջն է ժողովում:

Խակութիւնը սա է, որ կայսր Նապոլէօն III այնքան խորամանկ չէր. նորա հակումը դէպի իւր աշքում՝ հեղինակաւոր երեւացած մարդիկ հասնում էր թուլութեան, մինչդեռ նորա հօրեղբօր որդին՝ պրինց Ֆերում Նապոլէօնը որպէս մի կատարելագործած ցինիկոս, որպէս սկզբունքով ասող ամեն հեղինակութեան, ինչ կարգի էլ վերջինս լինի, — իւր ըմբուստ բնաւորութեան միայն այնքանով էր սանձ դնում, որքան այդ հարկաւոր էր իշխանական զիրքից չը զրկւելու համար: Յանուն յեղափոխական գաղափարների, նա կուի ձեռնոց շպրտեց եղած պետրական և հոգևորական կարգերին, բայց միշտ կարողանում էր այնպէս զուրս պրծնել, որ բարձր պաշտօններ էր ստանում; ուր նա իւր յանձնարարողի հաւատը միշտ իշարն էր գործ դնում:

Դոյցանից առաջնի, այն է խսպանական դեսպանութեան մասին արդէն յիշաստակութիւն արեցինք: Երկրորդ բարձր պաշտօնն էր այն, որ նրան մի հրամանատարութիւն յանձնեց ֆրանսիական զօրքերի վերաց Դրիմի պատերազմում: Թէ ինչ գեր խաղաց այդ գործում, բաւական է «Պլոն-Պլոն» մականունը որ տրւեց նրան այդ առիթով: Աւելի արժանաւոր կերպով նա կատարեց իւր մի երրորդ պաշտօնը իբր զլխաւոր զեկափար 1856 թւականի աշխարհահանդէսի: Այգակղ նա ցոյց տևեց կառավարչական արտակարգ ընդունակութիւններ, փայլուն պերճախօսութիւն, անխոնջ աշխատանքի ոյժ և մանաւանդ լաւ ֆինանսիստ: Կայսրը նորա այս վաստակների համար նրան յանձնեց մինխարութիւնը Ալժիրիացի և կոլոնիաների համար և դարձրեց նորան

իւր մտերմական խորհրդառուն, չը նայած որ շուտով տարածայնութիւններ առաջ եկան նոցա մէջ: Խոալակիսն արշաւանքի առաջին շրջանում պրինց Ժերոմ Նապոլէօն համաձայնւեց պատկւել Վիկոոր Էմանուէլի աղջկայ հետ և սպատերազմի մէջ առիթ տեսաւ իւր թշնամական գաղափարները դէպի Աւարիայի Հարսուրդի տունը և դէպի պապը իրագործել: Դորանով աւելի սասակացաւ նորա և կայսեր մէջ եղած տարածայնութիւնը, այնպէս որ կայսրը, սարսափելով իւր իտալական քաղաքականութեան հետևանքներից, 1861 թւականին այդ քաղաքականութեանը այլ ուղղութիւն տւեց: Իւր հսկորական ամբողջ տաղանդով և իւր աեմպերամենտի ամբողջ կրքոտութեամբ, բայց կորսիկական վացրենութիւնով շաղախւած մի ճառում, 15 մայիսի 1865 թ., պրինցը հրապարակաւ յայտարարեց իրան լնդդէմ սպապի երկրաւոր իշխանութեան, յօդուա ազգայնութեան սկզբունքի անողոք իրագործմանը: Այդ ճառի պատճառով նա կորցրեց իւր նոր սուացած երկու պաշտօնները՝ որպէս վոլխ-նախագահ սպատական գաղանի խորհրդի և որպէս անդամ խնամակալութեան խորհրդի:

Որ այս բոլորի հետ կապւած էին նորանում նաև պետական մարդու հեռաւուս և ճիշտ հայեացքներ, այդ երեւաց 1870-ին, երբ նա պատերազմը Պրուսիայի և Գերմանիայի դէմ յայտարարեց որպէս տխութը ու թիւն և գուշակեց գերմանական զօրքերի յաղթութիւնը և կայսերութեան անկումը: Երնէստ Ռենան և պրինցի միւս մտերիմները պնդում են, որ պրինց Ժերոմ Նապոլէօնի պատահական բացակացութիւնը Ֆրանսիայից (նա ճանապարհորդում էր Նպիցբերգէն կղզում) պատերազմի հաւանական պատճառների թւում պէտք է համարել, որովհետեւ միայն նա' բաւականաչափ հեղինակութիւն ունէր կայսեր վերայի նոյնպէս նա հաստատապէս յացնեց որ իզուր է սպասել Խոալիայի օգնութիւնը և որ այդ նպատակով նլորմնցիա գնալը ապարդիւն պէտք է անցնի:

Կայսերական դատը՝ նա հենց 1871 թւականին թողեց. նոյն պէս և Նապոլէօն III-ի որդու մահից յետ նա ոչ մի հակումն չը ցոյց տւեց այն պաշտպանելու: Այդ շատ զարմացրեց նորա հին թշնամիներին՝ Ռուսէ, Կասանյակ և այն, որոնք միշտ փոքր նշանակութիւն էին ուել նրան: Այդ նորանիցն է, որ նպաստաւոր կարծիք չը կար կազմած պրինց Ժերոմ Նապոլէօնի մասին: Նրանց, որոնք նորան

ճանաչում էին, սրբինցը թւում էր մարմնացումն ցինիզմի և բարյական սկզբունքից զուրկ լինելուն, որը նորա տոհմի գրեթէ բոլոր անդամներին ցատուկ է: Զարմանալի էր թւում որ այդքան հաստատուն դեմօկրատ, ինչպէս նա էր, շարունակում էր օգտւել այն բոլորից, ինչ տւել էին նրան իշխանական ծնունդը և դիրքը. զարմանալի էր թւում որ նապոլէօն Ալին, որը այնքան բարեհաճութիւն էր ցոյց տալիս դէպի նա, միշտ դժւարութիւնների մէջն էր գցում, որ կարելի էր արդարացնել միմիայն հրաժարւելով իւր իշխանական տոհմային իրաւունքներից: Միւս կողմից նորա կենցաղավարութիւնը, նորա անողոք վարմունքը դէպի իւր ամուսինը և որդիքը, նորա հակումը դէպի այնպիսի մարդիկ և կանաչք, որոնք նորա նման անսկզբունք էին (ի միջի այլոց նորա կոմպրոմիսը Բուլանժէի հետ), - այս բոլորը վաղուց վրդովեցնում էր Եւրոպային:

Նա խոռվ էր իւր մեծ որդու՝ Վիկտորի և իւր ամուսին Կլոտիլդի հետ, որ Խոտալիայի այժմեայ թագաւորի քոյրն է: Խորանից են այն զարհուրելի տեսարանները, որ տեղի են ունեցել պրինցի մահւան սենեակում: Նորա կոտակը, որպէս այժմ յայտնւեց, կաղմւած է այնպէս որ պրինցը իւր միակ ժառանգ ճանաչում է իւր երկրորդ որդուն՝ պրինց Լուի Նապոլէօնին, մինչդեռ իւր անդրանիկ որդուն զրկում է բոլորովին: Լրագիրները արդէն տեղեկացրին, որ պրինց Լուին, որը այժմ ուուսաց զինւորական ծառայութեան մէջն է, ունենալով իրը բանակատեղի Թիֆլիսը, յայտնել է որ իւր հօր կոտակը չի ընդունում և որ նա ճանաչում է իւր մեծ եղբօր, Վիկտորի, աւագնութիւնը: Նկատենք նաև, որ Նապոլէօն Ալի որդին, մեռաւ 1879-ին, կոտակով բոնապարտեան տան գլուխ իրանից յետ ճանաշել էր ոչ թէ պրինց Ժերոմ Նապոլէօնին, այլ սորա մեծ արդի Վիկտորին:

Պէտք է կարծել, որ պրինց Ժերոմ Նապոլէօնի հետ անյախունում է աշխարհքիս երեսից նորագոյն դարու ամենազարմանալի և տաճրօրինակ մեծ տոհմի վերջին նշանաւոր Նապոլէօնիդը և որ բոնապարտեան կուսակցութիւնը այսուհետ կը կորցնի Ֆրանսիացում նոյն խսկ այն ոյժը որ այս քսան տարիներում չը կարողացաւ խախտել Փրանսիական հանրապետութեան հեղինակութիւնը:

† Լ Ա Ւ Գ Ի Ւ Գ Վ Ի Ն Գ Հ Ո Ր Ո Տ

Նոր տոմարով՝ 14 մարտի 1891 թ. վախճանւեց Գերմանիայի կաթոլիկների կղերական կուսակցութեան կամ՝ Կենտրոնի<sup>1)</sup> զլուխ և ուղիղ Վինդհորտը, նորագոյն Դերմանիայի ամենանշանաւոր պարլամենտական անձնաւորութիւնը, եթէ մի կողմ թողնելու լինենք իշխան Բիսմարկին։ Այս բովածին գերմանական բէջիստագում (կայսերութեան պատգամաւորների ժողովը Բերլինում) ամենից մեծ կուսակցութիւնը՝ կաթոլիկ կղերական կուսակցութիւնն է։ Այդ ոչժին նա հասել է շնորհիւ Վինդհորտի։ Թէ ինչ զարմանալի տաղանդ էր հարկաւոր ունենալ մի ազդպիսի յաջողութիւն ձեռք բերելու համար—բաւական է եթէ ասենք, որ Վինդհորտը այդ բանը յաջողացրել է ընդդեմ ժամանակիս հակակղերական ոգուն և ընդդեմ Բիսմարկի նման մարդու կատաղի թշնամութեան, այն Բիսմարկի, որը իւր օրերում կարողացել է շատ ուժեղ կուսակցութիւններ ջարդ ու փշուր անել։ Դեռ ևս մօտ մի տարի առաջ, երբ Բիսմարկը դեռ ևս իւր կանցլերական պաշտօնումն էր, բէջիստաղի նոր ընտրութիւններից յետոյ, որից Կենտրոնը դուրս եկաւ առաջւայ տարիներից աւելի էլ զօրեղացած, Բիսմարկը իրան ստիպւած տեսաւ բանակցութիւնների մէջ մանել Վինդհորտի հետ, իւր մօտ հրաւիրելով նորան։

Այդ գէպքը այն աստիճան խորթ թւաց, որ, ուրիշ պատճառների շարքում, այդ էլ մէկն եղաւ Բիսմարկին իւր պաշտօնից հրաժարացնելու։ Տայց տարին չ'անցած՝ կայսր Վիլհելմ II ինքը ստիպւած տեսաւ իրան նոյն յարաբերութիւնների մէջ մանելու այդ զարմանալի մարդու հետ։ Եւ Վինդհորտը թաղւեց պատւած կայսեր ներկայացուցչի ներկայութիւնով։

Ինչ զաղափարի համար էր կուսում Վինդհորտը? Պարզ պատասխանը այդ հարցին կը առաջ երեխ միայն նորան լաւ ուսումնասիրած կինագրողը, ասել է թէ ապագան։ Որովհետեւ նոյն իսկ

<sup>1)</sup> Կաթոլիկ կղերական կուսակցութիւնը կոչւում է նաև Կենտրոնի կուսակցութիւն, որովհետեւ նորա անդամները նստամ են գերմանական պարլամենտի կենտրոնական աթոռների վերաբ։

նրա ջերմ՝ բարեկամներից ոմանք պնդում են որ նորա քաղաքականութեան կենտրոնակէտը եղած են նորա վելֆական (Հաննովրեան) պլանները, իսկ միւսները, թէ՝ նորա խակական նպատակները եկեղեցական-քաղաքականն են եղել: Եւ չը նայած որ նոյն իսկ իւր բարեկամները հաւասար կարծիք չունին նորա ոգու բուն էութեան մասին և հենց այդ անորոշութեան պատճառով զարմանալի է թւում, որ նա կարողացաւ միլիոնաւոր մարդկանց կատարեալ վստահութիւնը ձեռք բերել:

Այդ հազւագիւտ մարդուն ճանաչելու համար լաւագոյն միջոցը նորա կեանքի պատմութիւնն է: Վինդհորաբը ծնւեց 17 յուն. 1812 թ. Օնաբբրիւկում, զիւղացի ծնողներից. նոյնուեղ էլ նա կրթւեց եկեղեցական կոչման համար, որին սակայն չը հետևեց նա: Համալսարանը աւարտելով նա առաջ փաստաբան եղաւ, յետոյ կոնսիստորիական խորհրդատու, յետոյ ապելացիացի գատարանի աւագ խորհրդատու, ապա 1851 թւականին նշանակւեց արդարադատութեան մինիստր նախկին Հաննովրեան թագաւորութեան: Մի երկրորդ անգամ նշանակւեց արդարադատութեան մինիստր 1862-ին: 1849-ից սկսած նա անդամ էր Հաննովերի պարլամենտի, ուր նա եռանդով պաշտպանում էր պարտիկուլարիստական և հակա-պրուսական քաղաքականութիւնը, այնպէս որ, մինիստր դառնալով, նա աւելի և զարգացրեց հակառակութիւնը Պրուսիացի և պրուսականութեան դէմ; պաշտպանում էր Աւստրիացի ձգումները, այն է որ Հաննովերը կամաց մնայ աւստրիական քաղաքականութեան: Այդ ժամանակիները արդէն կաթոլիկութիւնը Հաննովերում սկսեց ուժեղանալ, և Վինդհորատ իւր կողմից աշխատեց որ կաթոլիկութիւնը ուժեղ գիրք ըրունէ երկրում: Այդ բոլորի համար նա մնաց երախտապարտ Հաննովերի թագաւորական տան, որը նորան այդքան բարերարել էր և որի շահերի համար նա մինչև անգամ օգնութեան ձեռք կառկառեց Բրանդիս—Պլատէնի հակա-սահմանադրական մինիստրութեան:

Հասաւ 1866 թւականը, պրուսական-աւստրիական սպատերազմի տարին: Հաննովերի թագաւորը բռնեց Աւստրիացի կողմէ և այդ քայլը, ինչպէս ցացանի է, թէ թագաւորական տան և թէ առհասարակ այդ երկրի անկախութեանը թանկ նստեց: Հաննովերը միացրւեց յաղթող Պրուսիայն, իսկ թագաւորը Գէորգ V. աքսորւ եց:

Վինդհորստը այն խորհուրդատուների շարքումն էր, որոնք Գևորգ Վ-ին մղեցին դէպի այդ քաղաքականութիւնը:

Որ Հաննովէրը միացրւեց Պրուսիային, այդ աւելի ևս սաստկացրեց Վինդհորստի հակակրութիւնը Պրուսիայի դէմ: Նա վայր դրեց իւր 1865-ին սոտացած բարձր պաշտօնը, որ անարդել կերպով իրաննւիրէր սպարլամենտական կուտին ընդդէմ նոր քաղաքական դրութեան, և պատգամաւոր ընտրւելով՝ նա մտաւ պրուսական պատգամաւորների ժողովը, ապա և զերմանական բէցիստագլ իբր պարտգուխ Վելֆեան (Հաննովրեան) կուսակցութեան և իբր պաշտապան բոլոր պարտիկուլարիստական ձգտումների (ուրեմն ընդդէմ գերմանական այն միութեան որ սուեդեց Բիսմարկի):

Որպէս զիսլոմատիայի և տակտիկայի մէջ շատ փորձւածին մէկը, նա, որը թէւ զուտ կաթոլիկական բայց բարեկամ չէր պապի անսխալականութեան գողմացի, այս վերջին հակառակութիւնը ձեռքից թողեց, որպէս անդում են նրա համար, որ, իբր առաջնորդ մի ուժեղ կաթոլիկական կուսակցութեան՝ աւելի մեծ ցցսերով կարողանաց իւր վելֆական (Հաննովրեան պարտիկուլարիստական) նպատակներին հետևել, և մի այնպիսի ոյժ միացնել իւր ձեռքում, որ Պրուսիան ստիպւած լինի հաշվի առնել այդ հանգամանքը աւելի, քան եթէ Վինդհորստը մնար լոկ վելֆեան գրուպպայի պարագլուխ: Կեկապէս այդ յաջողւեց նրան, սուեդելով Կենորոնի կուսակցութիւնը, որի ոյժը նա ծառայեցնում էր նաև իւր վելֆական նպատակներին, չը նայած որ Կենորոնի կուսակցութեան մէջ կային տարրեր, որոնք բոլորովին վելֆական հակումներ չունեին: Վինդհորստի յաջողութիւնը այդ դործում այնքան մէծ էր որ Հաննովրեան պրովինցում (Նախկին Թագաւորութիւն) նաև այն տարրերը յարեցին նրան, որոնք առաջ վճռական կուիւ էին մղում կաթոլիկականութեան դէմ:

Կենորոնի կամ որ նոյնն է՝ Վինդհորստի կուսակցութեան նշանաւորագոյն կուիւլ այն էր, որ նա վարեց ընդդէմ Բիսմարկի քաղաքականութեան՝ վելֆաբերեալ դպրոցի և եկեղեցու: Այդ կուիւը կրում է յատուկ անուն «կուլուրկամպֆ» (Rulturkampf), որ բառացինշանակում է՝ քաղաքակրթութեան կուիւ: Բիսմարկի ուղում էր դպրոցը ազատ պահել կաթոլիկ կղերականութեան, որ նոյնն է թէ պապի ազգեցու-

թիւնից։ Նաև կղերական դասակարգը պէտք է ստանար պետական-քաղաքացիական կրթութիւն կամ՝ ենթարկեր պետական օրէնքներին։ Այդ կուի սկզբնաւորութեան և ամբողջ պրոցիսի մասին խօսելը հետու կը տանէր մեզ, բայց սա հաստատ է, որ այս կուիը այլ վախճան կ'ունենար, եթէ միայն կաթողիկ կուսակցութեան գլուխ չը լինէր Վինդհորտը, որը իւր անխոնջ գործունէութիւնով և ամեն բոլե, կուի համար պատրաստ լինելովը, այնքան ճարպիկութեամբ օգտառում էր իւր հակառակորդի բոլոր ժողովադիրից։ Այդ կուից Վինդհորտը զուրս եկաւ այնքան մեծացած, այնպիսի զիրք ստացած, ինչպիսին չի ձեռք բերել Պրուսիայում և Գերմանիայում ոչ մի պարլամենտական մարդ և որին հազիւ թէ շուտով ով և իցէ կարողանայ ձեռք բերել։

Բայց այն ինչ իւր տակտիկայի գլուխ գործոցն էր, այդ այն էր որ, չը նայած որ նա զլուխ էր մի կուսակցութեան, որը նորատառեղծ գերմանական կացսերութեան հիմնելուն և կազմակերպելուն թշնամի էր, այնու ամենայնիւ նա այնպիսի ուղղութիւն ուեց Կենտրոնի կուսակցութեան, որ վերջինս մեծ մասնակցութիւն ունեցաւ օրէնտդրութեան դործում։ Այդ նորանից էր որ Կենարոնի կուսակցութեան աւելի հեռատես մասը տեսնում էր ընդհանուր պետական օրէնքների անհրաժեշտութիւնը։ Թոյլ տալով որ իւր կուսակցութեան մի մասը քրիստոնէական-պահպանողական» զրոշակի տակ, իսկ միւսները յառաջդիմականների և գեմոկրատների կողմերում կուեն, նա այնու ամենայնիւ զիտէր ամենքին ի մի խմբել, երբ հարկաւոր էր իւր մեծ թշնամուց (Քիսմարկից) մի առաջարկութիւն լսել, որ կարելի լինէր նորանից աւելի ևս մեծ զիջումներ դուրս կորզել։ Օրինակ, Քիսմարկը 70-ական թւականների վերջում ձեռնարկեց անտեսական նոր քաղաքականութեան՝ հովանաւորող սիստեմի մոքով։ Բոլոր կուսակցութիւնների մէջ էլ կային մարդիկ կամ ընդդէմ կամ բարեկամ այդ սիստեմի։ Բայց միայն Վինդհորտն էր որ կարողացաւ այդ ամենից մի մեծամասնութիւն գլուխ բերել յօդուտ Քիսմարկի այդ առաջարկութեան, բայց ի հարկէ միմիայն նորահամար որ Քիսմարկը զիջումներ անէ եկեղեցական և դպրոցական զործերում։ Եւ Վինդհորտը ստացաւ բաւարարութիւն այդ ծառայութեան համար։ Նա առիպեց Քիսմարկին, ինչպէս փոխարեբական մաքով ասում են, «գնալ Կանոսսա», հաղատակել պապին։

Երբ այդպիսով վերացւեցին «մայիսեան օրէնքները» (այսպէս են կոչում այն օրէնքները, որ 1873-ին յառաջացրին կուլտուր-կամպֆը), այդ ժամանակ բնական է որ Վիլդհորստից սկսեցին Հեռանալ այն ամենքը, որոնք կապւած էին նորա հետ միմիայն այդ կուի համար: Վելֆեան գրուպպան սկսեց տեսնել, որ Վիլդհորստը թողել է նախկին նեղ վելֆեան միտումները և նա պաշտպանում է միայն կաթոլիկական ինտերեսները: Նոքա նկատեցին որ Վիլդհորստը իւր ներքինում ուրիշ մարդ է դառել: Եւ այդ բնական էր. Վինդհորստը, այնքան տարիներ աշխատակցելով կայսերութեան օրէնսդրական գործի մէջ, սկսել էր գտնել որ Բիսմարկի ստեղծած գերմանական միութիւնը կարելի բան է և որ չի կարելի ի սէր Հաննովերի զոհել միացած հայրենիքը: Այդ պատճառով Վինդհորստի մէջ վելֆականը կամաց կամաց մարում էր և այն զուտ կաթոլիկը, որը իւր եկեղեցու համար այնքան բան էր յաջողացրել, զգում էր միշտ աճող ջերմութիւն այն պետութեան համար, որի մէջ իւր հաւատակիցների հետ միասին այնքան նշանաւոր յաջողութիւններ էր ձեռք բերել: Թէև Վինդհորստը, միշտ նորանոր խնդիրներ հարուցանելով, կարողանում էր հին բարեկամներին կրկին իւր հետ կապել, բայց նա զգում էր որ Կենտրոնի նշանակութիւնը կորչում է և որ իւր սեպհական գիրքը խախտում է: Բայց ահա վրայ հասան 20 փետրւ. 1890 թւականի ընտրութիւնները, որից Վինդհորստը գուրս եկաւ մի այնպիսի ոյժով, ինչպիսին նա երբէք ունեցած չէր: Ծողովրդական դպրոցների մի նոր օրէնքով առ միշտ սահման զրւեց եկեղեցու ներգործութեան դպրոցի վերայ որով և իսկապէս վերջապէս վերջացաւ կուլտուրկամալֆը: Այդ օրէնքը այնքան արմատական չէր որքան 1873-ի մայիսիան օրէնքներն էին, դա մի տեսակ հաշութիւն է պետութեան և եկեղեցու: Ծողովրդական լուսաւորութեան մինիստր Գուլերի հրաժարականը Վինդհորստի ամենավերջին յաղթութիւնն էր. և այդ այն Գուլէրն էր, որի մասին մի քանի ամիս առաջ դպրոցական կոնֆերենցիան բացելու, կայսր Վիլհելմ II ամենքի առաջ յայտնեց թէ՝ Պրուսիան նորա պէս լաւ մինիստր ունեցած չէ!

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՍԻՑ

ԲՈԼՈՐ ԱՅՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ, որոնց վերաէ ապառիկներ են մնում, խնդրում ենք շտապիկ լիրանց վերաէ անցեալ կամ ներկաւ տարաւանից մնացած պարտքը հասցնելու «Մուրճ»-ի խմբագրութեան: ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԻՔԻ: Ստացանք Պղլարից, պլ. Յարութիւն Թամազեանից 10 լուրջի, որոյ նա նւիրում է «Մուրճ»ի սոցն տարաւաէ մի օրինակը նոյն քաղաքի հայոց արական երկդասեան ուսումնարանին:

ՎՐԻՊԱԿՆԵՐ, «Մուրճ» № 3: Պր. Երւանդ Պազարեանցի լոգւածում՝ «Հողի իշխանութիւնը», գլուխում III մի տեղ ասւած է՝ «զօրեղ և չուզւած բնաւորութեան», պէտք է կարդալ՝ զօրեղ և ձուլւած բնաւորութեան»: Գլուխու IV մի տեղ ասւած է՝ «հոգեկան ընդարձակութիւնների», պէտք է կարդալ՝ «հոգեկան ընդունակութիւնների»: Պր. Յէտք է կարդալ՝ «հոգեկան ընդունակութիւնների»:

Պրոֆեսոր Շոռումպի լոգւածում՝ «Հայկաբանութիւնը Եւրոպացում» «Մուրճ» № 3, երես 360 տող 8-րորդ տարւած է՝ «Պասկալ Օշէ (Aucher)»: պէտք է կարդալ՝ «Յարութիւն Աւգեր (Aucher): Երես 363, տող առաջին տպւած է՝ «Ժ. Բ. Օչէրը (Aucher), պէտք է լինէր «Մկրտիչ Աւգեր (J. B. Aucher)»:

Քաղաքական տեսութեան մէջ, երես 403 «և ալդ աղ դեցութիւնը նւազում է կամ պակասում», պէտք է լինէր՝ «և ալդ աղջեցութիւնը աճում է կամ պակասում»:

ՏԱՐԱԶԻ ՄԱՆԵՐՆԵՐԸ: «Մուրճ»-ի լոգւածները, ասում է «Տարաղաց»-ը, կարծէք թէ պարբերաբար կրկնուում են նոյնութեամբ առանց մի զգալի փոփոխութեան և նութարկւելու: Մի տեսակ միաձևութիւնով կաշկանդւել է («Մուրճ»-ը), որից թէն ինչպէս երեսում է, աշխատում է աղատել, բայց չէ լաջազում (տես «Տարաղաց», 1891 թ., № 12):

ԾՆԹԵՐԳՈՂԸ արդէն եղբակացնում է ալդ տողերից, որ ինչ «Տարաղաց» ի կրիտիկոսը լիսող պէտք է ասէ, ալդ բոլորն զլ

պէտք է ծառակէ որպէս ասլացուց իւր ալդ հայեացքի, Եւ կարծում էք թէ նա ալդ ասլացուցները չի բերում? Բնաւ չը կարծէք: «Տարազ»-ը աշխատում է փաստերով ասլացուցնել, որ «Մուրճ»-ի չօդւածները զգալի փոփոխութեան չեն ենթարկւում: Եւ ահա թէ որքան ակներե կերպով է նա ալդ ասլացուցանում: Ժեսութեան առնելով «Մուրճ»-ի անցեալ № 3-ը, նա գտնում է, որ՝

1) Պր. Փափաղեանցի «Վոսկորի ափերում» վէսլի սկիզբը որ տալած է՝ «կարդացում է մեծ հետաքրքրութեամբ»: Եւ չետով, «ահա ձեզ կեսնք, ահա ձեզ բարեխիղճ ուսումնասիրութիւն» և ալլն:

2) Պր. Քիշմիշեանցի «Բոլսերի միծարանքը» կարդացում է ամեծ հետաքրքրութեամբ: Երեսում է որ «հեղինակը ժամանակ, միտք և աշխատանք է թափել»:

3) Պր. Ե. Վաղարեանի «Հողի իշխանութիւն» չօդւածը նիւթի կողմից ամենից տեհի հետաքրքրում է ընթերցողին:

4) Հ.-ի Քաղաքական տեսութիւնը «լաւ տպաւորութիւն է զործում և լաւ կարդացում. ամփոփ, կարճ, ճիշտ, մշակած, նա բոլորովին պարզ գաղափար է տալիս քաղաքական ան ժամանակամիջոցի վերակ, ... «և ալլն»:

Մենք ակամակ պէտք է մտածենք՝ ալդ ինչպէս է պատահում, որ մէկը «Մուրճ»-ի մի №-ի մէջ զտնում է առնըւածը չորս չօդւած, որոնցից մէկը միւսից լաւ է համարում, և այնու ամենալինիւ իւր կրիտիկան սկսում է բարձրից՝ տհածութեան արտազալսութիւններով: Ինչպէս կարող է մէկը անկեղծ լինել, երբ նա մի հատ նոմերում չորս ոչ միայն լաւ, ալ և նոր չօդւածներ է գտնում (ամենահինը սկսել է միայն № 2-ից!): և այնու ամենալիւ սիրու է առնում պնդել, թէ չօդւածները չեն փոփոխութեամ: Մանաւանդ եթէ ի նկատի առնելու լինէք որ նոյն ալդ Յ-ըդ նոմերում, բացի «Տարազ»-ի վշածներից, կայ նաև մի ուրիշ չօդւած՝ պ. Ե. Մաղաթեանի, Շահազիղի մասին, որը, իբր նորութիւն, չէր կարող աշքի չընկնել մանաւանդ ալն մարդուն, որը աղդքան փոփոխութիւններ է սիրում:

Աթէ մի օրգան ուզում է որ իւր ցուցմունքները, իւր նկատութիւնները մեզ համար ուսանելի լինեն և ոչ թէ արհամարհանքի տանք ալդ նկատողութիւնները, ասկա նա պէտք է համոզմոնքով խօսէ: իսկ համոզմոնքը հնթաղրում է կատարիալ անկեղծութիւն: Եւ մենք վերը անսանք որ «Տարազ»-ի զոնէ ալդ մի նկատողութեան մէջ անկեղծաւթիւնը պակասում է:

Անկեղծութեան սլակասութիւնը ալդպիսով հասուատւած լինելով նոյն իսկ զովանսանքի մէջ, տեսնենք թէ ինչպէս է այդ պակասութիւնը արտադրուում պախարակման մէջ։ Որովհետեւ «Տարադ»-ի կրիտիկուը ցեսիի հետ է հաւասարացնուած «Մուրճ»-ի մի աշխատակցին՝ պ. Ա. Նամալեանին, որը արգէն տասնեւակ պատկերներ է տուել «Մուրճ»-ին և որից մենք լուսունինք, որ նա աւելի ևս միծ տեղ կը բռնէ մեր ամսագրում։ Թողնելով Նամալեանի պատկերների դնահատութիւնը աւելի լուրջ քննադատութեան, մենք պատեղ կը բացատրենք միան, թէ ինչու մեր ընթերցողներին ձանձրովի՛ պատճառած չենք համարում, տպելով նորա պատկերները թէկուզ «Մուրճ»-ի ամեն մի համարում։ («Տարադը», Նկատեցէք այդ, «Մուրճ»-ի միաձեռւթիւնը կարծում է սպացուցած լինել, վկանելով թէ «Մուրճ»-ի մէջ շատ են լաճախ երեսում Նամալեանի պատկերները)։

Նամալեանը մեր բելատրիստներից նա է, որ սիրում է ամենից կարծ գրել, զուրս մղելով իւր գրւածքներից այն բոլորը, ինչ նշանակւած է միան զրւածքը «հաստացնելու»։ Դա այնքան մեծ արժանաւորութիւն է, որ արժէ նոյց տպել թէկուզ հէնց մեր գրողներից շատերին օրինակ տալու համար։ Որովհետեւ վէպերի և պատկերների մէջ աւելորդաբանութիւններ անելը մի կատարեալ ախտ է, որով վարակւած են մեր զրողներից մանաւանդ նոքա, որոնք զրւածքի մէջ զեղարւեսուը խապառ մոռացութեան են տալիս։ Ազդ ախտով վարակւած են թէ մեր հին զրողներից շատերը և թէ նոր սկսողները։ Առանց կրծատելու և մասամբ անգամ վոփոխելու—այդ զրւածքները տպել անհնարին է լինում «Մուրճ»-ի մէջ։ Ազդ զրողները, որոնց լաճախ չի պակասում նոյն իսկ տաղանդը, տովոր չեն զրւածքը հշանին զրականօրին։ Մեր զիստեցածով այդ ընդհանուրից լաւ բացառութիւններ կտղմողներն են, մեր զրականութեան մէջ առնաւարակ, Ռաֆաէլ Պատկանեան իւր թէն ոչ միշտ զիւրամատչելի բարբառով զրած վէպիկներով, ապա Շիրանզադէ և Լէօ։ Լաւ հասկացէք, որ մենք զրանուլ տաղանդների չափը չենք ուղում որոշել, այլ միան և միմիան նոյց վիրական զրւածների հշանաւթեան աստիճանը՝ զուտ զրական տեսակետից։ Եւ նորագոյն զրողներից այդ կատեզորիափին մենք կարծում ենք թէ պատկանում է նաև պ. Ա. Նամալեան։

Բայց զրական խիստ մշակումը արժանաւորութիւն է միան, երբ զրւածքը ինքը միտք է ամվոփում իւր մէջ և երբ այդ միտքը զրական մշակման նիւթ կարող է ծառայել։

Դէ հիմա մեր դասողութիւնը կարող է սարերավ տարբերել «Տարազ»ի գաղափարներից այն մասին, թէ ինչն է «հետաքրքրական» և ինչը չէ «հետաքրքրական», որովհետեւ հետաքրքրական վճելը պայմանաւորւում է մեծ մասամբ գրւածքի նիւթով և նորանով թէ ինչպէս է ըմբռնել հեղինակը իւր դիտողութիւնը։ Բայց թէ չատկապէս պ. Նամալեանի գրւածների արժանաւորութեան մասին ոչ թէ «մի կարծիք» կազ կազմւած, որը «Տարազ»ին է, ալ և ուրիշ կարծիքներ կան զրականութեան հետեւ շրջանների մէջ, ազդ, բացի մեր անձնական կարծիքից, ապացուցւում է մեր լսածներով և մեր ստացած մասնաւոր նամակներով։ Մենք ազդ վկարութիւնները դեռ ևս քննադատութեան վերջին խօսքը չենք համարում, բայց մենք վիշտատակում ենք ալդ, ցոյց տալու համար որ նաև վիշտական զրւածների համար, որպէս և իւր ժամանակին մենք ալդ ասել ենք բանաստեղծութեան մասին, մեր հանեացքը կարող էր չը գնահատուել մեր մամուլի մէջ, բայց ոչ անպալման կերպով նաև հասարակութեան կողմից։

Իսկ վկարութիւններ ան բանի համար, որ մենք չենք սիսալել հիւրընկալելով պ. Նամալեանի գրւածքները, ունենք թէ բերանացի և թէ գրաւոր։ Մենք առաջ կը բերենք նոցանից միան միւնքուսը։ Հենց նոյն № Յ.ում պ. Ղաղարեանցը, որ այնքան լափշտակութեամբ խօսում է Գլէբ Ռևակնակումասին, գրեթէ նոյն լափշտակութեամբ, իւր չողւածի վերջում, խօսում է նաև պ. Նամալեանի պատկերներից մէկի մասին։


Մեր բարեկամներից և աշխատակիցներից մէկը, պ. Ե. Մաղաթեան, որի համար լամենան դէպս պէտք է խօստավանել թէ գրականութեան ճաշակ ունի, իւր մի նամակով առ. 31 մարտի, մեզ ուղղած, գրում է՝ «Նամալեանը խօստանում է լու վիպագիր դուրս գալ»։ Բերանացի վկարութիւնների մասին խօսելը շատ անլարմար է. կարող ենք միան աւելացնել, որ «Տարազ»-ի վար մունքը (որովհետեւ քննադատութիւն չենք կարող անւանել նորա խօսքերը, ալ միան մի վարմունք) թերևս միմիան գէտի հեղինակը տածած թշնամական զգացմունքով կարելի է բացատրել, բայց ոչ երբէք նորանով, որ «Տարազ»-ը դորանով ցանկացած լինի «Մուրճ»-ի խմբադրութեան անկեղծ խորհուրդ տալ։

Թող մեղ ծուռ չը հատկանան. մենք այս տողերով չենք ուղում կանխել գրական քննադատութեան կարծիքը պ. Նամալեանի մասին. այս բոլորով մենք միան ուղեցինք պաշտամանել մեր տեսակէտը։ Եւ մենք հաստատ համողւած ենք, որ

տեղ տալով պ. Նամալհանին, մենք իւմբ ագրական սխալ չենք զործել:

+ ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ, ՄԵԾ ԽՇԽԱՆՈՒՀԻ ՕՅԼԴԱ ՖԷՇՈՐՈՐՈՎՆԱՅԻ ՄԱՆԱՅԻ, Վախոճանւեց նախկին փոխարքայ Մեծ Խշխան Միխայիլ Նիկոլաևիչի ամուսինը, որը թողել է մեր երկրում անմոռանալի լիշտատկներ գլխաւորապէս այն իդական դիմեազների և պրոդիմեազների չնորհիւ, որ հանգուցեալը հիմնեց մեր երկրի ալլ և ալլ քաղաքներում: Մահւան լուրը թագաւոր-կապորը հադորդեց մի մանիքեստով, տպւած պայտօնական „Պրավիտել- ստեռինայ Յնտեռակն“-ում, որ ահա՝

«Ամենակարող Աստոծոն համելի եղաւ կանչել իւր մօտ Մեր սմենասիրելի հօր-եղբօրկին Մեծ Խշխանուհի Օլլզա Ֆէօդորովնային Նորին Կալսկրական Բարձրութիւնը, ուղիորւելով Դրիմ հիւանդութիւնից բուժելու համար, վախոճանւեց Խարկով քաղաքում, 34-ն մարտի, 52 տարեկան հասակում: Հաղորդելով ալս ողբալի անցքի մասին, Մենք հաւատացած ենք, որ Մեր բոլոր հաւատարիմ հպատակները մասնակից կը լինեն այն ցաւին, որ հասաւ Մեր Կալսկրական Տանը և կը միացնեն իրանց աղօթք- ները Մերի հետ հանգուցեալ Մեծ Խշխանուհաւ հոգու հանգու- տեան համար»:



# Մ Ա Ւ Խ Ը Ն

ԳՐԱԴԱՐԱՆ - ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ

## Ա Մ Ա Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԻ ԲԱՑԻԱԾ Է

Հրատէր ենք կորդում հայ հասարակութեան՝ բաժանորդ գլուել մեր միտի քաղաքական-հասարակական-գրական ամսագրին և միջոց տալ նրան այս **4891** թւականին ցանկալի ճոխութեամբ հրատարակել:

ԳՐԻԵԼ ԿԱԲԵԼԻ Է

### Թիվը իսում՝

- 1) Խմբագրատան մշջ, 2) Կենարոնական գրավաճառ անոցում,
- 3) Խիզեկիլի և 4) Մակար Զմշկեանի գրավաճառական պատիվում, 5) Եւանգուլովի տեղեկատու գրասենեակում:

### Բարձրում՝

- 1) Բառացեանցի գրավաճառ անոցում, 2) պ. Աւետիք Դաւթեանցի մօտ (Մարգարիտական Ընկերութեան ընթերցարանում):

### Երեանում՝

- 1) Ալիրական Տէր-Մարտիրոսեանցի գրասենեակում:
- Խմբագրութիւնը գտանուում է Վելիամինեան փողոց, տուն Թանգօշեանի, պրօդիմնազի զիմաց:

Ուրիշ տեղերից ուետք է զիմել՝ Տիֆլիս. Ռեդակցիա յարականալա „ՄՈՐԴԻ“

Արտասահմանից՝ Tiflis, Réaction de la Revue MOURTCH